



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Dr. Theodor J. ...

The photograph of the
plant in the ...

1906p.

401.99-5

62-13



135

ԱՃԽԱՐՀԱԲԱՐԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԴԱՍԱԳԻՐՔ ՍՏՈՐԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ



Յ օ Ր Ի Ն Ե Գ

Դոկտ. փիլ. Մ. ԱՐԵՂՆԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ Ս. ԷՋՄԻԱՅՆԻ Կ. ՃԵՄԱՐԱՆԻ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Կարաճ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1906

491.99-5
Ձ-13

01.99-5

0 405-10


6-13

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԴԱՍԱԳԻՐՔ ԱՏՈՐԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ



Յ օ Ր Ի Ե Ե Գ

Դոկտ. փիլ. Մ. ԱՐԵՂԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ Ս. ԷՋՄԻԱՆԻ Գ. ՃԵՄԱՐԱՆԻ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1906

ձակ քերականութեան մէջ, որի լիկ համառօտութիւնն է այս քերականութիւնը, և որ յոյս ունինք, թէ մի օր կամբողջացնենք և կը հրատարակենք:

Թողնելով ուրիշ տեղ բացատրել թէ այս քերականութեան նիւթից որչափ որ դասարանում և ինչպէս պէտք է անցնել մեր կարծիքով՝ այստեղ աւելորդ չենք համարում գրել որ առաջին մասը՝ Հնչաբանութիւն և Ուղղագրութիւն (բացի մի քանի կանոններից, ինչպէս են՝ §§ 4. 10. 11 եւն) սահմանուած է տարրական դպրոցների և պատրաստականների աշակերտների համար. իսկ երկրորդ մասը՝ Բառագիտութիւն որի մէջ բաւարար չափով դրուած է և շարահիւտութիւնից որոշուած է երկդասեան դպրոցների չորրորդ և հինգերորդ բաժանմունքների և թեմական դպրանոցների առաջին և երկրորդ, մասամբ և երրորդ դասարանների համար:

Այս քերականութեանն՝ իբրև երկրորդ մաս՝ կը յաջորդէ Աշխարհարարի Շարահիւտութիւնը (սինտաքսիս) և Շարադրութիւն որ արդէն պատրաստ է տպագրութեան և յօրինուած է դպրանոցների վերին դասարանների համար՝ աւելի ընդարձակ չափով քան այս հնչաբանութիւնն ու բառագիտութիւնը:

Պատրաստ է դպրանոցների համար և մեր Գրաբարի քերականութեան դասագիրքը, որ յարմարեցրած է մեր այս Աշխարհաբարի քերականութեանը, և որի մէջ մտնում են հայերէն պատմական քերականութեան խնդիրներ ևս: Գրաբարի ուսումը պիտի սկսել Դ. դասարանում, ինչպէս որոշել է ձեռնարանի Մանկավարժական խորհուրդը, մեր կարծիքով նոյն իսկ Ե. դասարանում, երբ աշակերտները իւրացրած կը լինեն նաև Աշխարհաբարի շարահիւտութիւնը:

Մ. Ա.

Ներածութիւն երես 1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ: ՀՆՉԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Նշանագրեր 6
1. Տառեր 6
2. Տրոհութեան նշաններ 9
3. Առողանութեան նշաններ 10
4. Բացայայտութեան նշաններ 11
Բ. Վանկ 15
Գ. Չայնաւոր և բաղաձայն հնչիւններ 16
Դ. Երկբարբառներ և կիսաձայն 17
Ե. Հնչափոխութիւն և ուղղագրութիւն 18
1. Չայնաւորների ուղղագրութիւն 18
2. Բաղաձայնների ուղղագրութիւն 31

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ: ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ: ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԵՆ ԵՒ ՏԵՍԱԿՆԵՐ 39
Ա. Բայ 41
1. Բայիմաստ 41
2. Դէմք 42
3. Թիւ 43
Ասացուածի վերլուծութիւն 44
Բ. Լրացում 45
Խօսքի վերլուծութիւն 47
ա. Գոյական 48
1. Անուն 49
2. Դերանուն 52
բ. Ածական 56
1. Մականուն 57
Փոխանցում անուան և մականուան մէջ 64
2. Մակբայ 65
3. Մակածական 67

| | երես |
|---|------|
| Գ. Զօղ | 69 |
| 1. Կապ | 69 |
| 2. Շաղկապ | 71 |
| Խօսքի բաղմակի մասեր | 73 |
| Կետադրութիւն | 78 |
| Դ. Զայնարկութիւն | 76 |
| ԵՐԿՐՈՐԳ ՀԱՏՈՒԱԾ: ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ | 79 |
| 1. Բառերի տեսակներն ըստ կազմութեան | 79 |
| 2. Զայնափոխութիւն | 80 |
| 3. Յօդակապ | 82 |
| 4. Ք ածանց | 83 |
| 5. Բարդութիւն | 84 |
| 6. Ածանցում | 88 |
| 7. Անորոշ դերբայի կազմութիւնը | 91 |
| Պարզ բայեր | 92 |
| Սոսկածանց բայեր | 92 |
| Բաղմապատկական բայեր | 93 |
| Պատճառական բայեր | 93 |
| Կրաւորական բայեր | 95 |
| ԵՐԿՐՈՐԳ ՀԱՏՈՒԱԾ: ԹԵՔՈՒՄ | 96 |
| Ա. Խոնարհում | 97 |
| 1. Ձևեր | 97 |
| Եղանակներ | 97 |
| Ժամանակներ | 99 |
| Դերբայներ | 100 |
| 2. Պարզ ձևերի կազմութիւնը | 102 |
| Ըղձական եղանակ | 106 |
| Սահմ. անց. կատարեալ | 108 |
| Հրամայական եղանակ | 110 |
| Դերբայներ | 111 |

| | երես |
|---|------|
| 3. Բաղադրեալ ժամանակների կազմութիւնը | 113 |
| Գլխաւոր բաղադրեալ ժամանակներ | 115 |
| 4. Կանոնաւոր խոնարհումներ | 116 |
| Ի խոնարհում | 116 |
| Ս. խոնարհում | 119 |
| Ի, Ե խոնարհում | 120 |
| 5. Անկանոն բայեր | 121 |
| 6. Պակասաւոր բայեր | 125 |
| 7. Յաւելաւոր բայեր | 126 |
| 8. Երկրորդական բաղադրեալ ժամանակներ | 127 |
| 9. Բացասական ձևերի կազմութիւնը | 129 |
| Բ. Հոլովում | 134 |
| 1. Ձևեր և իրենց կազմութիւնը | 134 |
| Ա. Թիւ | 134 |
| Բ. Հոլովներ | 135 |
| Ուղղական հոլով | 136 |
| Թեք հոլովներ | 138 |
| Զայնափոխութիւն | 140 |
| 2. Անունների հոլովում | 140 |
| Ի հոլովում | 141 |
| Ու հոլովում | 142 |
| Ան հոլովում | 145 |
| Ուան հոլովում | 148 |
| Ոջ հոլովում | 150 |
| Օր հոլովում | 151 |
| Ք, ց հոլովում | 151 |
| Գրաբար հոլովման ձևեր | 153 |
| Յարադրեալ անունների հոլովում | 155 |
| Բացայայտչի և բացայայտեալի հոլովում | 156 |
| Յօդերով հոլովում | 156 |
| 3. Դերանունների հոլովում | 158 |
| Ստուգաբանական վերլուծութիւն | 162 |
| Քերականական վերլուծութիւն | 163 |

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Խնդրում ենք այս գիրքը բանեցնելուց առաջ
 օւղղել վրիպակները, մանաւանդ սև տառով տպած-
 ները:

| Երես տող | Սխալ | Ուղիղ |
|----------|-------------------|-------------------|
| 3 15 վ. | քերականութիւնների | քերականութիւնների |
| » 2 ն. | ամիողջ | ամբողջ |
| 8 3 » | չղաղիր | չղագիր |
| 15 2 վ. | ցոյր տալու | տալու |
| 17 4 ն. | ևս | և |
| 36 11 » | ընկել | ընկնել |
| 64 5 » | մայրաքաղաք | մայրաքաղաք |
| 69 12 վ. | ու— | ուրիշ |



Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ո Յ Լ Ե Չ Ո Ւ

1. Լեզու կոչուում է մի աղգի յատուկ խօսուած-
 քը: Հայ աղգի յատուկ խօսուածքն է հայոց լեզուն
 կամ հայերէնը:

2. Բարբառ կոչուում է աղգի մի մասի տեղական
 խօսուածքը, որ հարեանների տեղական խօսուածքից
 տարբերուում է աննշան փոփոխութիւններով: Օրինակ՝
 մի և նոյն զնացել է խօսքը նայելով բարբառին լինում
 է՝ զնացել ա, զնացիլ է, գացեր է, կնացեր ի, կնա-
 ցիր ի և այլն:

Հայոց լեզուի բարբառներից գլխաւորներն են՝
 Արարատեան (Վաղարշապատ, Քանաքեռ, Աշտարակ
 և այլ գիւղերի) և Կոստանդնուպոլսի բարբառներ:

3. Գրական լեզու ասուում է բարբառներից մէ-
 կը, որ գործածուելով գրականութեան մէջ և դպրոց-
 ներում՝ առանձնապէս մշակուում և հարստանում է:
 Գրական լեզուն իւր մէջ ընդունում է և ուրիշ բար-
 բառներից շատ բառեր, ձևեր ու դարձուածներ:

Մեր այժմեան գրական լեզուն ասուում է աւ-
 խարհաբար կամ աշխարհիկ լեզու: Աշխարհաբարն
 երկու տեսակ է՝ արևելեան և արևմտեան:

Արևելեան աւխարհաբարը գործ է ածուում Ռու-
 սիայի և Պարսկաստանի հայերի մէջ. հիմնական բար-
 բառն է Արարատեան բարբառը:

Արեւմտեան աշխարհաբար գործ է ածուում ճանկաստանի և Արևմտեան Եւրոպայի հայերի մէջ. հիմնական բարբառն է **Պոստանդնուպոլսի բարբառը:**

Երկու աշխարհաբարն իրարուց շատ քիչ տարբերութիւն ունին:

Գրաբար կամ գրոց լեզու աւելում է հայոց հին գրական լեզուն, որով գրում էին գրքերը մինչև 19-րդ դարու կէսերը: Գրաբարն այժմ հին կամ մեռած լեզու է, որովհետև այժմ այլ ևս գրաբար խօսող չկայ:

Գրաբարից շատ բառեր, ձևեր ու դարձուածներ մտել են և դեռ մտնում են մեր նոր գրական լեզուի մէջ:

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն.

4. Քերականութիւն կոչուում է լեզուի զիտութիւնը: Քերականութիւնը միանգամայն և լեզուի արուեստն է, որ սովորեցնում է ուղիղ խօսելու և գրելու կանոնները:

Հայոց լեզուի քերականութիւնը սովորեցնում է այն կանոնները, որոնցով հայերէն ուղիղ խօսում և գրում ենք:

5. Գրական լեզուի մէջ ընդհանրութիւնից ընդունուած և աւանդական դարձած բառերով ու ձևերով խօսելը կոչուում **ուղղախօսութիւն:** Ուղղախօսութեան պայմաններից է գրական լեզուի մէջ գործ չածել՝

1. Այնպիսի բարբառային և գրաբար ձևեր, որ աշխարհաբարում ընդունուած չեն, օրինակ՝ աշխարհաբարի սովորական ուղիղ ձևն է գնացել է. իսկ գնացել ա. գնացիլ է, գացեր

է **կն** (§ 2) ձևերը, որոնցից ամեն մէկն իւր բարբառի մէջ ուղիղ է. եթէ գրական լեզուի մէջ գործածենք, ուղիղ չեն լինիլ:

2. Այնպիսի բարբառային և յատկապէս օտարաղբի բառեր, որոնց իմաստով աշխարհաբարում սովորական բառեր կան, օրինակ՝ քոմմա, դիփ, լոխ, բիծուն ասել և գրել՝ փոխանակ սովորական ամեն, բոլոր բառերի. կամ խի՞, ընենց. նենց, սանկ փոխանակ ինչո՞ւ, այնպէս, այսպէս բառերի:

6. Խօսելիս մեր մտքերն ենք ասում, յայտնում ուրիշներին բառերով: Օրինակ՝ գնացի մի բառ և մի խօսք է. իսկ ես այսօր գնացի իմ հօրեղբոր տունը վեց բառ և մի խօսք է:

Խօսքը մտածութեան արտայայտութիւնն է բառերով:

Խօսքը քերականութիւնների մէջ սովորաբար կոչուում է **ճախարհասօրիւն:**

7. Եթէ խօսքն առանձին վերցրած՝ մի ամբողջ, լրացած միտք է յայտնում, կոչուում է **ասացուած:** Օրինակ՝ Մեծ է Աստուած:

Ասացուածը կարող է լինել կամ մի հատ խօսք, կամ երկու և աւելի խօսքերի բաղադրութիւն, որոնք միասին առած մի ամբողջ, լրացած միտք են յայտնում: Օրինակ՝ Մինչեւ չգայ յետինը, չի յիշուիլ առաջինը մի ասացուած է և երկու խօսք. եթէ միայն, օրինակ, առաջին խօսքը վերցնենք՝ Մինչեւ չգայ յետինը, միտքը թերի, կիսատ կը մնայ:

Ասացուած կոչուում է, ուրեմն, կամ մի խօսքը, կամ երկու և աւելի խօսքերի բաղադրութիւնը, երբ մի ամբողջ, լրացած միտք են յայտնում:

Մեկն խօսում եմ ասացուածներով:

8. Ռադադրել կամ բարդել նշանակում է երկու կամ աւելի բան իրար միացնելով՝ մի նոր բան կազմել: Օրինակ՝ զանգակ և տուն բառերի միանալուց կազմուում է մի նոր բառ՝ զանգակատուն, որ բաղադրեալ կամ բարդ բառ է: Չանգակ և տուն բառերը, որոնց բաղադրուելուց կազմուում է զանգակատուն բառը, զանգակատուն բառի բաղադրիչ մասերն են: Այսպէս և տուն բառը շինուած է տ. ու. ն հնչիւններից, որոնք և տուն բառի բաղադրիչ մասերն են:

Ամեն բաղադրուած բան կարելի է վերլուծել, այսինքն որոշել, թէ ինչպիսի բաղադրիչ մասերից է կազմուած: Օրինակ՝ տուն բառը կարելի է վերլուծել և ցոյց տալ, որ կազմուած է տ. ու. ն հնչիւններից. նոյնպէս զանգակատուն բառը կարելի է վերլուծել և իմանալ, թէ ինչ հնչիւններից է շինուած, կամ ինչ բաղադրիչ մասերից՝ իրրև բարդ բառ: Նոյնպէս կարելի վերլուծել մի ասացուած և որոշել, թէ քանի խօսքից է բաղադրուած, և ապա ամեն խօսք, թէ քանի բառից է կազմուած:

9. Ասացուածը կազմուում է խօսքերից, խօսքը՝ քառերից, բառը՝ հնչիւններից:

Խօսք, բառ և հնչիւն լեզուի էական բաղադրիչ մասերն են. ուստի և քերականութիւնն ունի երեք մաս.

Ա. Հնչիւնների ուսում կամ հնչաբանութիւն.

Բ. Բառերի ուսում կամ բառագիտութիւն.

Գ. Խօսքերի ուսում կամ շարահիսութիւն:

10. Քերականութիւն կոչուում է լեզուի գիտութիւնը, որ սովորեցնում է լեզուի բաղադրիչ մասերը և նրանց բաղադրութեան օրէնքները:

Հայոց լեզուի քերականութիւնն, ուրեմն, սովորեցնում է այն կանոնները, որոնցով հայոց լեզուի մէջ հնչիւններից բառեր են կազմուում, բառերից՝ խօսքեր և խօսքերից՝ ասացուածներ:

11. Ասացուածը սովորաբար բաւականութիւն չի տալիս մեզ: Զրուցատրութեան ժամանակ, երբ մի բան պատմում կամ նկարագրում ենք, ոչ թէ մի միտք ենք յայտնում, այլ մի շարք մտքեր. ուստի և մի շարք ասացուածներ ենք բանեցնում, կամ շարադրում ենք:

Շատ ասացուածների միութիւնը, որոնք կապակցօրէն մի ամբողջական ընդարձակ միտք են յայտնում կամ բացատրում, կոչուում է շարադրութիւն:

Շարադրութեան ուսումը մի առանձին արուեստ է, բայց մասամբ մտնում է և քերականութեան մէջ, որովհետև սովորեցնում է մտածութիւնները լեզուով արտայայտելու եղանակները կամ ոճը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՆՉԱՐԱՆՈՒԹԻՒՆ,

Ա. ՆՇԱՆԱԳՐԵՐ.

12. Ամեն բան, որ ասում, խօսում ենք, կարելի է նշաններով գրել և կարգալ: Գրութեան նշանները կոչում են նշանագիր:

Հայոց լեզուի նշանագրերը չորս տեսակ են՝ տառեր, տրոհութեան նշաններ, առոգանութեան նշաններ և քացայայտութեան նշաններ:

1. Տառեր.

13. Հնչիւն ասում են խօսքի ամենապարզ բաղադրիչ մասերը: Հնչիւնների նշանագրերը կոչում են տառ կամ գիր:

Հնչիւններն արտասանում և լսում են, իսկ տառերը գրում, կամ տպւում են և կարգացրում:

14. Տառերի աւանդական շարքն առաջին երկու տառի անունով կոչում է այբբեն:

Ամեն տառ տպւում է սովորաբար երկու ձևով, որ են՝ մեծատառ (գլխագիր, գլխատառ) և փոքրատառ:

Հայոց լեզուի այբբենը տառերի անուններով և գլխատառ ձևերով հետևեալն է.

| Գլխագիր. | Փոքրատառեր. | | | Ա.Նուն. | Գլխագիր. | Փոքրատառեր. | | | Ա.Նուն. |
|----------|-------------|--------|---------|---------|----------|-------------|--------|---------|---------|
| | Բոլորովին | Նստարկ | Չնստարկ | | | Բոլորովին | Նստարկ | Չնստարկ | |
| 1 Ա | ա | ա | ա | այբ | 20 Մ | մ | մ | մ | մեն |
| 2 Բ | բ | բ | բ | բեն | 21 Յ | յ | յ | յ | յի |
| 3 Գ | գ | գ | գ | գիմ | 22 Ն | ն | ն | ն | նու |
| 4 Դ | դ | դ | դ | դա | 23 Շ | շ | շ | շ | շա |
| 5 Ե | ե | ե | ե | եչ | 24 Ո | ո | ո | ո | ո |
| 6 Զ | զ | զ | զ | զա | 25 Զ | չ | չ | չ | չա |
| 7 Է | է | է | է | է | 26 Պ | պ | պ | պ | պէ |
| 8 Ը | ը | ը | ը | ըթ | 27 Զ | ղ | ղ | ղ | ղէ |
| 9 Թ | թ | թ | թ | թո | 28 Ռ | ռ | ռ | ռ | ռա |
| 10 Ժ | ժ | ժ | ժ | ժէ | 29 Ս | ս | ս | ս | սէ |
| 11 Ի | ի | ի | ի | ինի | 30 Վ | վ | վ | վ | վեւ |
| 12 Լ | լ | լ | լ | լին | 31 Տ | տ | տ | տ | տին |
| 13 Խ | խ | խ | խ | խէ | 32 Բ | բ | բ | բ | բէ |
| 14 Ծ | ծ | ծ | ծ | ծա | 33 Յ | ց | ց | ց | ցո |
| 15 Կ | կ | կ | կ | կեն | 34 Ի | ւ | ւ | ւ | ւին |
| 16 Հ | հ | հ | հ | հո | 35 Փ | փ | փ | փ | փիւր |
| 17 Զ | ձ | ձ | ձ | ձա | 36 Ք | ք | ք | ք | քէ |
| 18 Ղ | ղ | ղ | ղ | ղատ | 37 Օ | օ | օ | օ | օ |
| 19 Ծ | ճ | ճ | ճ | ճէ | 38 Ֆ | ֆ | ֆ | ֆ | ֆէ |

15. Բացի այս երեսունութ տառերից՝ կայ նաև և, և նշանագիրը, որ կաղմուած է ն, և տառերի միութեանից: Այս նշանագրի տեղ միշտ կարելի է գրել նւ (§ 60. 1.): Գլխագրի և շղագրի համար չունի առանձին ձև, և գրւում է նի, նւ, նւ:

16. Գլխագիրը, որի հին տեսակը երկաթագիր է կոչւում, գործ է ածւում սովորաբար բառերի առաջին տառերի գրութեան համար: Գլխագրով սկսւում են.

1. Ասացուածների, ուղղակի խօսքերի (§ 24.),
ոտանաւորի տողերի և տողագլուխների (նոր տողից
գրուած մասերի, լինին առանձին ասացուածով սկը-
սուած, թէ ոչ) առաջին բառերը:

2. Յատուկ անուններն ու նրանցից անբաժան
մականուններն և իբրև յատուկ անուն առնուած բա-
ռերը: Յատուկ անուն են՝

ա. Աստուած բառը և նոյն իմաստով առ-
նուած բառերը՝ Արարիչ, Տէր, Բարձրեալ, Նա-
խահնամուծիւն և ըն:

բ. Հեթանոսական աստուածների անուննե-
րը, օրինակ՝ Արամազդ, Վահագն, Անահիտ:

գ. Անձերի անունները, օրինակ՝ Ներսէս,
Աշոտ Ռդորմաձ, Մեծն Տիգրան, Արտաշէս Երկ-
րորդ, Խորենացի:

դ. Աշխարհագրական անունները՝ Սև ծով,
Ալպեան լեռներ, Երևան, Մասիս, Վանայ լիճ:

3. Քաղաքավարական գրութեան մէջ՝ Դուք, Ձեր,
Ձեզ, Ձեզնից և ըն բառերն և տիտղոսները, ինչպէս՝
Նորին Մեծութիւն, Նորին Սրբութիւն, Վեհափառ Կա-
թողիկոսը, Վեհափառը և ըն:

4. Գրուածքների անունները, ինչպէս (Խորե-
նացու) Հայոց պատմութիւնը, Կայծերը, Խենթը և ըն:

Գլխատառով տպագրուած են սովորաբար և վեր-
նագիրները:

Բոլորագիրը գործ է ածուած սովորական տպա-
գրութեան համար. իսկ նոսրագիրն ու շղագիրը գործ
են ածուած, երբ հարկաւոր է, որ մի կամ մի քանի
բառ առանձնապէս աչքի ընկնեն:

2. Տրոհութեան նշաններ.

17. Խօսելիս մեր մտքերն իրար հետ չշփոթելու
համար՝ որոշ տեղերում կանգ ենք առնում, որով
խօսքերը, երբեմն և ըստերն իրարուց բաժանուած են:
Այս դադարը կամ հանգիստը կոչուած է տրոհութիւն,
որ նշանակուած է բաժանում:

Տրոհութեան մէջ արտայայտուած է
տրոհութեան նշաններով կամ կէտերով, որոնք գրուած
են բառերի ետևից: Կէտերի գործածութիւնը կոչուած
է կէտադրութիւն:

Տրոհութեան նշաններն են՝ վերջակէտ (:), մի-
ջակէտ (·), ստորակէտ (;) և բութ (')::

18. Կետադրութեան համար պիտի նկատի ունե-
նալ.

1. Վերջակէտ գրուած է ասացուածների վերջում:

2. Ստորակէտով, երբեմն և ըստով բաժանուած են
մի և նոյն ասացուածի մաս կազմող խօսքերը: Օրինակ՝
Ժառ չկայ, որ գլխովը քամի չանցնի:

3. Միջակէտով բաժանուած են նոյն ասացուա-
ծի մասերը, եթէ բառական երկար են և կամ իրենք
ևս ունին ստորակէտով բաժանուած երկրորդական
մասեր: Օրինակ՝ Մարդ կայ, որ հազար արժէ. մարդ
կայ, որ մէկ չարժէ:

4. Բութ գրուած է ասացուածի երկու մասի մէջ,
կամ երկրորդ մասի միջին, երբ մի բառ զեզուած է,

այսինքն գուրս է ընկնում և զօրութեամբ է հասկացում: Օրինակ՝ Գայլն ամալ օր կուզի, գողը՝ մնթ զիշեր (այսինքն՝ գողը մութ գիշեր կուզի): Ես տեսայ՝ նա վերադարձել էր (այսինքն՝ ես տեսայ, որ նա վերադարձել էր): Գեղ կանգնի՝ գերան կը կոտրի (այսինքն՝ գեղ որ կանգնի ...):

Բութը ցոյց է տալիս նաև թուարկութիւն և բացատրութիւն՝ այսինքն, այն է, օրինակ, լինչպէս, որ է, որ են և ին բառերի՝ իմաստով, որոնց վրայ ևս յաճախ դուռ է բութ: Օրինակ՝ Աշխարհի հինգ մայր ցամաքներն են՝ Ասիա, Եւրոպա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա:— Ես իմ անմեղութիւնը մեր խոստովանեց. ապա՝ չարերուն մեզ ի խաչ մատնեց:

3. Առոգանութեան նշաններ.

19. Խօսելու ժամանակ ձայնը միատեսակ չի մնում, այլ խօսքի իմաստին նայած՝ շարունակ փոփոխուելով եղանակաւորում է, այսինքն երբեմն զօրեղ է արտասանում, կամ թոյլ. երբեմն բարձր, կամ ցած. երբեմն երկար, կամ կարճ. Ձայնի այս եղանակաւորումը կամ ելևէջը կոչւում է առոգանութիւն:

Ոգել կամ առոգանել նշանակում է ասել, արտասանել, երգել: Տրոհութեան նշանները միաժամանակ և առողանութեան նշաններ են. բայց կան և առանձին առոգանութեան նշաններ, որ են՝ շեշտ (´), հարցական նշան (°) և բացազանչական նշան (˘), որոնք դուռում են բառի ձայնաւորի վրայ վերեից:

20. Շեշտը ցոյց է տալիս ձայնի ուժեղ լինելը և դուռում է խօսք մէջ այն բառերի վրայ, որոնց առանձին

ոյժ է տրուում: Օրինակ՝ Ջարթիր, մանուկ իմ նազելի:

21. Հարցական նշանը կամ ոլորակը դուռում է այն բառերի վրայ, որոնք ուղղակի հարցումն են պարունակում: Այդ ժամանակ ձայնը մի տեսակ ոլորուելով քարձրանում է: Օրինակ՝ Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրայ:

22. Բացազանչական նշանը կամ երկարը դուռում է, երբ խօսքը բացազանչական եղանակով է արտասանում, և երբ բառը սովորականից աւելի երկարում է: Օրինակ՝

Պանդո՛ւխտ, հալածեա՛լ, եղբա՛րք, ո՛ւր դիմե՛ք:—

Հայո՛ց աշխարհիկ, բերկրութեան տեղիք,

Հայո՛ց բնութիւն, ա՛խ, հայ մանկըտիք ...:

Բացազանչել նշանակում է ուրախութեան, բարկութեան, դարմանքի, հիացման, զայրոյթի, վատի կն զգացմունք արտայայտող ձայն, աղաղակ հանել:

4. Բացայայտութեան նշաններ.

23. Գրութիւնն ինչքան էլ կարողանայ ճշտութեամբ արտայայտել խօսուածքը, միշտ թերի է՝ կենդանի խօսակցութեան հետ համեմատած. որովհետև խօսողի շարժուածքից, հայեացքից և ձայնի ելևէջից սովորաբար հեշտութեամբ հասկացում է նրա միտքը: Գրութեան այս թերին մասամբ լրացնելու համար գործ են ածում բացայայտութեան նշանները, որոնք բացայայտում, այսինքն պարզում են գրուածքի միտքը գլխաւորապէս տեսութեամբ:

Բացայայտութեան նշաններն են՝ չափերտ (« »),

փակագիծ (), բազմակէտ (...), ապաթարց ('),
կախման կէտեր (...), զիծ կամ անշատման զիծ (—),
զծիկ կամ միութեան զիծ (-) և ենթամասայ (-):

24. Չակիւրս դուռում է ուրիշի խօսքի, կամ գրա-
ծի սկզբից և վերջից, երբ գրողն ուղղակի, այսինքն
բառացի, առանց փոփոխելու է մէջ բերում այն:
Չակերտից առաջ սովորաբար դուռում է միջակէտ.
բայց եթէ ուրիշի խօսքից առաջ կայ թէ, որ բառե-
րից մէկը, սրանց առաջ դուռում է ստորակէտ. այս
դէպքում ուրիշի խօսքը յաճախ չակերտների մէջ չի
առնում և գլխատառով չի սկսում: Օրինակ՝ Հուրը
պլպաց, աղջիկը կանչեց. «Իմ մեղաց համար Աստուած
ինձ պատժեց»: Ասել եմ, որ մի տեղ գնալիս ինձ իմաց
արն: Ես գրում է, թէ գալու եմ:

Եթէ ուրիշի խօսքը կարճ է, չակերտի մէջ չի
առնում և առաջից դուռում է բուլթ. օրինակ՝ Աղուէ-
սի դունչը խաղողին ճնասաւ, ասաց՝ խսակ է:

Երբեմն, մանաւանդ ոտանաւորների մէջ, ամեն
տողի սկզբում դուռում է չակերտ. օրինակ՝

Ոսկէ թափքով ձին ասաց բեռնած եզան.

«Ես ձին եմ ձիաւորին,

«Ոսկի աթոռ եմ թագաւորին»:

Եզը պատասխանեց.

«Ես եզն եմ եզնաւորին,

«Ոսկի աթոռ եմ ուղչապարին.

«Ես չղատեմ արան ու գարին,

«Ազոաւները պոչիդ տակին կը չարուին»:

25. Փակագիծ դուռում է ասացուածի մէջ մտած
այնպիսի բառերի կամ խօսքերի սկզբում և վերջում,
որոնք առանձին և ուրոյն իմաստ ունին և ասացուա-

ծին չեն վերաբերում և կամ շատ երկբորդաբար
միայն պարզում են նրա իմաստը: Փակագծերի մէջ
առնուած բառերն ու խօսքերը կարելի է դուրս ձգել՝
առանց ասացուածի իմաստը թերի թաղնելու: Օրինակ՝
Ուրացող վասակը (այսպէս է անուանում նրան Եղի-
շէն) միայն իւր անձի եւ օգտի համար էր մտածում:

Փակագծի փոխանակ երբեմն գործ են ածում
ստորակէտներ, կամ ստորակէտ ու գծեր (,—), կամ
լոկ գծեր, մանաւանդ երբ փակագծի մէջ առնելիք
խօսքը կարճ է: Օրինակ՝

Մինչ իմ որդիք — ո՞վ գիտէ ծարաւ, նօթի,
անտէրունչ,
Օտար աշխարհ յաճում են թոյլ ոտքերով, կիսա-
շունչ:

26. Բազմակէտ, չորս կամ հինգ, երբեմն և աւելի
կէտեր, դուռում է բառացի մէջ բերած ուրիշի խօսքի
կամ գրուածքի այն մասի տեղ, որ դուրս է ձգում
մէջ բերողը: Օրինակ՝ Մինչ իմ որդիք ... ծարաւ,
նօթի, անտէրունչ, օտար աշխարհ յաճում են ...

27. Ապաքաց դուռում է, երբ բառի ձայնաւոր-
ներից մէկը դուրս է ընկած և հարկ է ցոյց տալ, թէ
որտեղ է ձայնաւորը պակասում: Օրինակ՝ կ'երթամ,
կ'ընծայիմ, մարդ մ' եկաւ, մ' հետեր, որ պիտի հաս-
կանանք կը երթամ, կը ընծայեմ, մարդ մը եկաւ, մի՛
ուտեր:

Ապաթարցը սովորական գրութեան ժամանակ
շատ քիչ է գործածում և ընդունուած է աւելի ա-
ւելի արևմտեան աշխարհաբարում: Արևելեան աշխար-
հաբարում գրում են ընդհանրապէս կերթամ, կըն-
ծայեմ:

28. Կախման կէտք, երեք կէտ, գրւում են, երբ խօսքն ընդհատուում է, և միտքն առկախ կամ կիսատ է մնում: կամ երբ սաստիկ զգացմունք պէտք է ցոյց տալ: Օրինակ՝

Ես կը ցանկայի ... քայց ինչո՞ւ ցանկամ.
Դիւրաւ չէ գալիս մահը վերահաս:—
Ի՞նչ անե՞նք ... Ամօ՞թ այսպէս ասողին:

29. Անջատման գիծ, մենակ կամ տրոհութեան նշանների հետ, գրւում է խօսքերի մէջ, երբ հարկաւոր է ցոյց տալ, թէ խօսքերն իրարուց բոլորովին անջատ, միմեանց հետ առնչութիւն, կապ չունեցող բաներ են: Անջատման գծով բաժանուում են և հարց ու պատասխանները, երկու հոգու մէջ փոխանակուած խօսակցութիւնները, որոնք սովորաբար տողագրուի են կազմում, այսինքն նոր տողից են սկսում: Օրինակ՝ Ի՞նչ կարող ենք անել:—Եւ ոչինչ:—Բանն ո՞վ անի.— Ես ու դու: Հացն ո՞վ ուտի.— Ես ու դու:

- Յովնան, ե՞րբ ելար Դըւնէն:
- Երեկ երեկոյ:
- Ատրո՞վ եկար մինչեւ այստեղ, այնպէս չէ՞:
- Ա, յո՛ւ:
- Ի՞նչ կերար ճանապարհին:
- Ոչինչ:

Անջատման գիծը երկու թուի մէջ նշանակում մինչեւ: Օրինակ՝ Ե—ժԲ դար. 1—5 հոդի կարդացում է՝ հինդերորդից մինչեւ տասներկուերորդ դար. մէկից մինչեւ հինգ հոդի:

30. Միութեան գիծ գրւում է երկու բառի մէջ ցոյց տալու համար, թէ երկուսը միասին իբրև մի բառ են առնում: Օրինակ՝ կանտաչ-կարմիր (ծիածան):

31. Ենթամնայ գրւում է տողի վերջում ցոյց տալու համար, թէ բառի մի մասը տակի տողն է անցած, կամ տողագարծ է արած (§§ 59, 4 հտն): Ենթամնայ գրւում է և վանկերի մէջ, երբ բազմավանկ բառերը վանկ վանկ են գրւում: Օրինակ՝ թա-գաւոր. լաւու-թիւն:

Բ. Վ Ա Ն Կ.

32. Վանկ առում են այն հնչիւնները կամ հնչիւնների կապակցութիւնները, որոնք արտասանում են մի շնչով կամ մի անընդհատ արտաբերութեամբ: Օրինակ՝ է, ի, այ, ձի, ըու, տուն:

33. Նշանակութիւն ունեցող վանկերը, կամ վանկերի կապակցութիւնները կոչւում են բառ:

34. Բառերն իրենց վանկերի թուին նայելով լինում են միավանկ և քաղմավանկ: Օր. գիր, փայտ միավանկ են. գիշեր, դասարան, իշխանութիւն, թագաւորավայել բազմավանկ են:

Բազմավանկ բառերը նայելով վանկերի թուին՝ առում են և միավանկ, երկավանկ, եռավանկ, քառավանկ և ըն կամ մի վանկանի, երկու վանկանի, երեք վանկանի և ըն:

Միավանկ բառերն արտասանում են մի անգամից, մի արտաբերութեամբ. իսկ բազմավանկ բառերն արտասանում են վանկ վանկ, այսինքն քանի վանկ կայ բառի մէջ, արտասանելիս այնքան անգամ շունչն ընդհատուում է և նորից սկսում: Այս ընդհատումը կարելի է կարծ և ուզածի չափ երկար անել:

Բառերի վանկ վանկ արտասանելը կամ վանկերի բաժանելը առում է հեղել (§ 60):

Գ. ՉՍՅՆԱԻՈՐ ԵՒ ԲԱՂԱԶԱՅՆ ՀՆՁԻՆՆԵՐ.

35. Չայնաւոր կոչուած են այն հնչիւններ, որոնք վանկային են, այսինքն լիաձայն խօսելիս մենակ կարող են վանկ կազմել:

Հայոց լեզուի ձայնաւորները վեց են՝ ա, է (ե), օ, ի, օ (ո), ու:

Փակագծերում առնուած *և* և *ո* տառերի իսկական հնչիւններն են է և օ, բայց ունին և առանձին հնչիւն (§§ 44, 51):

36. Բաղաձայն կոչուած են այն հնչիւնները, որոնք վանկային չեն, այսինքն լիաձայն խօսելիս մենակ չեն կարող վանկ կազմել. այլ մենակ կամ ուրիշ բաղաձայնների հետ կցուած են որևէ բաղաձայնի առաջից կամ ետեից և միասին կազմուած են մի վանկ: Օրինակ. նու, նուշ, մի, միտք:

Բաղաձայն բառը կազմուած է բաղ, որ նշանակուած է կից, կայած, միացած, եւ ձայն բառերից: Բաղաձայն նշանակուած է ուրեմն ձայնաւորի հետ կցուող, միացող:

Հայերէնի բաղաձայնները երեսուն են՝ ք, գ, ղ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ճ, ղ, մ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ո, ս, վ (ւ), տ, ը, ց, փ, ք, ֆ:

Փակագծերում առնուած *ւ* տառն արտասանուած է իբրև վ, բայց և ու ձայնաւորի նշանագիր է (§68):

37. Վանկի էական մասը ձայնաւորն է: Ամեն ձայնաւոր մենակ մի վանկ է կազմուած, և առանց ձայնաւորի վանկ չկայ:

Գ. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ ԵՒ ԿԻՍԱԶԱՅՆ.

38. Երկբարբառը երկու ձայնաւորի միացած արտասանութիւնն է մի շնչով իբրև մի վանկ. ինչպէս՝ եւ, եօ:

Բարբառ նշանակուած է ձայն, հնչիւն: Երկբարբառ նշանակուած է ուրեմն երկու ձայն, ձայնաւոր ունեցող, մի հնչիւն, որ կազմուած է երկու ձայնաւորից:

39. Երկբարբառի բաղադրիչ ձայնաւորներից մէկը պահուած է իւր ձայնաւոր յատկութիւնը և կազմուած է վանկի էական մասը, ինչպէս եւ, եօ երկբարբառների մէջ ա, օ ձայնաւորները. իսկ միւսն առանձին վանկ չէ կազմուած, այլ կատարելով բաղաձայնի պաշտօն՝ կցուած է ձայնաւորին ետեից կամ առաջից, ինչպէս ե հնչիւնն եւ, եօ երկբարբառների մէջ:

Երկբարբառի մէջ մասնող այն ձայնաւորը, որ իբրև բաղաձայն բանելով՝ առանձին վանկ չէ կազմուած, կոչուած է կիսաձայն:

Հայոց լեզուի մէջ, աշխարհաբարուած, իբրև կիսաձայն բանուած է միայն ի ձայնաւորը, որի փոխանակ սակայն գրուած են աւելի *և* *յ* տառերը:

- 40. Աշխարհաբարի երկբարբառներն ու թ են.
 1. այ, ինչպէս հայ, վայ, սլայծառ բառերի մէջ:
 2. ոյ, որ արտասանուած է իբրև ույ, ինչպէս լոյս, կոյս, ողջոյն բառերի մէջ:
 3. ոյ, որ արտասանուած է սակաւաթիւ բառերի մէջ իբրև օյ, ինչպէս խոյ, նոյ:
 4. եւ, յւ, ինչպէս սննեակ, ծառայական:
 5. եւ, յւ, յէ, ինչպէս եկ, նայել, հրամայել:
 6. յի, ինչպէս երկնային, գնային:
 7. եօ, յո, ինչպէս եօթն, արդեօք, ծառայով:
 8. իւ, յու, ինչպէս իւր, գոյութիւն:

15-1034



41. Հնչիւնների արտասանութիւնը բառերի մէջ ժամանակի ընթացքում սովորաբար փոփոխուում է, օրինակ՝ հին իւրեանց բառն աշխարհաբարում դարձել է իրենց կամ իրանց. որդի բառն, որ այժմ արտասանում ենք իբրև վորժի, հին ժամանակ գրաբարում արտասանել են իբրև օրդի, որի մէջ ու տառը հնչուել է ինչպէս դու, դիակ բառերի մէջ:

Հնչիւնների այսպիսի փոփոխութիւնը, որ լինում է ժամանակի ընթացքում բառերի մէջ, կոչւում է հնչափոխութիւն:

42. Աշխարհաբարում բառերն այժմ մեծ մասամբ գրւում են այնպէս, ինչպէս հին ժամանակ գրել են գրաբարում. բայց որովհետև շատ հնչիւններ բառերի մէջ փոփոխուել են, ուստի և գրութիւնը յաճախ համապատասխան չէ արտասանութեանը. օրինակ՝ վարժ, օց արտասանում ենք, բայց գրում ենք հին աւանդական ձևով վարդ, օձ:

Բառերն ու խօսքերն ընդունուած աւանդական ձևով գրելը կոչւում է ուղղագրութիւն:

1. Չայնաւորների ուղղագրութիւն.

43. Չայնաւորներից ա, ի, ու հնչիւնների գրութիւնն արտասանութեան համեմատ է: Առանձին գծաւարութիւն ունի ն և է, ո և օ և ը տառերի գրութիւնը:

44. Ե տառի բուն հնչիւնն է է, բայց աշխարհաբարում ընդունուած է բառասկզբի ն-ն սովորաբար արտասանել իբրև երկբարբառ յն, ինչպէս երկու, երկար, երեւալ բառերի մէջ: Յաճախ սակայն բառասկզբի ն-ն ժողովրդական արտասանութեամբ պահւում է իւր է հնչիւնն ևս, և արտասանում են երկու, երկար, երեւալ:

Բառերի ամենամեծ մասի մէջ է հնչիւնը գրւում է ն տառով. է տառի գործածութիւնը համեմատաբար շատ աւելի քիչ է, քան ն տառինը. ուստի և ուղղագրութեան համար հարկաւոր է սովորել է տառի գրութեան դէպքերը:

45. Բառասկզբում է գրւում է միայն հետևալ բառերի մէջ. է (որից՝ էի, էիր, էր, էինք էիք, էին, էակ, էութիւն ևլն), էգ, էգուց, էժան (աժան), էլ (որից էլի, էլօր), էհ, էշ, էջ, էր, էրիկ:

Մնացած բոլոր բառերի սկզբում գրւում է ն, արտասանուելիս լինի ն-ն իբրև է ձայնաւոր, թէ իբրև յն երկբարբառ:

է տառով սկսուում են և բարբառային բառերը, որոնց սկզբի է հնչիւնը ծագած է գրաբարի այ երկբարբառից, ինչպէս են՝ էս, էդ, էն, էծ ելն: Գրական լեզուի մէջ, սակայն, իբրև ուղիղ ձև ընդունուած են՝ այս, այդ, այն, այժ, Այսպիսի հնչափոխութեամբ են առաջ եկած նաև էգուց, էր էլի, էլօր, էրիկ բառերը այդուց, այլ, այլի, այլօր, այր (այրիկ) ձևերից: Նոյն ձևով է գրւում է բառամիջում ևս, եթէ է հնչիւնն այ երկբարբառից է ծագում. ինչպէս՝ դէս, դէն, վէր ընկնել, վէր գալ բառերը ընդ այս, ընդ այն, վայր ընկնել, վայր գալ ձևերից: Այսպէս և բարբառային աղբեր (եղբայր), պէծ (պայծ, պայծառ), դէլ (գայլ), կէծակ (կայծակ) ևլն:

46. Բառավերջում միշտ է տառն է գրւում՝
ինչպէս՝ մարգարէ, ըուպէ, քապէ, քերէ, ուտէ, հրամայէ:

47. Բառամիջում ձայնաւորներից առաջ միշտ
գրւում է է տառը՝ չհաշուած եա, եօ երկբարբառ-
ները. օրինակ՝ գրէի, գրէիր, գրէինք, գրէիք, գրէին.
քերէի, քերէիր, քերէինք, քերէիք, քերէին և նմանները:

Այսպէս է-ով գրւում են և սակաւաթիւ բառեր
և անուններ, որ են՝ անդէորդ, դժնէատես, լեզէոն,
հոգէառ, հոգէորդի (արտասանւում է՝ հոգէորդի), մար-
գարէանալ, մարգարէութիւն և ըն, մէջօրէական, ոսկէօղ,
ըուպէական, քնէած, քրէական, քրիստոնէական: —
Թաղէոս, Թէոդոս, Թէոդորոս, Մատթէոս, որոնք ար-
տասանւում են նաև Թաղեոս, Թեոդոս, Թեոդորոս.
Մատթեոս: Լէոն գրւում է սովորաբար արտասա-
նութեան համեմատ՝ Լեոն. իսկ Սիմէոն սովորաբար
Սիմոն է գրւում և արտասանւում:

48. Բառամիջում նախավերջին վանկերի մէջ
բաղաձայնից առաջ գրւում է ե տառը: Է-ով գրւում
են միայն սակաւաթիւ բառեր. ինչպէս՝ անօրէնու-
թիւն, գէշութիւն, գէշանալ, գէրութիւն, գէրանալ,
շէկութիւն պէտքական, վրէժխնդիր, տէրութիւն, տէ-
րունի, անտէրունչ, տնօրէնութիւն, օրէնադիր:

Սեալ է գրել՝ աղէաւոր, յաւերժակսն, գնբխաւոր, եղեգնիկ, գի-
նէսուն եւ ըն, փոխանակ աղէաւոր, յաւերժական, գնբխաւոր. եղեգնիկ,
գինէսուն ձեւերի:

Օտարազգի անունների և բառերի մէջ նախա-
վերջին վանկերում բաղաձայնից առաջ միշտ գրւում
է ե. օրինակ՝ Պետերբուրգ, Բերլին, Կեսար, Գեր-
մանիկոս, Կիկերոն, Մեմֆիս, պրոֆեսոր:

49. Բառամիջում է գրւում է սահմանափակ
թուով բաղմամբանկ բառերի վերջին վանկերի և միա-
վանկ բառերի մէջ. Այս դէպքի համար իբրև առաջ-
նորգօղ կանոն պէտք է ընդունել հետևեալը. երբ
ե-ով գրւող բառերից նոր բառեր են կազմուում, ե
հնչիւնն անփոփոխ ե է մնում. օրինակ՝ ծեծ, ծեծել.
գիշեր, գիշերային. մեծ, մեծանալ: Իսկ երբ է-ով
գրւող բառերից են նոր բառեր կազմուում, է հնչիւնը
սովորաբար փոխուում է ի հնչիւնի. օրինակ՝ սէր, սի-
րել, հանդէս, հանդիսաւոր. սակաւաթիւ բառերի մէջ
միայն է հնչիւնը նոր բառ կազմելիս անփոփոխ է
մնում (§ 48), և կամ է տառը փոխուում է ե տա-
ռի. օրինակ՝ եղէգն, աղուէս, բայց եղեգնիկ, աղուե-
նուկ: Կան բառեր ևս, որոնք անխախտ է-ով և ե-ով
են գրւում, օրինակ՝ կետադրութիւն, կետադրութիւն,
ամեն, ամէն:

1. Բառեր, որոնք է-ով են գրւում.

- | | |
|--|--|
| Ախտածէտ. | Ասպարէզ |
| Աղէտ, աղետաւոր. | Բգէգ, նաև բգիգ. |
| այլ և աղիտաւոր. | Բուէճ, բուիճակ. |
| Աղուէս, աղուեսուկ, աղուե- սաքուն. | Գազպէն, նաև գազպին. |
| | Գէթ. |
| Ամէն (եղիցի, լինի նշանա- կութեամբ). | Գէշ, գիշատիչ. |
| Անէժը, անիժիկ. | Գէշ, գիշութիւն, այլև գէ- շութիւն, գէշանալ (§ 48). |
| Անօրէն, անօրինարար, բայց անօրէնութիւն (§ 48). | Գէջ, գիջահամ. |
| Աշխէտ. | Գէս, գիսաւոր. |
| Ապաւէն, ապաւինել. | Գէտ, ապէտ, գիտութիւն, աղիտութիւն. |
| Ապաքէն, ոչ ապաքէն. | Գէր, գիրանալ, գիրութիւն, այլ և գերութիւն գէրա- նալ (§ 48). |
| Առէջը. | |
| Առնէտ. | |

Գումէշ.
 Դէզ, դիզել.
 Դէմ, դէմք, դիմել, դիմաց.
 Դէն (տես § 45).
 Դէպ, դէպի, դէպք, դիպուած, դիպչել.
 Դէս (տես § 45).
 Դէտ, դիտել.
 Եղէզն, եղեգնիկ, եղեգնուտ.
 Երէց, երիցագոյն
 Ձէն, զէնք, զինուոր.
 Թէկն, թիկունք, նաև թեկն, թեկնածու.
 Թէկուզ, կազմուած թէ, կուզի բառերից.
 Թէպէտ, կազմուած թէ, պէտ բառերից.
 Ժապաւէն, ժապաւինել.
 Լէզ, պնակալէզ, լիզել.
 Լէշ.
 Խէթ, խիթալ.
 Խէժ, նաև խիժ.
 Խլէզ, խլեզուկ.
 Ծէս, ծիսական.
 Ծուէնք.
 Կէզ, արևակէզ, կիզել.
 Կէս, կէսօր, կիսել.
 Կէտ, կիտադրութիւն, այլ և կէտադրութիւն, կետադրութիւն.
 Կոճղէզ, նաև կոճղիզ.
 Կրկէս.
 Հանդէպ, հանդիպել.
 Հանդէս, հանդիսաւոր.
 Հարմնաւէր.
 Հէզ, հիզութիւն.

Հէն, հինաբար.
 Հրաւէր, հրաւիրել.
 Հրէշ, հրեշաւոր, հրէշաւոր.
 Ձէթ, ձիթենի.
 Մէզ, միգամած.
 Մէզ, միզել.
 Մէն, մէն մի, մենակ, այլ և մինակ.
 Մէջ, միջին.
 Մէտ, հակամէտ, միտել.
 Մողէս.
 Յաւէտ (յաւիտեան).
 Նենգածէտ.
 Նուէր, նուիրել.
 Շահէն.
 Շէկ, շիկակարմիր, բայց չէ-կութիւն (§ 48).
 Շէն, շինել.
 Շէջ, անշէջ, շիջեցնել.
 Շրէշ, շրեշել.
 Պատճէն.
 Պատնէշ.
 Պատուէր, պատուիրել.
 Պարէն.
 Պարէտ.
 Պարտէզ, պարտիզպան.
 Պէս, այսպիսի.
 Պէտ, պէտք, սակաւապէտ, պիտանի, բայց պէտքա-կան (§ 48).
 Սէզ, սիզալ.
 Սէզ, սիզաւէտ.
 Սէր, սիրել.
 Ստէպ, ստիպել.
 Վատչուէր.
 Վէզ.

Վէժ, ջրվէժ, վիժել.
 Վէճ, վիճել.
 Վէմ, վիմուտ.
 Վէպ, վիպասան.
 Վէս, վէսական, վէսութիւն, այլ և վիսութիւն, վիսա-բարոյ (§ 48).
 Վէտ, վէտ վէտ.
 Վէր գալ, վէր ընկնել (տես § 45).
 Վէր, վէրք, վիրաւոր.
 Վրէժ, վրիժառու, բայց վրէժինդիր (§ 48).
 Վրէպ, անվրէպ, վրիպակ.
 Տէզ, տիզարուն.

Տէր, տիրել, տիրութիւն, այլ և տէրութիւն, տէրու-նի, տէրունական, անտէ-րունչ, այլ և տերունական, անտերունչ (§ 48).
 Տնօրէն, տնօրինել, տնօրի-նութիւն, այլ և տնօրէնու-ֆեսաւէր. [թիւն.
 Փէշ.
 Փոխարէն, փոխարինել.
 Քարաէզ.
 Քէն, քինախնդիր.
 Օրէն, օրէնք, օրինակ, օրի-նադրութիւն, բայց օ-րէնսդիր, օրէնսդրութիւն:

2. Բառեր, որոնք Ե-ով եւ Է-ով են գրոււմ, եւ ընտրելի են Ե-ով գրութիւնները.

Ամեն (ամենայն), ամէն.
 Գահընկեց, գահընկէց.
 Գեզ, (գեզութիւն), գէզ.
 Գմբեթ (գմբեթաւոր), գմբեթ.
 Երբեք, երբեք.
 Երեկ (երեկոյ), երէկ.
 Խայտարղետ, իայտարղէտ.

Խենեշ (խենեշութիւն), խե-շենց, հէնց. [նէշ.
 Մէկ (չին ձեռով մեկ), տաս-նուսկերորդ, տասնու-մէկերորդ.
 Ուղեշ, (ուղեշարձակ), ուղէշ.
 Չեզք, չէզք.
 Պարտետ, պարտէտ:

50. Է-ով գրուում են և հետեւեալ վերջաւորու-թիւնները.

1. (Նա) գրէր, կը գրէր, կը բերէր, պիտի ասէր և նման-ները:
2. (Դուք) գնացէ՛ք, գրեցէ՛ք, գրէք, եկէ՛ք, մտէ՛ք, ելն:

- 3. (Դուք) մի ուտէք, մի գրէք, մի խօսէք և նմանները:
- 4. Մեռնորհներ, ջրօրհներ, դանաբացէք, արժէք, կողպէք:
- 5. Կանաչիղէն, սակիղէն, արծաթեղէն ևն:
- 6. Ծաղկաւէտ, խոտաւէտ, գինեւէտ ևն:
- 7. Ծաղկաւէտ, հիւսկէն, ճանճկէն ևն:
- 8. Հայերէն, աուսերէն, յունարէն ևն:
- 9. Այժմէն, արդէն, նկարէն, ինձէն, քեզէն ևն:

Է-ով գրւում են և էլ, էն, էս ևն վերջացած շատ յատուկ անուններ. ինչպէս՝ Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ, Աշխէն, Գուրգէն, Զաւէն, Խորէն, Կայէն, Շահէն, Ռուբէն, Սուրէն, Ներսէս, Արիստակէս, Վրթանէս, Յովսէփ ևն:

Ո, Օ

51. Ո տառի բուն հնչիւնն է օ, բայց աշխարհաբարում ընդունուած է բառակցի ո-ն սովորաբար արտասանել իբրև վո վանկ, ինչպէս՝ որդի, ոտ, որ արտասանում են վորդի, վոտ, վոր: Բացառութիւն կազմում են՝ ով, ովկիանոս, ովագիս, ովսաննա բառերը, որոնց սկզբի ո-ն արտասանում է իբրև օ: Յաճախ սակայն ո-ով սկսուող բառերի սկզբի ո-ն ժողովրդական արտասանութեամբ պահում է իւր օ հնչիւնը, և ողորմի, ոլորել, ոսկի ևն հնչում են իբրև օղորմի, օլորել, օսկի:

Բառերի ամենամեծ մասի մէջ օ հնչիւնը գրւում է ո տառով. օ տառի գործածութիւնը համեմատաբար պակաս է. ուտի ուղղագրութեան համար պէտք է սովորել օ-ով գրուող բառերը:

52. Բառակցում վո կամ վօ վանկը, բացի օտարազգի անուններից և բառերից, միշտ գրւում է ո տառով. օրինակ՝ որդ, որջ, ողջ, ողորմել:

Բացառութիւն կազմում է վոհմակ բառը, որ ունի նաև ոհմակ գրութիւնը:

Օ-ով սկսուող բառերը

| | | |
|-------------|----------------|-----------------|
| Օգն, օղնել. | Օհ. նաև օհ. | Օչարակ. |
| Օգոտոտու. | Օձ. | Օչինդր. |
| Օգուտ. | Օձտել, նաև օյ- | Օտար. |
| Օդ. | ակ. | Օր. |
| Օդ, օդենի. | Օդ, օդակ, նաև | Օրան, նաև որայ. |
| Օթ, օթեան. | ողակ. | Օրէնք, օրինակ. |
| Օժանդակ. | Օղի. | Օրիորդ. |
| Օի. | Օճան. | Օրհնել. |
| Օժիտ. | Օճառ. | Օրօր. |
| Օծ, օծել. | Օհն. | |

Մնացած բոլոր բառերի սկզբում գրւում է ո, արտասանուելիս լինի իբրև օ, թէ իբրև վո:

Եթէ բարդ բառերի երկրորդ բաղադրիչն օ-ով է սկսում, օ-ն մնում է և բարդ բառի մէջ. օրինակ՝ կէսօր, սուրեայ, քացօթեայ, զիշերօթիկ, համօրէն, ազգօգուտ:

53. Բառավերջում օ տառով գրւում են միայն սակաւաթիւ բառեր, ինչպէս են՝ տօ, ծօ, հօ, օհօ. նոյնպէս և մարդկանց անունների կրճատ ձևերը՝ Յարօ (Յարութիւն), Մարօ (Մարիամ), Մկօ (Մկրտիչ), որոնք սակայն գրւում են աւելի և ընդհանուր կանոնով՝ Յարոյ (կամ երբեմն Յարո), Մարոյ (Մարո), Մկոյ (Մկո):

54. Բառամիջում օ տառով գրւում են հետևեալ բառերը.

| | | |
|----------------------|-------------------|---------------------|
| Ակօս. | Թօն. | Մեծամօր. |
| Աղօթք. | Թօշնել. | Մօրուք (միրուք). |
| Աղօտ. | Իրօք. | Յօդ, յօդուած. |
| Ամօթ. | Լօս, նա և լոս. | Յօժար. |
| Անօթ. | Լօղիկ. | Յօնք, մրայօն. |
| Անօթի. | Լօշ (լաւաշ). | Յօշոտիլ. |
| Անօւր, նօւր. | Խելօք. | Յօրանալ. |
| Ապարօշ. | Խօթ, խօթանալ. | Յօրանջել. |
| Առաջօք. | Խօշիւն. | Յօրինել. |
| Առաւօտ. | Խօւք. | Նախօրօք. |
| Առօք փառօք. | Ծանօթ. | Նարօտ. |
| Արդեօք. | Ծղօտ | Նօթի, անօթի. |
| Արածնութիւն. | Կարծեօք. | Նօւր, անօւր. |
| Արտօւր. | Կարճառօտ. | Շօթ, շօթի. |
| Արօս. | Կարօտ. | Շօշափիլ. |
| Արօտ. | Կարօն. | Ոսկեղօծ. |
| Արօք. | Կրօն. | Պաշտօն. |
| Բօթ. | Կօշիկ. | Պարեգօտ. |
| Գործօն. | Համառօտ. | Պօշ. |
| Գօշել. | Հետադօտել. | Պօղոս. |
| Գօս. | Հօք. | Սօս, սօսի. |
| Գօտի. | Հօտ (ոչխարնների). | Սօսաւիւն. |
| Դրօշ. | Հօտաղ. | Սօսափիւն. |
| Եօթն. | Հօրոտ - մօրոտ. | Սօսիւն. |
| Զրօսանք. | Հօր, հօրու. | Վաղօրօք. |
| Զգօն. | Զօն. | Վառօք. |
| Զօդ. | Ղօղանջել. | Տօթ. |
| Զօշաքաղ. | Ղօղել. | Տօն. |
| Զօր, զօրք. | Ճօճ, ճօճել. | Տօսախ. |
| Թափօր, նաև թափոր. | Մոռացօնք. | Տօղ. |
| Թեղօշ. | Մօտ. | Գօղ, նաև քող. |
| Թնդանօթ. | Մօր, մօրու. | Գօշ. |
| Թօթափիւլ. | միամօր. | Օրօրան, նաև ուրբան. |
| | Մօր, մօրուտ. | |

55. Օտարազգի բառերի և անունների մէջ գրւում է ո տառը. օրինակ՝ Սոկրատ, Պլատոն, պրոֆեսոր:

Ը ձայնաւոր եւ Տողադարձ.

56. Բառի սկզբում և վերջում ը ձայնաւորը միշտ գրւում է, իսկ միջում սովորաբար չի գրւում: Օրինակ՝ գրում ենք ընծայ, ընկեր, ընտիր, ըղձալ, ըմբռնել, տունը, զիրքը բայց զրկանք, մտնել, երկնքի, թէպէտև արտասանում ենք՝ զըրկանք, միտնել, երկընքի:

57. Բառասկզբում սկ, սսլ, ստ, սք, սփ, սթ, շկ, շսլ, շտ, շք, շզ կապակցութիւններից առաջ կարճ ը է արտասանուում, բայց չի գրւում: Օրինակ՝ սկսել, սպասել, ստանալ, սքանչելի, սթափուել, զգաստ, զքաղուել արտասանում են ըսկսել, ըսպասել, ըզգաստ, ըզքաղուել ևլն:

58. Բառավերջի ը ձայնաւորը, երբ յաջորդ բառը ձայնաւորով է սկսուում, կամ սկ, սսլ, ստ ևլն կապակցութիւններով, սովորաբար փոխուում է ն բաղաձայնի: Օրինակ՝ եօթը մարդ, ինը տարի, տասը զրիչ, բայց եօթն անգամ, ինն ամիս, տասն աշակերտ. նոյնպէս զիրքը պատուեց, մարդը զնաց, բայց զիրքն ընկաւ, մարդն սպասում է:

59. Բառամիջում ը ձայնաւորը գրւում է.

1. Բարդ բառերի մէջ, երբ երկրորդ բաղադրիչ մասն սկսուում է ը-ով: Օրինակ՝ նորընծայ, նորընտիր, դասընկեր, նախընթաց, խոչընդոտն:

2. Ոտանաւորի մէջ՝ Օրինակ՝
Քեզ ըսպատող չը մընաց,
Ո՞րք ես գալի, այ՛ գարուն:

3. Վ հնչիւնով և տառից առաջ (§ 68), երբ ետևից բաղաձայն է գալիս: Օրինակ՝ ծըւծուալ, շըւշուալ, սըւսուալ, նըւնուալ և նմանները. նոյնպէս՝ Դըւնի (Դուին քաղաք), սըւնակ, սըւնակոթ (սուին բառից):

4. Տողադարձի ժամանակ թէ տողի վերջը մնացած և թէ տակի տողն անցած վանկերի մէջ՝ ինչպէս՝ գըր-կանք, մըտ-նել, կը-տըր-տել, տը-ղայ, գը-նալ, երկըն-քի, կամ եր-կընքի, քաղ-ցըր, քար-ճըր:

60. Տողադարձի ժամանակ պէտք է կանոնաւոր հեգել և ամըողջ վանկը կամ վերի տողում գրել, կամ տակի տողն անց կացնել: Միաժամակ բառերը կարելի չէ բաժանել:

Բաղմաժանկ բառերը կանոնաւոր հեգելու և տողադարձ անելու համար պիտի նկատի ունենալ:

1. Մի բաղաձայնը յաջորդ վանկին է անցնում: ա-սել, թա-գա-ւոր, նա-յել, գո-յա-կան, ե-րե-ւել:

Տողադարձի ժամանակ ե գրել կարելի չէ, այլ միայն եւ: Բարդ բառերը, աւելի երբ երկրորդ բաղադրիչն ը-ով է սկսում, երբեմն բաժանում են այսպէս՝ նոր-ընտիր, դաս-ընկեր, նախ-ընթաց, ազգ-օգուտ:

2. Երկու բաղաձայնից մէկը նախորդ վանկին է տրուում, միւսը յաջորդ վանկին է անցնում: ինչպէս՝ սլար-տիզ-սան, սաս-տիկ, գըտ-նել, փըր-կել, առ-նել:

3. Երեք բաղաձայնից երկուսը նախորդ վանկին

են տրուում, իսկ երրորդը յաջորդ վանկին է անցնում: ինչպէս՝ վարձ-կան, զարթ-նել, ընկ-ծել, տըրտ-մել:

4. Եթէ երկու բաղաձայնից երկրորդը և երեք բաղաձայնից երրորդը ը, ո, ղ, ն, մ՝ բաղաձայններից մէկն է, հեգելիս յաճախ նախորդ բաղաձայնն այդ հնչիւններից անբաժան է մնում: ինչպէս՝ մա-քրել, շաղա-կրատ, եր-կրորդ, կար-մըու-թիւն, քար-ճրութիւն, սլա-տոնել, աս-տղա-լից, եր-կնային. բայց սովորաբար բաժանուում են՝ մաք-րել, շաղակ-րատ, երկ-րորդ, կարմ-րու-թիւն, աստ-ղալից, երկ-նային: Կարելի չէ ը գրելով բաժանել մա-քըրել, եր-կընային:

5. Եթէ երկու բաղաձայնից երկրորդը վ-ահնչիւն ու է (§ 69), այս վ հնչիւնը հեգելիս նախորդ բաղաձայնից անբաժան է մնում. ուստի այդպիսի բառերը բաժանուում են՝ Աս-տուած, ա-սուել, խօ-սուել, և ոչ՝ Աստ-ուած, աս-ուել:

Աւոււմ է, խօսոււմ է ձևով գրելիս բաժանուում են սովորաբար՝ աս-ւում, խօս-ւում, բայց աստոււմ, խօտոււմ ձևերը բաժանում են՝ ա-սուում, խօ-սուում:

Բ, ռ բաղաձայնները հեգելիս այս դէպքում յաջորդ վ-ահնչիւն ու-ից բաժանուում են, բայց տողադարձի ժամանակ անբաժան են մնում: ինչպէս՝ վա ռուել, տա-րուել, տա-րուան:

6. Եթէ վ-ահնչիւն ու-ից առաջ արտասանուում է լի ը ձայնաւոր, ինչպէս՝ զուարթ, նուէր, գտնուել բառերի մէջ, տողադարձի ժամանակ, ինչպէս և ստանաւորի մէջ, գրում են ը ձևով զուարթ,

զը-ւարթ, նը-ւէր, գտնը-ւել, պատժը-ւել: Սովորաբար, սակայն, այսպիսի բառերը բաժանում են զըտ-նուել, պատ-ժուել, կազ-մնել ձևերով. իսկ երկավանկները՝ զըւարթ, նուէր, տուած կըն անբաժան են թողնում:

7. Բառասկզբի սկ, սպ, ստ կըն կապակցութիւնները սովորաբար անբաժան են մնում, բայց կարող են և բաժանուել. այս ժամանակ սկզբի ը հնչիւնը գրւում է: Օրինակ՝ ըզ-գաստ, ըզ-բաղունել:

Կարելի չէ բաժանել, երբ այսպիսի բառերը իբրև երկրորդ բաղադրիչ մաս մտնում են բարդ բառերի մէջ, և կամ երբ նախընթաց բառը ձայնաւորով է վերջանում. որովհետև այդ ժամանակ բառասկզբի ը հնչիւնը սղւում է, այսինքն գուրս է ընկնում: Օրինակ՝ քառա-սկիզբ, քառասկզբի, նա սպա-սում է, և ոչ քառաս-կիզբ, քառաս-կըզբից, նա ըս-պասում է: Իսկ երբ նախորդ բառը բաղաձայնով է վերջանում և աւելի՛ ն յօդով, որ արտասանութեամբ յաջորդ բառին է անցնում, այն ժամանակ միշտ կարելի է բաժանել և գրել ը: Օրինակ՝ մարդն ըս-պասում է:

61. Տողադարձի ժամանակ ը տառը չի գրւում, եթէ բարդ բառերի երկրորդ բաղադրիչ մասն ամբողջապէս տակի տողն է անցնում: Օրինակ՝ չարա-խնդաց, լեռնա-քնակ, ան-վնաս և ոչ չարա-խընդաց, լեռնա-ընակ, ան-վընաս:

2. Բաղաձայնների ուղղագրութիւն.

3.

62. Յ տառի բուն հնչիւնն է կիսաձայն լի, որ նախորդ և յաջորդ ձայնաւորների հետ կազմում է երկբարբառ (§§ 39, 40). բայց յ-ն իւր իսկական հնչիւնը պահում է միայն բառամիջում:

63. Բառասկզբում յ տառն այժմ արտասանւում է սովորաբար իբրև հ, ինչպէս յիշել, յարութիւն բառերի մէջ:

Գրաբարի յ-ով սկսուող բառերի մի մասն այժմ առանց յ-ի են գրւում սովորաբար, ինչպէս՝ ելուզակ, աւելադրութիւն, երասան: Կան բառեր ևս, որ անխտիր թէ յ-ով են գրւում և թէ առանց յ-ի, ինչպէս՝ յետ, ետ, յառաջ, առաջ:

Յ-ով սկսուող բառերը

| | | |
|-------------------|-----------------|------------------------|
| Յախճապակ. | յանդիմանել. | Յատել, էտել. |
| Յախուռն. | Յանդուզն. | Յատուկ, յատկութիւն. |
| Յածել. | Յանկարծ. | Յար, յարաժամ, յարատև. |
| Յականէ, յանուանէ. | Յանձն առնել. | Յարալէզ, Արալէզ. |
| Յակինթ. | յանձնել. | Յարակից. |
| Յաղթ, յաղթել. | յանձնաժողով. | Յարգել, յարգոյ, արգոյ. |
| Յաճախ. | Յանցանք. | Յարդ. |
| Յամառ. | Յապաղել. | Յարդարել. |
| Յամել. | Յապաւել. | Յարիլ. |
| Յամոյր. | Յաջող, աջող. | Յարկ, վերնա-յարկ. |
| Յամր, յամրաբայլ. | Յաջորդ. | |
| Յայնժամ. | Յառաջ, առաջ. | |
| Յայամաւուրք. | Յառել. | |
| Յայտ, յայտնի. | Յառնել, յարեաւ. | |
| Յանգ. | Յամիկ. | |
| Յանդիման. | Յատակ. | |

| | | |
|-------------------------|-------------------|----------------|
| Յարձակուելլ. | Յիսնակ, յիսուն. | Յովտակ. |
| Յարմար. | Յիրբաւի. | Յոտնկայս. |
| Յարութիւն, յարուցանելլ. | Յզանալ, յզի. | Յորդ. |
| Յարքունուստ. | Յզելլ. | Յորդոր. |
| Յաւելուած. | Յզկելլ. | Յործամ. |
| Յաւէտ, | Յզփանալ. | Յորձանք. |
| Յաւիտեան. | Յորելեան. | Յուլիս. |
| Յաւերժ. | Յոզն, յոզնակի. | Յուղարկաւորու- |
| Յափշտակելլ. | Յոզնելլ. | թիւն. |
| Յափրանալ. | Յոզոց հանել, գրր. | Յունիս. |
| Յեղաչըջելլ. | յոզուոց հանել. | Յունուար. |
| Յեղափոխու- | Յոլով, յոլովա- | Յուշիկ, ուշիկ, |
| թիւն. | բան. | յուշարձան. |
| Յեզելլ, յեզլեզուելլ. | Յոխորտալ. | Յուսութ. |
| Յեննելլ, յենարան. | Յողգողղ, անյողղ. | Յուրան. |
| Յետ, ետ. | Յոյզ, յուզելլ. | Յստակ, իստակ- |
| Յեօին. | Յոյժ. | Յօզ, յօզուած. |
| Յերբերելլ. | Յոյն. | Յօժար. |
| Յիմար. | Յոյս, Յուսիկ. | Յօնք, սևայօն. |
| Յինուներ. | Յոպալ. | Յօշտակ. |
| Յիշատակ, յիշելլ, | Յութ. | Յօրանջելլ. |
| յիշոց. | Յովազ. | Յօրինելլ: |

Յ-ով սկսուում են և շատ յատուկ անուններ. օրինակ՝ Յիսուս, Յակոբ, Յուդա, Յովսէփ, Յովհաննէս, Յովնան, Յուլիանէ և ին, որոնց մեծ մասը բարբառներէ մէջ առանց յ-ի են արտասանուում. Ակոր, Օսէփ, Օհան, Օվանէս և ին:

64. Բառավերջում, բայի մի քանի միավանկ բառերից, ինչպէս՝ հայ, քայ, վայ, նայ, մայ, խոյ, յ տառն այժմ անձայն է մնում, թէպէտ և միշտ գրուում է ա և ո ձայնաւորներից յետոյ: Օրինակ՝ ծառայ, քահանայ կը զայ, յետոյ, ներքոյ, ձուլածոյ, սիրոյ:

Ա և ո ձայնաւորներից յետոյ բառավերջում անձայն յ չունին.

1. Յատուկ անունները, օրինակ՝ Աննա, Սառա, Երեմիա, Եւրոպա:
Ո վերջացած յատուկ անունները սովորաբար յ ունին՝ Յարոյ, Մարոյ (§ 53):
2. Հրամայական եղանակի բառեր, օրինակ՝ (դու) կարդն, ասն, գնն:
3. Հետեւեալ բառերը՝ սա, դա, նա, սրա, դրա, նրա (սորա, դորա, նորա), սոքա, դոքա, նոքա, սոցա, դոցա, նոցա. իրա, քո, այո՛, հիմն, սալա, հալան, ահն, քն:

65. Բառամիջում իրար յաջորդող երկու ձայնաւորի մէջ, եթէ միասին երկբարբառ և մի վանկ չեն կազմում, միշտ արտասանուում է յ կիսաձայն որ կոչուում է ձայնակապ: Օրինակ՝ թի-ակ, ձի-ով, է-ակ, է-ով թիւն արտասանուում են իբրև թի-յակ, ձի-յով, է-յակ, է-յով թիւն:

Է և ի ձայնաւորներից յետոյ, թէպէտ և ձայնակապն արտասանուում է, բայց նրքնք չի գրուում. իսկ ա և ո ձայնաւորներից յետոյ միշտ գրուում է յ ձայնակապը, որ յաջորդ ձայնաւորի հետ կազմում է երկբարբառ: Ուստի ընդունուած են միայն հետեւեալ բաղադրութիւնները՝ էա, էէ, էի, էո, էօ, էու,—իա, իե, իէ, իի, իո, իօ, իու,—այա, այե, այէ, այը, այի, այո, այօ, այու,—ոյա, ոյե, ոյէ, ոյը, ոյո, ոյու. և երբեք հակառակը՝ էյա, էյէ, էյի և ին, կամ աա, աե, աէ, աի, ոա, ոի, ոէ և ին: Այսպէս գրուում են՝ մարգարէական, միութիւն, բայց նայելլ, երկնային, հրամայած:

Ե, օ, ը ձայնաւորներից յետոյ ոչ մի ձայնաւոր տառ և յ չի կարող ընկնել չհաշուած եա, եօ երկբարբառները: Ուստի սխալ են Մարօի, Յարօի, Մկօի կամ Մարօյի, Յարօյի, Մկօյի և նման գրութիւնները՝ փոխանակ Մարոյի, Յարոյի, Մկոյի ձևերի:

Ս. ձայնաւորին առանց ձայնակապի ուրիշ ձայնաւորներ յաջորդում են միայն ամեն բառով բարդուածների մէջ, ինչպէս՝ ամենաազնիւ, ամենաընտիր, ամենաօգտակար ևլն (§ 191):

Վ, Ի, ՈՒ.

66. Վ հնչիւնի համար տեղին նայելով գործ է ածուում վ, ւ, ու նշանագրերից մէկը:

67. Վ միշտ բաղաձայն է և գրուում է բառասկզբում և ո ձայնաւորից յետոյ. օրինակ՝ վազել, վազր, խռովել, ծով, վրդովմունք:

Բարդ բառերի մէջ երկրորդ բաղադրիչի բառասկզբի վ-ը մնում է. օրինակ՝ արագավազ, գրավածառ: Բարդ են և հետևեալ տեսակի բառերը՝ ծվվալ, թովալ, ծվվալ ևլն:

68. Ի տառը իւ երկբարբառի մէջ ու ձայնաւորի պաշտօն ունի, ինչպէս՝ իւր, հիւսիս. մնացած բոլոր դէպքերում բաղաձայն է վ հնչիւնով:

Ի վ հնչիւնով գրուում է ա, ե, ի, ը ձայնաւորներից յետոյ. օրինակ՝ հաւ, ցաւել, տերել, թիւ, հիւանդ, ծրլծուալ, սրլսուալ, զըլարթ, նըլէր (§§ 59, 3. 60, 6):

69. Ու նշանագիրը ձայնաւոր է բաղաձայնից

առաջ և բառավերջում. ինչպէս՝ ուր, ըուսնել, լեզու. իսկ ձայնաւորից առաջ բաղաձայն է վ հնչիւնով:

Ու վ հնչիւնով գրուում է բաղաձայնից յետոյ և ձայնաւորից առաջ. օրինակ՝ զըլարթ, նըլէր, յօղուած, ասուում է:

Երկու ուու գրելու փոխանակ գրում են աւելի ոււ, ինչպէս՝ ասուում է, տեսնում է, հովուութիւն: Կան նաև վու գրողներ՝ ասվում է, խօսվում է:

70. Օտարագրի անունների մէջ ևս վ հնչիւնը գրուում է հայերէն բառերի ձևով Երրոպա, Աւստրալիա, Կրիլով, Զուիցերիա, Շուեդիա:

Ու ձայնաւորից յետոյ եւ բառերի վերջում բաղաձայններից յետոյ վ հնչիւն չի ընկնում հայոց լեզուի մէջ. այդպիսի օտարագրի անունները գրուում են վ տառով, ինչպէս՝ Լուվր, Մերվ:

Ղ, Խ.

71. Ղ տառը բաղաձայններից առաջ սովորաբար հնչուում է իբրև իւ. ինչպէս աղջիկ, եղբայր, կեղտ, թուղթ արտասանում ենք՝ ախշիկ կամ ախժիկ, եխպայր, կեխտ, թուխթ կամ թուխտ:

Բաղաձայններից առաջ իւ տառը գրուում է միայն հետևեալ բառերի մէջ՝ ախտ (ցաւ), անխախտ, ապուխտ, քախտ (սխալ է բաղդ գրելը), դուխտ (միայն անունների մէջ՝ Սանդուխտ, Խոսրովիդուխտ), երախտիք, որից ապերախտ, գմիրուխտ, ժխտել, ուխտ (անել), պանդուխտ. վախժան (գրուում է նաև վաղժան):

Մնացած բոլոր բառերի մէջ բաղաձայններից առաջ գրուում է ղ, արտասանուելիս լինի իբրև ղ, թէ իւ: Օրինակ՝ ողջ, դաղձ, աղբատ ևլն:

Բաղադրեալ բառերի մէջ, երբ երկու բաղաձայնի միջեց մի ձայնաւոր է դուրս ընկնում, կամ երկու առանձին բաղադրիչ մասեր են միանում: Ին բաղաձայնը կարող է եւ ուրիշ բաղաձայններից առաջ ընկնել: օրինակ՝ փախ (փախուս) բառից կազմում է փախչել, վախ բառից՝ վախկոտ, քախիծ բառից՝ քախծութիւն: Այսպիսի բառերի ուղղագրութեան համար պիտի նկատի ունենալ պարզ ձեւերը:

Ռ, Ր.

72. Ռ և Ր տառերի հնչիւնները երբեմն բաղաձայններից առաջ շփոթւում են. Ր-ն արտասանւում է ռ-ի նման, ինչպէս վարդէ, արծիւ, արտ բառերի մէջ:

Մ բաղաձայնից առաջ գրւում է ռ, իսկ մնացած բաղաձայններից առաջ՝ Ր. օրինակ՝ դառնութիւն, լեռնական, առնէտ,—դարձ, լերդէ, արծաթ:

Բացառութիւն կազմում են՝ ուռկան, ուռձանալ, յուռթի, խուպոտ:

Աշխարհաբար և գրաբար բառերը գրւում են նաև աշխարհաբառ, գրաբառ:

Բաղադրեալ բառերի մէջ, երբ երկու բաղաձայնի միջեց մի ձայնաւոր է դուրս ընկնում, կամ երկու առանձին բաղադրիչ մասեր են միանում, ն-ից առաջ կարող է ռ ընկել, ինչպէս եւ միւս բաղաձայններից առաջ ո գալ: օրինակ՝ գար(ու)նային, վեր(ի)նասուն, առ(ի)քել, պառ(ի)կել կամ պառ(ա)կել, կառ(ւ), գուգուալ, ծովիզ:

73. Հետեւեալ տեսակի կրկնութեամբ կազմուած բառերի մէջ առաջին ռ-ն բաղաձայնից առաջ ընկնելով Ր-ի է փոխւում. ինչպէս՝ բարբառ, կարկառ, զրզիռ, մըմուռ, թրթռալ, կրկնալ:

Այս տեսակի բառերը, եթէ նմանաձայնութիւն են ցոյց տալիս, կարող են ռ-ով ևս գրուել, մանաւանդ երբ հարկաւոր է ձայնի սաստկութիւն ցոյց տալ. թռթռալ, նռնալ, մնմնալ:

74. Օտարագրի անունների և բառերի սկզբում, ինչպէս և ն բաղաձայնից առաջ, գրւում է ռ, իսկ մնացած բոլոր դէպքերում Ր: Օրինակ՝ Ռասիւն, Ռոքերտ, Ռիքարդէ, Կառնո, Կոռնէյլ, Շիլլեր, Սոկրատ, պրոֆեսոր, պրոգրամ:

Պ, Կ, Տ, Ծ.

75. Մ, մ, երբեմն և Ր հնչիւններից յետոյ պ, կ, տ, ծ, մ տառերը յաճախ արտասանւում են իբրև ք, գ, դ, ն, ջ. ինչպէս՝ ամպ, ընտիր, ընկնել, ընտանիք, հարկաւոր, մանժ բառերի մէջ:

Այսպիսի բառերի ուղղագրութիւնը միայն վարժութեամբ կարելի է սովորել:


Այս հնչափոխութիւնը ազդել է ուղղագրութեան վրայ, և կան բառեր, որ կրկին գրութեան ձեւեր ունին: Օրինակ՝ լամպար, դամբար. թանկ, թանգ, թանկագին, թանգագին, թանգարան. ժանգ, ժանկ. վանգ, վանկ. քանդ, քանտ. զունդ, զորագունդ, զունտ, զնտակ, երկրագունտ. ընծիւղ, ընծիւղ ևլն:

Բ, Գ, Դ, Զ, Զ.

76. Զայնաւորներից, այ, ոյ երկբարբառներից, Ր, ղ, երբեմն և ն, մ բաղաձայններից յետոյ եկող ք, գ, դ, ծ, ջ տառերը սովորաբար արտասանւում են իբրև փ, ք, թ, ց, չ կամ պ, կ, տ, ծ, մ. ինչպէս՝ ծագել, հոգի, որք, մարդ, արջ, փորձ, օձ, անգամ, համըրել, համբարձում, կենդանի, անդամ, մաղձ բառերի մէջ:

Այս հնչափութիւնը գրեթէ չի ազդել մեր ուղղագրութեան վրայ, և բառական մեծ է այդպիսի բառերի թիւը, սրոնց գրութիւնը համապատասխան չէ արտասանութեանը, և որ վարժութեամբ միայն պիտի սովորել: Սակաւաթիւ բառեր միայն կան, որ կրկին գրութեան ձևեր ունին, ինչպէս՝ ընդորել, խառնաընդորել, փնթորել, խառնափնթորել. քրդել, փրթել. ձգել, զցել (քցել): ղգալ, գղալ, քթալ. հէգ, հէք. թագուն, թաքուն. արձագանգ (արձագանք). օձտել, օցտել. թակարդ (թակարթ):

Արեւմտեան աշխարհաբարում, աւելի դպրոցական արտասանութեամբ, գրեթէ բոլոր դէպքերում պ, կ, ս, ծ, և տառերը հնչուում են արեւելեան աշխարհաբարի բ, գ, դ, ձ, ջ տառերին յատուկ հնչիւնների նման. իսկ բ, գ, դ, ձ, ջ տառերն արտասանուում են իբրև փ, ք, թ, յ: Այնպէս որ պաք, կամ, սար, ծառ, նար լուում են իբրև փաղ, գամ, դար, ձառ, ջար. իսկ բարի, գարի, դար, ձախ, ջուր իբրև փարի, քարի, քար, ցախ, ջուր:



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Բ Ա Ռ Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա Ռ Ա Ջ Ի Ն Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ

Բ Ա Ռ ԵՐ Ի Ի Մ Ա Ս Տ Ն Ե Ի Տ Ե Ս Ա Կ Ն ԵՐ Ը.

77. Ամեն բառ ունի մի նշանակութիւն կամ իմաստ, որ բառն արտասանելիս լսողներն իմանում, հասկանում են: Աննշանակ կամ անիմաստ վանկերը բառ չեն (§ 33):

78. Մի և նոյն բառը տեղին նայելով կարող է յաճախ մի քանի նշանակութիւն ունենալ կամ տարբեր տարբեր իմաստներով առնուել: Օրինակ՝ սիրտ բառը հետևեալ խօսքերի մէջ.

Այս մարդը սրտի (իսկական իմաստով) հիւանդութիւն ունի: Այս մարդը սիրտ (արամադրութիւն) չունի խօսելու: Նա սրտով (քաջ) մարդ է: Ով սիրտ (զգացմունքով է) ունի՝ ինքը կը հասկանայ: Մէկի սրտով (ցանկութեամբ) անել մի բան: Ոչոք սիրտ չէր անում՝ մօտենայ (չէր վստահանում): Սիրտս (նողիս) վիայեց թէ ...:

Բառերի տարբեր-տարբեր իմաստներով գործածութիւնը կոչուում է առմունք:

79 Նոյնանիւր ասուում են այն բառերը, որոնք գրութեամբ և արտասանութեամբ տարբեր են, բայց կատարելապէս նոյն իմաստն ունին: Օրինակ՝ գնալ, երթալ. մէկ, մի. շրթունք, պոռ. այտ, թուշ:

80. Համանիւր ասուում են այն բառերը, որոնք նշանակութեամբ իրար նման կամ մտիկ են և իմաստի նրբութեամբ ու գործածութեամբ միայն տարբերուում են միմեանցից: Օրինակ՝ քարկուծիւն, ցատում, սրտմտութիւն. զարմանալ, հիանալ, զմայլել, սքանչանալ:

81. Համանուն ասուում են այն բառերը, որոնք մի և նոյն ձևով գրուում և արտասանուում են, բայց նշանակութեամբ բոլորովին տարբեր են և իրար հետ որևէ կապ չունին: Օրինակ՝ այր նշանակում է թէ տղամարդ, կնոջ մարդ, էրիկ և թէ քարայր, քարանձաւ: Մայր նշանակում է թէ ծնող մայր և թէ մայր ծառ:

82. Բառերը նայելով խօսքի նկատմամբ կատարած պաշտօնին՝ չորս տեսակ են.

- Ա. Խօսք կազմող բառեր կամ բայ.
- Բ. Խօսք լրացնող բառեր կամ լրացում.
- Գ. Խօսքեր և լրացումներ կապող բառեր կամ զօղ.
- Դ. Խօսքից գուրս մնացող բառեր կամ ձայնաւորութիւն:

Ա. Բ Ա Յ.

83. Բայ բառը նշանակում է խօսք: Այսպէս կոչուում է բայը, որովհետեւ խօսքի էական մասն է կամ բուն խօսքը:

Ամենայն բայ մենակ կազմում է մի խօսք. օրինակ՝ գնացի, տեսաւ, եկար մի մի բայ և մի մի խօսք են, այսինքն մի մի մտածութիւն են յայտնում (§6):

Առանց բայի խօսք չկայ. օրինակ՝ այսօր հաց բառերը խօսք չեն կազմում. այսինքն մտածութիւն չեն յայտնում, այլ միայն հատ հատ գաղափարներ: Հարկաւոր է մի բայ, որ այդ բառերից խօսք կազմուի. օրինակ՝ Այսօր հաց գնեցի, կամ այսօր հաց թխեցին ևլն: Գնեցի, թխեցին բայերը մենակ ևս կազմում են մի մի խօսք:

Խօսքն, ուրեմն, իւր ամենապարզ ձևով կազմուած է մի բառից, որ է բայ:

Խօսքը մեծութեան արտայայտութիւնն է բայով: Բայ կոչուում են այն բառերը, որոնք մենակ խօսք են կազմում:

84. Ամենայն բայ մենակ մի խօսք է կազմում, որովհետեւ մի անգամից մի քանի գաղափար է միացած յայտնում. մինչդեռ միւս տեսակի բառերը մի անգամից մի գաղափար են միայն յայտնում:

Բայի ցոյց տուած գլխաւոր գաղափարներն են՝ բայական իմաստ կամ բայիմաստ, ղէմք և թիւ:

1. Բայիմաստ.

85. Բայիմաստը ցոյց է տալիս եղելութիւն, այսինքն՝

- 1. Անել, ինչպէս՝ Նա սիրտ արեց:

- 2. Լինել, ինչպէս՝ Լինում է, չի լինում մի թափաւոր: Աստուած կայ: Նա է:
- 3. Մի բան անել, ինչպէս՝ Պօղոսը զրեց:—Ի՞նչ արեց:—Գրեց:
- 4. Մի բան լինել, ինչպէս՝ Երեմիան մեծացաւ:—Ի՞նչ եղաւ:—Մեծացաւ:

2. Դէմք.

86. Մի բան անելու կամ լինելու համար հարկաւոր է մի առարկայ, անձն, կենդանի կամ իր, որ անէ կամ լինի:

Անող կամ եղող առարկայի գաղափարը կոչուում է դէմք:

Դէմք բառը նշանակում է անձն, մարդ:

87. Բայի դէմքը երեք տեսակ է.

1. Անող կամ եղող առարկան կարող է լինել ինքը խօսող անձը, որ կոչուում է առաջին դէմք. օրինակ՝ խօսողն ինքն իր համար ասում է՝ գնացի, եկայ, զարմացայ:

2. Անող կամ եղող առարկան կարող է լինել խօսակից անձը, որին խօսողը դիմում է, կամ դարձնում է իւր խօսքը, և որ կոչուում է երկրորդ դէմք. օրինակ՝ խօսողն իւր խօսակցի համար ասում է՝ գնացիր, եկար, զարմացար:

3. Անող կամ եղող առարկան կարող է լինել ոչ խօսողը եւ ոչ խօսակիցը, այլ մի ուրիշ առարկայ, որ և կոչուում երրորդ դէմք: Օրինակ՝ գնաց, եկաւ, զարմացաւ ասում է խօսողն ոչ իրեն և ոչ իր խօսակցի համար, այլ մի ուրիշ մարդու կամ բանի համար:

3. Թիւ.

88. Ամենայն բայ դէմքի հետ ցոյց է տալիս և դէմքի թիւը, այսինքն անող կամ եղող առարկան մի հատ է, թէ՛ շատուոր են. Օրինակ՝ գնացի բայը լսելով իսկոյն իմանում ենք ոչ միայն, որ դնացողն առաջին դէմքն է, այլ և որ նա մի հոգի է, ինքն իրեն համար է միայն խօսում: Իսկ գնացինք բայով իմանում ենք, որ խօսողը մենակ իրեն համար չէ ասում, այլ իւր հետ և ուրիշ մէկի կամ մի քանիսի համար:

89. Դէմքի թիւը երկու տեսակ է՝ եզակի և յոգնակի:

Եթէ դէմքը մի առարկայ է ցոյց տալիս, բայը եզակի է. իսկ եթէ մէկից աւելի առարկայ է ցոյց տալիս, բայը յոգնակի է:

Եզակի բառը կազմուած է եզ բառից, որ նշանակում է մէկ. իսկ յոգնակի բառը կազմուած է յոգն բառից, որ նշանակում է շատ:

90. Բայ կոչուում են այն բառերը, որոնք մենակ խօսք են կազմում, որովհետև մի անգամից մի բառով յայտնում են երեք գաղափար՝ բայիմաստ, դէմք և դէմքի թիւ:

Որպէս զի մի բառ բայ լինի և խօսք կազմի, հարկաւոր է, որ այս երեք գաղափարն ևս միացած յայտնի: Մի բառի մէջ կարող է այդ գաղափարներից մէկը կամ միւսը լինել, բայց բառը դեռ բայ չի լինիլ: Օրինակ՝ գնալ, դրած բառերը ցոյց են տալիս բայիմաստ, այսինքն եղելութիւն, բայց բայ չեն և խօսք չեն կազմում, որովհետև միաժամանակ և դէմք ու դէմքի թիւ չեն ցոյց տալիս: Նոյնպէս ես, դու, նա. մենք, դուք, նրանք բառերը դէմք և դէմքի թիւ ցոյց են տալիս,—ես ասում է առաջին դէմքը, խօսողը մենակ իւր համար. մենք իւր համար, իւր հետ և ուրիշների համար. դու ասում է մենակ խօսակցի համար ելն,—բայց այդ բառերը բայ չեն, որովհետև բայիմաստ չունին:

Ասացուածի վերլուծութիւն

91. Վերլուծել մի ասացուած նշանակում է որոշել ասացուածի մասերը, այսինքն թէ ասացուածի մէջ քանի խօսք կայ (§ 7, 8):

Ասացուածը պարզ է, երբ մի խօսքից է կազմուած. ասացուածը բարդ կամ բաղադրեալ է, երբ երկու կամ աւելի խօսքից է կազմուած:

Խօսքն իմացուում է բայից. քանի բայ կայ ասացուածի մէջ, այնքան էլ խօսք կայ: Ասացուածի մասերը որոշելու համար, ուրեմն, պէտք է որոշել բայերը:

Վերլուծութեան օրինակներ.

Ա. Ամեն ամպելիս ձիւն չի գար Մի ասացուած, կազմուած մի խօսքից. բայ՝ չի գար:

Բ. Մինչեւ աղն եկաւ, մատաղը մէջտեղից վերացաւ: Մի ասացուած, կազմուած երկու խօսքից:

- 1-ին խօսք. Մինչեւ աղն եկաւ. բայ՝ եկաւ:
- 2-րդ խօսք. Մատաղը մէջտեղից վերացաւ. բայ՝ վերացաւ:

Գ. Վաղի առակ է, թէ դեւը դարբնոց չէր գնում, զվսին տալով տարան. Մի ասացուած, կազմուած երեք խօսքից:

- 1-ին խօսք. Վաղի առակ է. բայ՝ է:
- 2-րդ խօսք. Թէ դեւը դարբնոց չէր գնում, բայ՝ չէր գնում:
- 3-րդ խօսք. Գլխին տալով տարան. բայ՝ տարան:

Բ. ԼՐԱՅՈՒՄ.

92. Լրացում ասում են այն բառերը, որոնք որեւէ կողմից պարզում, ամբողջացնում են խօսքը: Օրինակ՝ Տիգրանն այսօր զնաց դպրոց խօսքի մէջ Տիգրանն, այսօր, դպրոց բառերը պարզում են զնաց խօսքը, թէ ՚վ զնաց, երբ զնաց, ուր զնաց:

93. Լրացումները նայելով խօսքի մէջ կատարած պաշտօնին՝ լինում են.

- 1. Բայի լրացումներ, որոնք պարզում են բայի ցոյց տուած գաղափարները.
- 2. Լրացման լրացումներ, որոնք պարզում են բայի լրացումների իմաստը:

94. Բայի լրացումները նայելով թէ բայի ցոյց տուած որ գաղափարն են պարզում, լինում են ննթակայ և ինդիք:

1, Ենթակայ ասում են այն լրացումները, որոնք գրուելով բայի հետ՝ պարզում, որոշում են բայի դէմքը: Օրինակ՝ զնաց բայը որ լսում ենք, իմանում ենք, որ մի երրորդ դէմքի առարկայ կայ, որ կատարում է գնալու գործողութիւնը. բայց այդ առարկան շատ անորոշ է մնում. չի իմացուում, թէ ով է կամ ինչ է: Իսկ երբ ասում ենք՝ Տիգրանը զնաց, Տիգրանը բառը լրացնում է բայի դէմքը, և մենք իմանում ենք, թէ ով է զնացողը: Տիգրան լրացումը զնաց բայի ենթական է:

Կան խօսքեր, որոնց բայի դէմքը ոչ մի բառով չի լրացում և չի կարող լրացուել: Այսպիսի խօսքերը կոչւում են անենթակայ խօսքեր: Օրինակ՝ Լուսացաւ, Որտում է, Այստեղ լաւ նստում է, Ուղտը զգալով չեն ջրի:

2, Խնդիր ասուում են այն լրացումները, որոնք գրուելով բայի հետ՝ որևէ կողմից պարզում, որչում են բայիմասք: Օրինակ՝ Տիգրանն այսօր դպրոցում տեսաւ Արտաշէսին խօսքի մէջ այսօր, դպրոցում, Արտաշէսին բառերը լրացնում են տեսաւ բայի իմաստը: Այսօր ցոյց է տալիս, թէ նրը տեսաւ. դպրոցում ցոյց է տալիս, թէ նր տեսաւ. Արտաշէսին որչում է, թէ նր տեսաւ.

95. Լրացման լրացումները նոյնպէս լինում են խնդիր, և ոչ ենթակայ, որովհետև բայի լրացում չեն, ուստի և չեն կարող բայի գէմքի լրացում լինել: Լրացման լրացումները պարզում են կամ ենթակայի, կամ բայի խնդիրների իմաստը: Օրինակ՝ Տիգրանը տեսաւ իւր ընկերին խօսքի մէջ ընկերին բառն որչում է տեսաւ բայի իմաստը՝ թէ նր տեսաւ. իսկ իւր բառն որչում է ընկերին բառի իմաստը՝ թէ նր ընկերին տեսաւ:

Լրացման լրացումները կոչուում են կողմնակի խնդիր, որովհետև անմիջապէս չեն լրացնում բայի ցոյց տուած գաղափարները:

Կողմնակի խնդիրներն ևս իրենց կողմից կարող են լրացումներ ունենալ ևլն: Օրինակ՝ Տիգրանը տեսաւ իւր նոքոր ընկերին խօսքի մէջ ընկերին բառը լրացնում է անմիջապէս բայի իմաստը. նոքոր որչում է ընկերին խնդրի իմաստը, իսկ իւր որչում է նոքոր կողմնակի խնդրի իմաստը:

96. Բայը ըուն խօսքն է կամ խօսքի էական մասը. իսկ լրացումները՝ ենթակայ, խնդիրներ և կողմնակի խնդիրներ, բայի նկատմամբ խօսքի երկրորդական մասերն են:

97. Վերլուծել մի խօսք նշանակում է որոշել խօսքի մասերը, այսինքն բայ, ենթակայ և խնդիրներ, ենթակայի և խնդիրների հետ անուում են և իրենց կողմնակի խնդիրները, որոնք անբաժան են իրենց խնդրաուից, այսինքն այն բառից, որի խնդիրն են: Կողմնակի խնդիրները սովորաբար իրենց խնդրաուից առաջ են գրում:

Վերլուծութեան օրինակներ.

- Ա. Ազուան ազուաի աչք չի հանիլ
 Ազուան ենթակայ.
 ազուաի աչք խնդիր.
 չի հանիլ բայ:
- Բ. Ջրաղացից եկողի երեսն ալիւրոտ կը լինի
 Ջրաղացից եկողի երեսն ենթակայ.
 ալիւրոտ խնդիր.
 կը լինի բայ:
- Գ. Ս.մեն մարդ կրակն իր բաղարջի տակ կը քաշէ
 Ս.մեն մարդ ենթակայ.
 կրակն խնդիր.
 իր բաղարջի տակ խնդիր.
 կը քաշէ բայ:
- Դ. Տանձը ծառի տակից հեռու չի ընկնիլ
 Տանձը ենթակայ.
 ծառի տակից հեռու խնդիր.
 չի ընկնիլ բայ:
- Ե. ձտերն աշնանը կը համարեն
 ձտերն խնդիր.
 աշնանը խնդիր.
 կը համարեն բայ, անենթակայ:

ա. ԳՈՑԱԿԱՆ.

98. Լրացումները նայելով իրենց իմաստին՝ երկու տեսակ են, գոյական և ածական:

99. Գոյական բառը կազմուած է գոյ բառից, որ նշանակում է՝ ամեն ինչ որ կայ, բնութեան մէջ անկախ գոյութիւն ունի. կամ մենք մտածում ենք, թէ անկախ գոյութիւն ունի, լինի մարդ, կենդանի, թէ մի ուրիշ բան: Գոյական նշանակում է, ուրեմն, գոյի կամ գոյակի վերաբերեալ:

Գոյական ասում են այն բառերը, որոնք ցոյց են տալիս անկախ կամ իբրև անկախ մտածուած առարկաներ. օրինակ՝ մարդ, առիւծ, լեռ, քար, ըոց, լաւութիւն, տանջանք, տարի, կողմ, առաջ, ետեւ, վրայ, տակ, ներս, դուրս:

100. Բնութեան մէջ անկախ գոյութիւն ունեցող առարկաները կոչւում են բանձրացական կամ ֆիզիկական առարկաներ. դրանք նիւթական գոյակներ են և ընկնում են մեր զգայարանների տակ. ինչպէս՝ մի, գետ, գիրք:

Իսկ այն առարկաները, որ նիւթական չեն և բնութեան մէջ անկախ գոյութիւն չունին, այլ միայն մենք մտածում ենք իբրև անկախ գոյութիւն ունեցող բաներ, կոչւում են վերացական առարկաներ: Վերացական առարկաները լինում են իբրև անկախ մտածուած յատկութիւններ, եղելութիւններ, գրութիւններ եւն: Օրինակ՝ քաջութիւն, առողջութիւն, տանջանք՝ փառք, ընծացք:

101. Գոյականները նայելով իրենց իմաստին՝ երկու տեսակ են, անուն և դերանուն:

1. Ա. Ն. ՈՒ Ն.

102. Անուն ասում են այն գոյականները, որոնք գրւում են առարկաներին. օրինակ՝ Արտաշէս, թագաւոր, տարի, զնացք:

103. Անունները լինում են՝ յատուկ անուն, հասարակ անուն, քայանուն, անորոշ անուն և հարցական անուն:

104. Յասուկ կոչւում են այն անունները, որոնք ցոյց են տալիս մի որոշ անհատ, միայն մի հատ առարկայ առանձին վերցրած. օրինակ՝ Էջմիածին, Երեւան, Երուանդ (§ 16. 2):

105. Հասարակ կոչւում են այն անունները, որոնք կարող են գրւել նոյն տեսակի բոլոր առարկաներին: Օրինակ՝ Երասխ և գետ անուններից Երասխ յատուկ անուն է, իսկ գետ հասարակ անուն: Երասխ կոչւում է միայն մի հատ որոշ գետ, գետերից մէկն առանձին վերցրած. իսկ գետ կարող են կոչւել թէ բոլոր նոյն տեսակի գնացկան ջրերը և թէ նրանցից մէկը, այս ինչ կամ այն ինչ գետը: Երասխը գետ է, բայց ամեն գետ Երասխ չէ կոչւում:

Այսպէս հասարակ անուն են՝ վանք, լեռ, աշխարհ, թագաւոր, զօրավար, իսկ Էջմիածին, Մասիս, Հայաստան, Տիրան, Վարդան յատուկ անուն են:

106. Բայանուն կամ անորոշ դերբայ ասում են այն անունները, որոնք ցոյց են տալիս բայիմաստ, այսինքն եղելութիւն, բայց առանց դէմքի (§ 85): Օրինակ՝ զնալ, ասել, գրել, կարդալ եւն:

Անորոշ դերբայը բայի անունն է, ուստի բայերի մասին խօսելիս սովորաբար անորոշ դերբայն է ասում:

107. Անորոշ ասուում են այն անունները, որոնք ցոյց են տալիս անձեր կամ իրեր շատ տարտամ եւ ընդհանուր ձևով՝ յայտնելով միայն առարկայի մարդ կամ իր լինելը, բայց առանց որոշելու ինչ մարդ կամ ինչ բան լինելը:

Անորոշ անուններն են՝ մարդ, ոմն, որ, ոչոր, բան, ինչ, ինչինչ, ոչինչ, որմին (արտասանուում է օրմին), իք, իքմին, ոչով (արտասանուում է օչով):

Որմին, իք, իքմին, ոչով աւելի ժողովրդական լեզուի մէջ են գործածական:

Մարդ հասարակ անուն է իբրև մարդ տեսակի անուն, երբ մարդկային ազգի, կամ մարդկային ազգից մի անհատի համար է գործածուում. օրինակ՝ Աստուած մարդ ստեղծեց, Մարդը բանական կենդանի է, Մարդս մահկանացու է, ես մարդ եմ ասում եւ ոչ անասուն. Մարդ անորոշ անուն է, երբ տեղը կարող են գրուել ուրիշ համապատասխան անորոշ անուններ, կամ կարելի է խօսքը որեէ անորոշ ձևով շուռ տալ: Օրինակ՝ մարդ է գալիս կամ Որմին գալիս է, Տանը մարդ չկայ կամ Տանը ոչոր չկայ, Մարդ չի իմանում, Թէ ինչ պէտք է անել կամ Զէ իմացուում, Թէ ինչ պէտք է անել, Մարդ ուտում է, ուտում, չի կշտանում, կամ Ուտում ես, ուտում, չես կշտանում, Մարդ մինչեւ շանը չծեծի, հետը չի բարեկամանալ, կամ Մինչեւ շանը չծեծես, հետդ չի բարեկամանալ:

108. Հարցական ասուում են այն անունները, որոնք գործ են ածուում ոչ թէ խօսքի միտքը լրացնելու համար, այս խօսողի համար անձանօթ լրացումը հարցնելու համար, որ որոշուում է պատասխանի մէջ մի գոյականով:

Հարցական անուններն իմաստով անորոշ անուն են:

Հարցական անուններն են՝ ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, ե՞րբ:

Ո՞վ գործ է ածուում անձի անուն հարցնելու համար

իբրև ի՞նչ մարդ, ո՞ր անձը. օրինակ՝ Ո՞վ գնաց: — Տիգրանը, աշակերտը:

Ի՞նչ գործ է ածուում թէ անձի և թէ իրի անուն հարցնելու համար իբրև ի՞նչ բան: Օրինակ՝ Մա ի՞նչ ընրեց: — Գիրք, թուղթ: Մա քո ի՞նչն է: — Մա իմ եղբայրն է:

Ո՞ւր գործ է ածուում տեղ ցոյց տուող կամ տեղի անուն հարցնելու համար իբրև ո՞ր տեղ, ի՞նչ տեղ: Օրինակ՝ Մա ո՞ւր գնաց: — Բաղաք, գիւղ, դուրս, ներս, վերել, ներքել ևլն:

Ե՞րբ գործ է ածուում ժամանակ ցոյց տուող կամ ժամանակի անուն հարցնելու համար իբրև ո՞ր ժամանակ, ի՞նչ ժամանակ: Օրինակ՝ Մա ե՞րբ գնաց: — Այժմ, յետոյ, առաջ, երեկ, այսօր, այս շաբաթ, կէսօրին, գիշերը ևլն:

109. Հարցական անունները՝ ով, ինչ, ուր, երբ գործածուելով առանց հարցման՝ ստանում են յարաբերական կամ շաղկապական անորոշ անուան իմաստ և գրուելով բարդ ասացուածի մէջ մի խօսքի սկզբում՝ այդ խօսքը կապում են մի ուրիշ խօսքի հետ: Յարաբերական անունով սկսուած խօսքը կոչուում է երկրորդական յարաբերական խօսք, իսկ միւսը՝ գլխավոր խօսք: Օրինակ՝ Ով տեսա՛ զարմացաւ: Ինչ անում է՝ թող անի: Ուր կուզես՝ գնա՛: Երբ ասես՝ կը գամ՝:

Յարաբերական անորոշ անունների ետևից միշտ կարող է գրուել որ բառ, որ կոչուում է Թարմատար շաղկապ, այսինքն՝ աւելորդ շաղկապ, որ կարելի է և չդնել: Օրինակ՝ վերել խօսքերը կարելի է ասել. Ով որ տեսա՛ զարմացաւ: Ինչ որ անում է՝ թող անի: Ուր որ կուզես՝ գնա՛: Երբ որ ասես՝ կը գամ:

110. Հարցական անուններից երեքը՝ ով որ, ինչ որ, ուր որ ձևով երբեմն գործ են անում իբրև անորոշ անուն: Օրինակ՝ Ով որ գալիս է: Նա ինչ որ ասաց, քայց ես չհասկացայ: Նա ուր որ գնացել է, — այսինքն մարդ է գալիս կամ որմին գալիս է: Նա մի քան ասաց...: Նա (մի) տեղ է գնացել:

Ով որ, ինչ որ, ուր որ բառերի այս գործածությունը ընդհանուր ընդունում է և ընտիր չի համարում:

2. ԳԵՐԱՆՈՒՆ.

111. Գերանուն բառը կազմում է դիր, որ նշանակում է փոխանակ, և անուն բառերից: Գերանուն նշանակում է անուն փոխանակ գրուող:

Գերանուն ասում են այն բառերը, որոնք գրվում են անունների տեղ: Օրինակ՝ խօսող անձն իւր անուն տեղ գնում է նս, խօսակցի անուն տեղ դու, իսկ երրորդ դէմքի անուն տեղ՝ նա:

112. Անունների և գերանունների էական տարբերությունն այն է, որ անունները հաստատուն, անփոփոխ նշանակություն ունին, իսկ գերանունները հաստատուն նշանակություն չունին, այլ ամեն անգամ նայելով ինչ անուն տեղ են գրում՝ նրա նշանակությունն էլ ստանում են: Օրինակ՝ Մեծն Տիգրանն աշխարհակալ թագաւոր էր. նա տիրել էր շատ երկիրների. քայց Ալեքսանդր Մակեդոնացին աւելի եւս մեծ աշխարհակալ էր, որովհետեւ նա աւելի շատ երկիրների էր տիրել: Այս ասացումը մէջ առաջին նա

գերանունը գրում է Մեծն Տիգրան անուն տեղ, իսկ երկրորդը՝ Ալեքսանդր Մակեդոնացի անուն տեղ:

Գերանունները գործ են անում մի անգամ արդէն ասած, կամ յայտնի, ծանօթ անունները չհրկնելու համար. քայց միշտ այնպէս, որ գերանուն նշանակությունը ճիշտ և հեշտ հասկացուի, այսինքն իսկոյն իմացուի, թէ որ գերանունը որ անուն տեղ է գրում. թէ չէ՝ մթնութիւն և ծանրութիւն առաջ կը գայ:

113. Գերանունները լինում են անձնական, ցուցական, փոխադարձ և յարաբերական:

Անձնական գերանունները գրում են բայի դէմքի քայման, այսինքն ենթակայի անուն տեղ. եզակի առաջին դէմքի համար՝ ես, ինքս. յոգնակի՝ մենք, ինքներս. եզակի երկրորդ դէմքի համար՝ դու, ինքդ. յոգնակի՝ դուք, ինքներդ. եզակի երրորդ դէմքի համար՝ նա, ինքը. յոգնակի՝ նրանք, իրենք:

114. Ցուցական գերանունները՝ սա, դա, նա, այս, այդ, այն՝ գրում են մի անուն տեղ, երբ առարկան ցոյց է տրւում, կամ մտքով ակնարկում է:

Խօսողն աչքով, գլխով կամ ձեռքով ցոյց է տալիս մի առարկայ և առարկայի անուն տեղ ասում է մի ցուցական գերանուն: Երբ առարկան առաջին դէմքին մօտ է, կամ մօտ է մտածում, գրում է սա, այս. երբ երկրորդ դէմքին մօտ է, կամ մօտ է մտածում, գրում է դա, այդ. իսկ երբ առարկան առաջին և երկրորդ դէմքից էլ հեռու է, կամ հեռու է մտածում, գրում է նա, այն:

Ցուցական գերանունները կարող են գրուել և մի ամբողջ խօսքի տեղ, որից ստանում են իրենց իմաստը: Օրինակ՝ Ով որ վրանայ, նա շուտ ջրանայ. Աչքն ինչ տեսնի, այն կանի ասացումներն են: Այս ցուցական գերանուններն ակնարկում

են ով որ փրանայ, այքն ինչ տեսնի խօսքերի իմաստին և նրանցից են ստանում իրենց նշանակութիւնը:

Նա իսկապէս ցուցական դերանուն է, բայց յաճախ կորցնելով իւր ցուցական իմաստը՝ գործ է ածուում իբրև երրորդ դէմքի անձնական դերանուն. օրինակ՝ Գնացի եղբորս մօտ եւ տեսայ, որ նա տանը չէր:

115. Փոխադարձ առում են այն դերանունները, որոնք դրուում են խօսքի մէջ եղած երկու կամ աւելի անունների տեղ և բայի իմաստն այնպէս են արտայայտում, որ թէ մէկ և թէ միւս առարկայի համար է հասկացուում: Օրինակ՝ Գաղն ու կոյրն իրար օգնեցին խօսքի մէջ իրար դերանունը դրուած է թէ կաղի և թէ կոյրի տեղ, և հասկացուում է՝ թէ կաղը կոյրին օգնեց և թէ կոյրը կաղին օգնեց:

Փոխադարձ դերանուններն են՝ միմեանց, իրար, մէկմէկու: Երբեմն նոյն իմաստով գործ է ածուում և մէկը միւսի:

116. Յարաբերական կամ շաղկապական կոչւում է որ դերանունը, որ բարդ ասացուածի մէջ դրուելով մի խօսքի սկզբում՝ այդ խօսքը կապում է մի ուրիշ խօսքի հետ: Յարաբերական դերանունով սկսուած խօսքը կոչւում է երկրորդական յարաբերական խօսք, իսկ միւսը՝ գլխաւոր խօսք:

Յարաբերական դերանունը դրուում է գլխաւոր խօսքի մէջ եղած մի անուան, կամ դերանուան տեղ, որ կոչւում յարաբերեալ: Օրինակ՝ Եղբայրս, որ գնացել էր զիւղը, վերադարձաւ: Մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ, եկ անվախ ելնենք թշնամու առաջ, ասացուածների մէջ եղբայրս, մենք յարաբերեալ են որ յարաբերականի:

Յարաբերական դերանունը երբեմն դրուում է ոչ թէ գլխաւոր խօսքի մէջ եղած մի անուան, կամ դերանուան տեղ, այլ ամբողջ գլխաւոր խօսքի տեղ, որից և ստանում է իւր նշանակութիւնը: Օրինակ՝ Կրանք միասին զիւրի մէջ այբուրենը ընդհանրացրին, որ եւ եղաւ նրանց մեծ պարծանքը:

117. Յարաբերական դերանուան իմաստով գործ են ածուում նաև ով, ինչ, ուր, երբ յարաբերական անորոշ անունները (§ 109), երբ դրուում են գլխաւոր խօսքի մէջ եղած մի անուան տեղ: Օրինակ՝ Երեսան քաղաքը, ուր ես ապրում եմ, Հրազդան գետի վրայ է: Սեւ լինէր այն օրը, երբ ես ծնուեցայ: Տէր ես խօսքիդ, ինչ որ ասել ես: Այս ասացուածների մէջ ուր, երբ, ինչ որ բառերը յարաբերական դերանուն են, և յարաբերեալներն են՝ քաղաքը, օրը, խօսքիդ:

Ով, ինչ, ուր, երբ յարաբերական անորոշ անուն են, երբ ընդհանուր անորոշ իմաստ ունին և չեն դրուում մի անուան տեղ, մինչգետ նոյն բառերը իբրև յարաբերական դերանուն որոշ իմաստ ունին, որովհետև դրուում են մի անուան տեղ:

Շատ քերականներ անորոշ, հարցական եւ յարաբերական անունները (§§ 107—109) դնում են միշտ իբրև անորոշ, հարցական եւ յարաբերական դերանուն:



118. Ածական բառը կազմուած է ած-ել բառից, որ նշանակում է բերել, վրան դնել, Ածական նշանակում է ուրեմն վրան դրուող, վերադրական.

Ածական կոչում են այն բառերը, որոնք գրւում են ուրիշ բառերի վրայ:

Ածականները ցոյց են տալիս այնպիսի գաղափարներ, որոնք անկախ գոյութիւն չունին, կամ իբրև անկախ գոյութիւն ունեցող չեն մտածուում (§ 99), այլ միշտ կախուած կամ կապուած որևէ ուրիշ գաղափարից: Օրինակ՝ սպիտակ, լաւ, շատ բառերի ցոյց տուած գաղափարները կախուած են միշտ որևէ ուրիշ բանից, ինչպէս՝ սպիտակ ձիւն, սպիտակ ներկ, սպիտակ ներկել, լաւ մարդ, լաւ խօսել ելն:

119. Ածականների ցոյց տուած գաղափարները նայելով խօսքի մէջ կատարած պաշտօնին՝ մտածուում են անուան, բայիմաստի և ածականի հետ կապուած. ուստի և ածականները լինում են՝ մականուն, մակբայ և մակածական: Օրինակ՝ Նա խիստ մարդ է: Նա խիստ է խօսում: Նա խիստ գեղեցիկ է: Առաջին խօսքի մէջ խիստ ածականը մականուն է՝ գրուած լինելով մարդ անուան վրայ. երկրորդ խօսքի մէջ խիստ մակբայ է՝ գրուած լինելով խօսում է բայի վրայ. իսկ երրորդ խօսքի մէջ խիստ մակածական է՝ գրուած լինելով գեղեցիկ ածականի վրայ:

Մակ նշանակում է վրայ. մականուն նշանակում է ուրեմն անուան վրայ դրուող. մակբայ՝ բայի կամ դերբայի վրայ դրուող. մակածական՝ ածականի վրայ դրուող:

Ածական ցոյց տուած գաղափարներ որոնք անկախ գոյութիւն չունին, կամ իբրև անկախ գոյութիւն ունեցող չեն մտածուում, այլ միշտ կախուած կամ կապուած որևէ ուրիշ գաղափարից:

120. Մականուն ասում են ածականները, երբ նրանց ցոյց տուած գաղափարը մտածուում է անուան հետ կապուած:

Մականունները գրուելով անուան վրայ՝ իբրև ինդիք որոշում, լրացնում են անուան իմաստը: Օրինակ՝ կլոր սեղան, փայտե սեղան, սեւ սեղան, երկու սեղան կապակցութիւնների մէջ կլոր, փայտե, սեւ, երկու բառերը որոշում են սեղանի ձեւը, նիւթը, որից շինուած է, գոյնը, թիւը:

121. Մականունները նայելով իրենց իմաստին լինում են՝ որակական, քանակական, դասական, ցուցական, քայածական, անորոշ, հարցական և յօդեր:

122. Որակական մականունները ցոյց են տալիս որակ, այսինքն՝ յատկութիւն, որպիսութիւն կամ ինչպիսի լինելը: Օրինակ՝ ըստի հայր, մեծ գիրք, կապոյտ ներկ:

123. Քանակական մականունները ցոյց են տալիս թիւ ու համարը կամ քանակ, այսինքն՝ քանի կամ որքան լինելը: Օրինակ՝ մի գրիչ, երկու սեղան, կէս տարի, քսոտոր դար, երկիցս անգամ:

124. Դասական մականունները ցոյց են տալիս դասաւորութիւն, այսինքն թէ որոշ շարքի մէջ քանի-երորդ կամ որ տեղն է բռնում առարկան: Օրինակ՝ առաջին տարի, երկրորդ սեղան, երրորդ դասարան, չորրորդ աշակերտ ելն:

Քանակական և դասական մականունները մի ընդհանուր անունով կոչում են բուական անուն:

125. Յուցական մականունները՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, մի եւ նոյն, միւս, մեկէլ որոշում են անունը՝ վրան աւելացնելով մատով ցոյց տալու կամ մտքով ակնարկելու գաղափար: Օրինակ՝ երբ ասում ենք՝ այս սեղանը, այդ սեղանը, ձեռով ցոյց ենք տալիս մի սեղան: Իսկ երբ ասում ենք՝ Հին ժամանակ մի թագաւոր կար. այս թագաւորն ունէր մի որդի, այս բառով ակնարկում ենք վերեւում յիշուած թագաւորին: Այս, այդ, այն ստանում են այս դէպքում վերոյիշեալ կամ ներքեւում յիշուած բառերի իմաստը:

Սոյն, դոյն, նոյն բառերը յուցական իմաստի հետ նշանակում են և նոյնութեան, այսինքն ոչ ուրիշ, ոչ տարբեր լինելու գաղափար:

Միւս, մեկէլ ցոյց են տալիս երկու ծանօթ առարկաներից երկրորդը. յաջորդը, մնացած մէկը. Օրինակ՝ Այս գրիչը լաւ է գնա, միւս գրիչը բնր, այսինքն՝ գնա այն մի գրիչը բեր:

Յուցական մականունները՝ այս, այդ, այն չպիտի շփոթել յուցական այս, այդ, այն դերանունների հետ: Գերանուններն իբրև գոյական մենակ են բանում՝ գրուելով մի անուան (երբեմն և խօսքի) տեղ, որից և ստանում են իրենց իմաստը. իսկ մականուններն իբրև ածական մենակ չեն բանում և միշտ մի անուան վրայ են գրւում:

126. Յուցական մականունների մէջ են գրւում նաև հետևեալները.

1. Յուցական-որակական մականուններ՝ այսպէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի, որոնք մի յուցական մականունից և պէս անունից են կազմուած իբրև այս տեսակ, այդ տեսակ, այն տեսակ, նոյն տեսակ կամ այս կերպ, այդ կերպ, նոյն կերպ. այս տեսակի, այդ տեսակի, այն տեսակի, նոյն տեսակի. այս կերպի, այդ կերպի, այն կերպի և ըն:

2. Յուցական-բանական մականուններ՝ այսքան, այդքան, այնքան, նոյնքան. այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ, որոնք մի յուցական մականունից և չափ, քան (քանակ) անուններից են կազմուած իբրև այս չափով, այդ չափով, այն չափով, նոյն չափով, այս քանակով, այդ քանակով և ըն:

127. Բայածականները ցոյց են տալիս բայիմաստ առանց դէմքի, ինչպէս՝ գնացող, գնացած, գնալու, գնալիք, գնում, գնալիս, գնացել:

Բայածականներն և բայանունները (§ 106) մի ընդհանուր անունով կոչւում են դերբայ:

Բայածականներից գնում, գնալիս, գնացել ձևերն առանձին գործածութեամբ գրւում են եմ, լինիմ բայերի վրայ, ինչպէս՝ գնում եմ, գնացել եմ, գնալիս լինիմ: Իբրև մականուն պատահում են միայն ժողովրդական լեզուի մէջ, ինչպէս՝ գնալիս տեղը, գնում տեղը, գնում ժամանակ, Գնալիս, գնացած ձևերը յաճախ իբրև մակբայ են գործածւում:

Բայածականները երբեմն որակական իմաստ ես ունին, ինչպէս՝ մեռած մարդ, կոտորած աման, խմելու ջուր:

128. Անորոշ մականունները ցոյց են տալիս անորոշ, անճիշտ թուի ու քանակի, կամ ընդհանրութեան տարտամ գաղափար: Օրինակ՝ շատ մարդիկ, որեւէ մարդ կապակցութիւնների մէջ շատ ցոյց է տալիս մարդկանց թիւը, բայց անորոշ է մնում, թէ որքան է. իսկ որեւէ դրուելով մարդ անուան վրայ՝ մարդ գաղափարին տալիս է ընդհանուր անորոշ կամ տարտամ իմաստ, իբրև ինչ մարդ էլ կուզէ՝ լինի:

Անորոշ մականուններն են՝ շատ, բաւական(ի), քիչ, սակաւ, աւելի, պակաս, նուազ, ամեն, ամենայն, բոլոր, իւրաքանչիւր, ամեն մի, այլ, ուրիշ, այս ինչ, այն ինչ, ինչինչ, ինչոր, որեւէ, մի քանի, մը(մի), մըն:

129. Անորոշ մականունների համար պիտի նկատի ունենալ.

1. Բոլոր զբուժական և ծանօթ առարկաների անունն վրայ, և առանց որոշելու ճիշտ թիւը ցոյց է տալիս ծանօթ բաների ամբողջութիւնը. ինչպէս՝ Բոլոր աշակերտները գնացին դրոսներու.

2. Իմաստով տարբեր են ուրիշ անորոշը և միւս, մեկէլ ցուցականները: Միւս, մեկէլ ցոյց են տալիս երկու կամ աւելի ծանօթ առարկաներից երկրորդը, մնացած մէկը, մնացածները. յաջորդը (§ 125): Օրինակ՝ Նա երկու դիրք ունի. մի գիրքը կարդացել է, իսկ միւս գիրքը չի կարդացել. Այս գրիչը լաւ չէ, զնա միւս գրիչը բեր: Այս անգամ չպատմեցի, բայց միւս անգամին կը պատմեմ. Իսկ ուրիշ բառը տարտամ նշանակութիւն ունի որեւէ իմաստով. ինչպէս՝ Նա միայն Աւետարան է կարդում, ուրիշ (որեւէ) գիրք չի ուզում կարդալ. Այս գրիչը լաւ չէ. զնա ուրիշ (որեւէ) գրիչ բեր. Այս անգամ չպատմեցի, բայց ուրիշ անգամ կը պատմեմ.

3. Այս ինչ, այն ինչ ունին և ցոյցական իմաստ, բայց միշտ ընդհանուր տարտամ նշանակութեամբ: Օրինակ՝ Եթէ այս ինչ կամ այն ինչ քաղաքացին իւր պարտքը չի կատարում, այդ զեռ չի նշանակում, թէ ամենքն եւս անպարտամանաչ են.

4. Չպիտի շփոթել ինչ որ, ինչից անորոշ մականունները ինչ որ, ինչից անորոշ անունների հետ (§§ 107. 110): Անուններն իբրև գոյական մենակ են բանում. իսկ մականուններն իբրև ածական անունն վրայ են գրում: Օրինակ՝ Նա ինչից ունէր գրելու. Ինչից պատճառներից ստիպուած: Նա ինչ որ ասաց, բայց ես չմտկացայ. Նա ինչ որ ծաղիկներ է քաղել.

5. Մը կամ մըն անորոշ մականունն ունի ինչ որ անորոշի իմաստ և գործ է ածում միայն արեւմտեան աշխարհաբարում:

130. Հարցական մականուններն իմաստով անորոշ մականուն են, միայն գործ են ածում խօսքի մէջ ածականի հարցման համար: Պատասխանը լինում է մի ածական:

Հարցական մականուններն են՝ ի՞նչ, ո՞ր, քանի՞, ո՞րքան, ի՞նչքան, ո՞րչափ, ի՞նչչափ, ո՞րպէս, ի՞նչպէս, ո՞րպիսի, ի՞նչպիսի, այլ և քանի՞երորդ:

Ո՞ր հարցականը գործ է ածում ծանօթ առարկաներից, անձն թէ իր, որեւէ մէկը, մի քանիսը որոշելու համար. օրինակ՝ ո՞ր գիրքը (ծանօթ գրքերից մը) կարդացիր: Իսկ ի՞նչ հարցականը գործ է ածում մի առարկայի ընհանրապէս ինչպիսի լինելը, ինչ յատկութիւն ունենալը ցոյց տալու համար. օրինակ՝ Դու ի՞նչ գիրք ես կարդացել:

Չպիտի շփոթել ի՞նչ հարցական անունը և ինչ անորոշ անունը (§§ 107. 108), որոնք գոյական են և մենակ են գործածում, ի՞նչ հարցական մականունն հետ, որ իբրև ածական գրում է անունն վրայ. օրինակ՝ Դու ի՞նչ ասացիր. Ամեն ինչ կորած է. Դու ի՞նչ գործ բռնեցիր:

131. Հարցական մականունները, բացի քանի՞երորդ բառից, գործածուելով առանց հարցման՝ ստանում են յարաբերական կամ շաղկապական անորոշ մականունն կամ մակբայի իմաստ և դրուելով բարդ ասացուածի մէջ մի երկրորդական խօսքի սկզբում՝ այդ խօսքը կապում են գլխաւոր խօսքի հետ: Երկրորդական խօսքը կոչում է յարաբերական խօսք:

Յարաբերականի անունն և, եթէ յարաբերականի ետեւ իբրև մակբայ է առնուած, իրեն յարաբերականի ետեւից կարող է դրուել և որ թարմատար շաղկապը (§ 109): Օրինակ՝ Որ սարին դիմեցի, վրան ձին եկաւ: (Նա ինչ փորձանք էլ որ գայ, համբերի: Քանի մշակ որ վարձես, գործ կը լինի: Ինչքան մարդիկ կային, հաւաքուեցին: Քանի կարող էք՝ մի՛ խնայէք: Որքան որ կուզէ՝ թող փչէ հիւսիս: Ինչպէս (որ) կուզես, այնպէս արմ:

132. Յօդ առում են՝ ս, ղ, ն կամ ը մակա- նունները, որոնք իբրև առանձին բառ մենակ չեն գործածուում, այլ միշտ գրւում են մի անուան վրայ վերջից, որի հետ և յօղուած, այսինքն կպած, կցուած են գրւում:

Յօդերը նայելով իրենց իմաստին՝ կոչւում են ցուցական, ղիմորոշ, ստացական և որոշող յօդեր:

133. Յուցական յօդեր՝ ս, ղ ունին ցուցական այս, այդ մականունների իմաստ. օրինակ՝ գիշերս նշանակում է այս գիշեր: Այսպէս և աշխարհս, մարդս, տեղս, տեղը:

Այս իմաստով միայն որոշ բառերի հետ են գործ- ածւում ս, ղ յօդերը:

134. Իխմորոշ յօդեր՝ ս, ղ գրուելով մի անուան վրայ՝ նրան տալիս են առաջին կամ երկրորդ դէմքի գաղափար: Օրինակ՝ Ուսուցիչս ի՞նչ կարող եմ անել քեզ աշակերտներդ աշխատել չէք ուզում: Ուսուցիչս նշանակում է՝ ես ուսուցիչս. ես, որ ուսուցիչ եմ: Իսկ աշակերտներդ՝ դուք աշակերտներդ. դուք, որ աշակերտ էք: Այսպէս և՛ երեքս, չորսդ, ամենքս, ամենքդ և ըն. նշանակում է՝ մենք երեքս, դուք չորսդ և ըն:

135. Ասացական յօդեր՝ ս, ղ, ն կամ ը գրուել- լով մի անուան վրայ՝ որոշում են, թէ մի առարկայ ո՞ւմ ստացուածքն է. առաջին, երկրորդ, թէ երրորդ դէմքի. ինչպէս՝ գիւղքս նշանակում է իմ գիւղը. գիւղը՝ քո գիւղը. գիւղը՝ իւր կամ նրա գիւղը:

Մեր, ձեր, իրենց կամ նրանց դերանունների իմաստով գործ են ածւում.

1. Միավանկ բառերի համար՝ ներս, ներդ, ները (արտասանւում է՝ ըներս, ըներդ, ըները) կամ երս,

երդ, երը, արեմտեան աշխարհաբարում՝ երնիս, եր- նիդ, երնին. ինչպէս՝ Արէք, ինչ որ սրտներդ (սրտը- ներդ) կամ սրտերդ (= ձեր սիրտը) կուզի: Սրտեր- նիս (մեր սիրտը) կամեցաւ: Յոյսներս ղրել ենք: Յոյս- ները ղրել են: Մէջքներդ չի կոտորուիլ որ ...

2. Բազմավանկ բառերի համար՝ ներս, ներդ, նե- րը, արեմտեան աշխարհաբարում նիս, նիդ, նին, ինչպէս՝ Պարտէզներս կամ պարտէզներս (= մեր պար- տէզը) կանաչեց:

Պարտէզներս նշանակում է և իմ պարտէզները:

136. Որոշող յօդն է ն կամ ը, որ աւելանալով անուան վրայ՝ անուան ընդհանուր անորոշ իմաստը որոշում է, այսինքն սահմանափակում կամ մասնա- տրոշում է՝ ցոյց տալով խօսողին ծանօթ, յայտնի ա- ռարկայ. Օրինակ՝ Նա գիրք կարդաց: Նա գիրք կար- դաց: Առաջին խօսքի մէջ գիրք առնուած է ընդհա- նուր անորոշ իմաստով, ինչ գիրք կուզէ լինի. իսկ երկրորդ խօսքի մէջ յայտնի, ծանօթ գրքի մասին է խօսքը:

Ն, և ը յօդերի գործածութեան համար պիտի նկատի ունենալ.

1. Երբ բառը ձայնաւորով է վերջանում, գրւում է ն յօդը. ինչպէս՝ որդին, մարգարէն. Անձայն յ տառը դուրս է ընկ- նում, օրինակ՝ ծառան, փեսան. նոյնպէս և ծառաս, ծառար:

2. Երբ բառը բաղաձայնով է վերջանում, բայց յաջորդ բառը ձայնաւորով է սկսուում, և երկու բառի մէջ դադար չի մտնում, դարձեալ գրւում է ն յօդը. ինչպէս՝ մարդն է. Այս մարդն է ն հնչիւնն արտասանութեամբ միանում է յաջորդ ձայնաւորին՝ իբրև մարդ—նէ:

3. Ը յօդն է գրւում, երբ բառը բաղաձայնով է վերջա- նում, և յաջորդ բառը բաղաձայնով է սկսուում, ինչպէս՝ մարդը զնաց (§§ 58, 60.7).

Փոխանցում անուան եւ մականուան մէջ.

137. Կան մականուններ, որոնք գործ են անուամբ եւ իբրև անուն, ինչպէս՝ ցուրտ (ցրտութիւն), աղքատ (մուրացկան, աղքատ մարդ), սուր (սուսեր), այսպէս եւ կենդանի, կարօտ, շոգ ելն:

138. Մականունների անունը յաճախ՝ չկրկնելու համար կարող է զեղջուել, այսինքն խօսքի միջից դուրս ընկնել. այն ժամանակ մականունն ստանում է ն (ը) յօզը եւ գործ է անուամբ իբրև անուն: Օրինակ՝ Նա հինգ խնձոր ունէր. երկուսը (=երկու խնձորը) կարմիր էին, երեքը (=երեք խնձորը) դեղին. կարմիրները (=կարմիր խնձորները) կերաւ, իսկ զեղինները (=դեղին խնձորները) պահեց:

Իբրև անուն գործածուած մականուններն ստանում են ընդհանուր անորոշ իմաստ, երբ զեղջուած է համարուում մտրդ կամ բան անորոշ անունը: Անորոշ մականուններն այս դէպքում առնուում են իբրև անորոշ անուն. ինչպէս՝ սիրի՛ր բարին, գեղեցիկն ու նումարիսը, այսինքն բարի գեղեցիկ ու ճշմարիտ բանը. ինչ որ բարի, գեղեցիկ ու ճշմարիտ է: Այսպէս եւ ամենը (ամեն բան, ամեն ինչ), տասը, քիչը, քանիսը, մէկը (մի մարդ), որը (ոմն) եւլն:

139. Անուններն եւ գրուելով ուրիշ անուան վրայ՝ առնուում են իբրև մականուն: Այսպէս գործ են անուամբ՝

1. Որակական իմաստով՝ շատ անուններ. ինչպէս՝ տօն օր, ոսկի բաժակ, ձմեռ ժամանակ, քար սիրտ, մուծ տեղ, լոյս սենեակ, իբրև տօնական օր, ոսկեղէն բաժակ, ձմեռնային ժամանակ, քարեղէն սիրտ, մոլին տեղ, լուսաւոր սենեակ:

2. Բացայայտող իմաստով՝ յատուկ անունը տեսակի անուան վրայ կամ տեսակի անունը յատուկ անուան եւ սեռի անուան վրայ. ինչպէս՝ Տիգրան Թագաւորը, Երասխ գետը, տէր Գրիգորը, հայր Արքայապետը, զրաշար Յարութիւնը, պարոն Սմբատը՝ Վարդան զօրավարը. ամբողջ Անին, մայրաքաղաք Անին, եղեւին ծառը, տառեխ ձուկը:

Անունների այս բացայայտող խնդիրը կոչուում է բացայայտիչ. իսկ խնդրառու անունը, որի լրացումն է դառնում բացայայտիչը, ասուում է բացայայտեալ:

2. Մ Ա Կ Բ Ա Յ.

140. Մակբայ ասուում են ածականները, երբ նրանց ցոյց տուած գաղափարը մտածուում է բայի կամ բայիմաստի հետ կապուած:

Մակբայները գրուելով բայերի եւ դերբայների վրայ՝ իբրև խնդիր լրացնում են բայիմաստը (§§ 94. 2. 106. 127): Օրինակ՝ Նա լաւ խօսեց խօսքի մէջ լաւ ածականը որոշուում է, թէ ինչպէս խօսեց:

Մակբայների ցոյց տուած գաղափարները կոչուում են պարագայ, եւ մակբայները խօսքի մէջ լինում են բայերի պարագայական խնդիր:

141. Մակբայները նայելով իրենց ցոյց տուած գաղափարներին՝ սովորաբար բաժանուում են հետեւեալ տեսակներին.

1. Տեղական մակբայներ, օրինակ՝ աստ, անդ, ուրեք, ուստեք, ամենուրեք:
2. Ժամանակական մակբայներ, օրինակ՝ երբեմն, երբեք, արդէն, դեռ, այնուհետեւ:
3. Որակական մակբայներ, օրինակ՝ մեծապէս, ազատօրէն, զազանաքար:
4. Քանակական մակբայներ, օրինակ՝ երկիցս, երկիցս, շատ, քիչ, քաւականի:
5. Եղանակական մակբայներ, որ լինում են՝
 - ա. Հաստատական մակբայներ՝ օրինակ՝ անշուշտ, հարկաւ, ի հարկէ, հաւաստեաւ, անպատճառ:
 - բ. Բացասական մակբայներ՝ ոչ, չը, մի՛:
 - գ. Երկբայական մակբայներ, օրինակ՝ թերեւ, գուցէ, միթէ, արդեօք:

142. Պատասխանական այո՛, ո՛չ, չէ՛ բառերն
ևս սովորաբար գրւում են մակբայների մէջ, բայց
գրանք իսկապէս մակբայ չեն և ոչ էլ ածական, որով-
հետև դրւում են ամլողջ խօսքի տեղ: Օրինակ՝ Դու
այսօր պարապել ես:—Այո՛ (այսինքն՝ ևս այսօր պա-
րապել եմ):

Պատասխանական այո՛, ո՛չ, չէ՛ բառերը միշտ իրենց վրայ
չեզտ ունին և ետևից առնում են ստորակէտ:

143. Հայերէնում մի քանի բառեր կան, ինչպէս՝ մի,
յայնժամ, անդ, աստ, այսուհետև, այնուհետև, ուրեք, երբեք, որոնք
միայն իբրև մակբայ են գործածւում: Մնացած մակբայ հա-
մարուած բառերը սովորաբար իբրև մակբայ են գործածւում,
բայց կարող են և իբրև մականուն կամ մականական ևս բանել:

Միայն կամ սովորաբար իբրև մակբայ գործածուած բա-
ռերից շատը իսկական ածականներ չեն, այլ գոյականներ կամ
բայեր, յաճախ հնացած ձևերով, երբեմն երկու բառից կազ-
մուած. ինչպէս՝ արդեօք, հաւատուաւ, արդէն, յայնժամ, այսու-
հետև, այնուհետև, մի՞թէ, դուցէ, դարձեալ, Դրանք մեծ մա-
սամբ գրաբարից են մտած աշխարհաբարի մէջ:

144. Յաճախ գոյականներն իբրև ինքիւր գրուելով բայի
վրայ կորցնում են իրենց առարկայական իմաստը, այսինքն
չեն մտածւում իբրև բան, ինչ կամ առարկայական խնդիր,
այլ առնւում են իբրև մակբայ կամ պարագայական խնդիր՝
մտածուելով իբրև տեղ (ուր, որտեղ), ժամանակ (երբ), որակ
(ինչպէս), և քանակ (որքան), Այսպէս գործ են անում մանա-
ւանդ այն անունները, որոնք ցոյց են տալիս տեղ, ժամանակ,
որակ և քանակ: Օրինակ՝ Տների ներսը չէր դրաւում մարդկանց,
ուստի ժողովուրդը լցուած էր գուրսը ասացուածի մէջ ներսը տե-
ղի անունը պահում է իւր առարկայական իմաստը, իսկ դուրսը
մտածւում է իբրև մակբայ: Այսպէս գործ են անում նաև
հետևեալները.

1. Տեղի իմաստով՝ Նա տուն (սրբ) գնաց: Նա դիւրում է
ապրում: Նա փողոցով անցաւ հին: Նոյնպէս և բոլոր տեղի ա-

նունները՝ տեղ, կողմ, շուրջ, առաջ, առջեւ, դէմ, դիմաց, ետև,
վերև, վրայ, ներքև, տակ, ներս, դուրս, մէջ հին:

2. Ժամանակի իմաստով՝ Նա երեկ (երբ) եկաւ: Գարնանը
անձրև չեկաւ: Նա դիշերը չքնեց հին: Նոյնպէս և բոլոր ժա-
մանակի անունները՝ ժամ, օր, շաբաթ, ամիս, վաղը, այսօր, այժմ,
առաջ, յետոյ հին:

3. Որակի իմաստով՝ Նա գիշերը բաց ացրով (ինչպէս)
լուսացրեց: Ծնորդով շարժուիր: Բերեց, ամենը կարգով շա-
բեց:

4. Գանակի իմաստով՝ ծանր նստիր, լիտր (սրբան) դաս:
Նա հինգ կանգուն հեռացաւ:

3. ՄԱԿԱԾԱԿԱՆ.

145. Մականական ասւում են ածականները,
երբ նրանց ցոյց տուած գաղափարը մտածւում է մի
ուրիշ ածականի՝ մականուան, կամ մակբայի և նոյն
իսկ մականականի հետ կապուած:

Մականականները որոշում են կամ ածական-
ների որևէ պարագան (§§ 140, 141), ինչպէս՝ երբեմն
աղիւս մարդն այսօր առաջին հարուստ մարդն է. կամ
նրանց ցոյց տուած յատկութեան ասլինանը, այսինքն
աւելի կամ պակաս, շատ կամ քիչ, կամ հաւատար
լինելը: Օրինակ՝ Այս տունը գեղեցիկ է. իսկ այն
տունն աւելի գեղեցիկ է:

146. Աստիճանի մականականներն երկու տեսակ
են՝ ըաղչատական և սաստկական:

Բաղդասական մականականները՝ աւելի, առա-
ւել, աւելի եւս, առաւել եւս, պակաս, նուազ, նոյն-
պէս, նոյնքան, նոյնչափ, այնպէս, այնքան, այնչափ
գրւում են ածականների վրայ, երբ մի առարկայ իւր

յատկութեան կողմից բաղդատուում, համեմատուում է ուրիշ նոյն յատկութիւնն ունեցող մի, կամ մի քանի, կամ ըլոր առարկաների հետ: Օրինակ՝ Վարդը մանուշակից աւելի հոսաւէս է: Մանուշակը պակաս հոսաւէս է քան վարդը: Վարդն աւելի գեղեցիկ է քան շատ ծաղիկներ: Երկաթն աւելի պիտանի է քան ըլոր մետաղները: Արծաթը նոյնչափ օգտաւէս է, որչափ ոսկին:

Բաղդատուութիւն կարելի է անել նաև երկու տարբեր յատկութիւնների մէջ. օրինակ՝ նա աւելի հարուստ է քան քախտաւոր:

Եթէ առաւելութիւն ցոյց տուող բաղդատութիւնը լինում է նոյն յատկութիւնն ունեցող ամեն առարկաների հետ, կոչւում է գերադրական աստիճան. եթէ այդպիսի բաղդատութիւնը լինում է մի, կամ մի քանի առարկայի հետ, կոչւում է բաղդատական աստիճան. իսկ եթէ առանց բաղդատութեան է ասուում ածականը, կոչւում է դրական աստիճան: Օրինակ՝ դրական աստիճան է՝ վարդը գեղեցիկ է. բաղդատական՝ վարդն աւելի գեղեցիկ է քան մանուշակը, քան շատ ծաղիկներ. գերադրական՝ վարդն աւելի գեղեցիկ է քան բոլոր ծաղիկները, կամ վարդն ամենից գեղեցիկ ծաղիկն է. կամ վարդն ամենագեղեցիկ ծաղիկն է (§ 191):

147. Սասկական ասուում են այն մակաձականները, որոնք գրուելով մի ածականի վրայ՝ նրա ցոյց տուած յատկութեան աստիճանը բարձրացնում, կամ իջեցնում են, բայց առանց բաղդատելու ուրիշ առարկաների նման յատկութիւնների հետ: Օրինակ՝ Այս տունը շատ գեղեցիկ է: Նա խիստ փոքր է:

Իբրև սաստկական մակաձական գործ են ածւում՝ սաստիկ, խիստ, շատ, (յոյժ), չափազանց, ըլորովին, անչափ, կատարելապէս, քիչ, փոքր ինչ, թեթեւ, աննշան ևն:

148. Զօղ նշանակում է կապ: Զօղ ասուում են այն բառերը, որոնք կապում են կամ բառ բառի հետ, կամ խօսք խօսքի հետ: Օրինակ՝ Նա հայրենիքի համար մեռաւ խօսքի մէջ համար բառը կապում է հայրենիք խնդիրը մեռաւ բայի հետ: Ես գնացի տուն եւ տեսայ նրան ասացուածի մէջ եւ բառը կապում է երկու խօսք իրար հետ:

149. Բառերի և խօսքերի կապակցութիւնը լինում է երկու տեսակ՝ ստորադասական և համադասական:

Ստորադասական կապակցութեան մէջ մի բառ դառնում է մի ուրիշ բառի խնդիր, կամ մի խօսք դառնում է մի խօսքի լրացում, այսինքն ենթակայ կամ խնդիր:

Համադասական կապակցութեան մէջ իրար կապուած բառերն ու խօսքերը միմեանցից անկախ և համադոր են, այսինքն մէկը միւսի լրացում չեն դառնում:

150. Զօղերը նայելով իրենց վարած պաշտօնին երկու տեսակ են՝ կապ և շաղկապ:

1. ԿԱՊ.

151. Կապ ասուում են այն բառերը, որոնք խօսքի մէջ մի գոյական իբրև խնդիր կապում են մի ուրիշ բառի, գլխաւորապէս բայի հետ: Օրինակ՝ Գնացի նա բառերն անկապ են. բայց երբ ասում ենք՝ գնացի գէպի նա, դէպի բառը կապում է նա գերանունը երբև խնդիր գնացի բայի հետ:

152. Կապերը միշտ գործ են ածւում մի գոյա-

կանի հետ և ցոյց են տալիս, թէ գոյականն իբրև խնդիր ինչպիսի կախում ունի իւր խնդրատուից, այսինքն այն բառից, որի խնդիրը դառնում է գոյականը: Օրինակ՝ զնացի ղէպի նա խօսքի մէջ ղէպի կապը ցոյց է տալիս, որ նա դերանունը խնդիր է կամ ստորագասում է զնացի բային, միաժամանակ և որոշում է ստորագասութեան տեսակը, այն է՝ ուղղութիւն, դիմում:

153. Կապերը դրւում են կամ իրենց գոյակաւնից առաջ, կամ յետոյ. ուստի և կոչւում են նախադրութիւն և յետադրութիւն: Օրինակ՝ առանց ինձ՝ առանց քեզ, բայց ինձ համար, քեզ համար:

Քերականութիւնների մէջ կապ բառի տեղ սովորաբար գործ է ածւում նախդիր կամ նախադրութիւն բառը:

154. Կապերն են.

1. Նախադրութիւններ՝ առ, ընդ, ըստ, ի (յ)՝ ց, քան, առանց, բացի, ղէպի, մինչեւ, (մինչ, մինչի)՝ իբրեւ ժողովրդական լեզուի մէջ նաև՝ թ'ողըզ:

2. Յետադրութիւններ՝ մասին, համար, հանդերձ, ներքոյ, յանդիման, (ղէմ՝ յանդիման), հետէ, պէս (լոյսը քացուելուն պէս):

Ա. ընդ, ըստ, ի (յ)՝ ց. հանդերձ, ներքոյ. յանդիման (ղէմ՝ յանդիման). հետէ կապերը գրաբարից են մտած աշխարհաբարի մէջ և մեծ մասամբ գործ են ածւում միայն որոշ ասութիւնների և դարձուածների մէջ: Դրանցից ներքոյ և ղէմ՝ յանդիման կարող են և մենակ իբրև մակբայ գործածուել. ինչպէս՝ Մենք ներքոյ ստորագրողներս ... Դէմ յանդիման խօսել:

155. Կան բազմաթիւ բառեր, անուն և ածական, որոնք խօսքի մէջ կարող են գործածուել կապի իմաստով. ուստի և քերականներն այդ բառերի մի մասը սովորաբար դնում են նախադրութիւնների մէջ: Բայց զրանք իսկական կապի չեն.

այլ կապական բառեր. այսինքն գոյական կամ ածական, որ այս կամ այն ձևով գործ են ածւում և իբրև կապ: Այսպիսի բառերի թիւը խիստ շատ է:

Սովորական կապական բառերն են.

1. Շատ անուններ, ինչպէս՝ հետ, պէս, չափ, նկատմամբ, վերաբերութեամբ, պատճառով ելն:

2. Բոլոր տեղի անունները՝ տեղ, մէջտեղ, կողմ, շուրջ, ղէս, ղէն, առաջ, առջեւ, ղէմ, դիմաց, հանդէպ, ետեւ, վրայ, վերեւ, վեր, վար, տակ, ներքեւ, դուրս, ներս, մէջ, կուշտ, քով:

3. Ժամանակի անուններից՝ ժամանակ, առաջ, յետոյ:

4. Շատ ածականներ՝ նման, համեմատ, տարբեր, գատ, ջոկ, ուրոյն, մօտ, հեռու, հակառակ ելն:

2. Շ Ա Ղ Կ Ա Պ.

156. Շաղկապ աււում են այն բառերը, որոնք կապում են կամ խօսք խօսքի հետ, կամ իրարուց անկախ բառեր միմեանց հետ:

157. Շաղկապները լինում են՝ ստորադասական և համադասական:

Ստորադասական կոչւում են այն շաղկապները, որոնք բարդ ասացուածի մէջ գրուելով մի խօսքի սկզբում՝ այդ խօսքն իբրև լրացում, այսինքն են թաղկայ, կամ խնդիր, կապում են մի ուրիշ խօսքի հետ:

Խնդրառու խօսքը կոչւում է գերադաս կամ գլխաւոր խօսք, իսկ իբրև խնդիր առնուած խօսքը՝ ստորադաս կամ երկրորդական խօսք: Օրինակ՝ Մի՛ մոռանար երգեք, որ դու մարդ ես ասացուածի մէջ որ շաղկապով դու մարդ ես երկրորդական խօսքն իբրև խնդիր կապւում է մի՛ մոռանար երգեք խօսքի հետ, որ գլխաւոր խօսքն է:

158. Ստորադասական շաղկապներն են՝ որ, թէ, եթէ, զի, որովհետեւ, մինչ կամ մինչև, քան:

Այս շաղկապները յաճախ միանում են իրար հետ, կամ ուրիշ բառերի հետ. ինչպէս՝ հինց որ, այնպէս որ, մանաւանդ որ, մանաւանդ թէ, թէ որ, եթէ որ, մինչեւ որ, քան որ, թէպէտ եւ, թէ եւ, թէկուզ, քան թէ, նախ քան թէ, յառաջ քան թէ, ինչ է թէ, որպէս զի, վասն զի, մինչդեռ ելն:

Չպիտի շփոթել մինչեւ, քան շաղկապները մինչեւ, քան նախադրուածիւնների հետ: Շաղկապները կապում են խօսք խօսքի հետ, ինչպէս՝ Մինչեւ Շուշանը գարդարուի, ժամը կարճակուի. իսկ նախադրուածիւնները կապում են մի եւ նոյն խօսքի մէջ բառ բառի հետ, ինչպէս՝ Երեւանից մինչեւ էջմիածին քամուք վերս է:

159. Իբրև ստորադասական շաղկապ կամ շաղկապական քառ գործ են ածւում նաև՝

1. Բարաբերական դերանունը՝ որ (§ 116):

2. Բոլոր յարաբերական անուններն ու ածականները մենակ, կամ որ թարմատար շաղկապով (§§109. 130. 131):

160. Համադասական աւելում են այն շաղկապները, որոնք կապում են երկու իրարուց անկախ, համագոր քառեր, կամ խօսքեր: Օրինակ՝ Հայրն ու մայրը գնացին: Ես գնացի, իսկ դու եկար:

Համադասական շաղկապներն են՝ եւ, ու, էլ, եւս, այլ, քայց, սակայն, իսկ, կամ, քան, ապա, անգամ (իսկ), թէ ... թէ, թէ՞, գոնէ, գէթ, մանաւանդ, այսինքն, արդ, ուրեմն, ուստի, հետեւաբար ելն:

Այս շաղկապները յաճախ միանում են իրար հետ, կամ ուրիշ բառերի հետ. ինչպէս՝ նաև, այլ եւ, եւս եւ, նոյնպէս եւ, նմանապէս եւ, ինչպէս եւ, ուրեմն եւ, հետեւաբար եւ, ուստի եւ, եւ այն, այն էլ, այլ եւս, մինչեւ իսկ, նոյն իսկ, մինչեւ անգամ, նմանաւանդ, եւ մանաւանդ, եւ կամ, կամ թէ, այսինքն թէ ելն:

Խօսքի բազմակի մասեր.

161. Խօսքի ամեն մաս, բացի բայից, որ միշտ առանձին խօսք է կազմում, կարող է մի հատ և շատ լինել, կամ միակի և բազմակի լինել: Օրինակ՝ Առիւծը կատաղի դադան է խօսքի մէջ առիւծը ենթակա միակի է: Իսկ Առիւծը, վագրը եւ արջը կատաղի դադան են խօսքի մէջ առիւծը, վագրը եւ արջը բազմակի ենթակայ են: Նոյնպէս՝ Բարի, առաքինի եւ հաւատարիմ ընկերը մարդու համար մի թանկազին գանձ է խօսքի մէջ բարի, առաքինի եւ հաւատարիմ բազմակի մասեր են, կամ բազմակի մականուն:

Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ բազմակի մասեր լինում են միայն համանման իմաստով լրացումները: Օրինակ՝ Գիրքն առակերթին տուի խօսքի մէջ երկու խնդիր կայ՝ գիրքը, առակերթին. բայց դրանք բազմակի մասեր չեն, որովհետեւ գիրքը ցոյց է տալիս, թէ ինչ տուի. իսկ առակերթին ցոյց է տալիս, թէ ում տուի: Նոյնպէս բազմակի մասեր չեն Մեր այս երկու գեղեցիկ ծառերը չորացան խօսքի մէջ մեր, այս, երկու, գեղեցիկ բառերը, որ ծառերը բառի խնդիրներն են. որովհետեւ մեր ցոյց է տալիս, թէ ծառերն ումն են. այս ցուցական է. երկու՝ թուական, գեղեցիկ՝ որակական, բայց եթէ ասեմք՝ գիրքը, սեքակն ու մասիսը տուի աշակերտին, գիրքը, սեքակն ու մասիսը բազմակի մասեր են, որովհետեւ երեք բառն էլ ցոյց են տալիս, թէ ինչ տուի: Նոյնպէս՝ Մեր, ձեր եւ նրանց ծառերը չորացան խօսքի մէջ մեր, ձեր եւ նրանց բազմակի մասեր են:

Կեսադրուիւն.

162. Խօսքի բազմակի մասերի մէջ դրւում է ստորակէտ Բազմակի մասերից վերջինը, ուրեմն եթէ երկուսն են, երկրորդը կապւում է սովորաբար եւ կամ ու շաղկապով, որից առաջ ստորակէտ չի դրւում: Օրինակ՝ Առիւծը, արջը, զայն եւ աղուէսը մի օր եղբայր էին դարձել:

163 Երկրորդական խօսքերը, այսինքն ստորադասական շաղկապներով և յարաբերական բառերով սկսուող խօսքերը (§§ 158. 159), գլխաւորից բաժանւում են ստորակէտով, կամ բուժով.

1. Երբ երկրորդական խօսքն առաջադաս է, այսինքն

գլխաւոր խօսքից առաջ է գրուում, գլխաւորի և երկրորդականի մէջ գրուում է ստորակէտ.

2. Երբ երկրորդական խօսքը միջադաս է, այսինքն ընկնում է գլխաւոր խօսքի մէջ, երկու կողմից ստորակէտերի մէջ է անւում.

3. Երբ երկրորդական խօսքը վերջադաս է, այսինքն գլխաւոր խօսքից յետոյ է գալիս, և սկսւում է որևէ ստորագասական շաղկապով կամ յարաբերական բառով, գլխաւորից բաժանւում է ստորակէտով. **Օրինակներ՝**

Ով որ փիանայ, նա շուտ չքանայ, ինչ որ ցանես, այն կը հնձես. Որ որ կուգես, այն ընտրիր. ինչ փորձանք էլ որ գայ, համբերիր. Որ կողմը մտիկ ասս, կարմիր ու կանաչ է: Ինչքան բարեկամներ կային, ժողովուրդներն. Ուղար ինչքան սասկի. կաշին մի իշի բեռ կը լինի. Քանի տունչս բերնիս է, այդ բանը չի լինիլ. — Աստուած, որ երկիւնք ու երկիրը ստեղծել է, խնամում է իւր արարածներին. Մեր գիւղերում, երբ որ ամառը գալիս է, ոչ մի պարապ մարդ չի մնում. — Գառ լինի, որ գրլխովը քամի չանցնի: Ես ինչ գիտէի, թէ այդպէս կը լինի: Այն մարդը մարդ է. ով որ կեղծաւորութեամբ խօսի: Է՞ր իմ թմբած աչքէս փախչում է քունը, երբ որ լսում եմ հայ ազգի անուր:

164. Երբ շաղկապը զեղչւում է, և երկրորդական խօսքը գլխաւորի հետ կապւում է առանց շաղկապի, գլխաւորից սովորաբար բաժանւում է բուրով (§ 18. 4): **Օրինակ՝**

Սաղն ինչ իմանայ՝ կտղն ինչ է: Մարդ կայ՝ հազար արժէ. մարդ կայ՝ մէկ չարժէ: Ասէ՛ք՝ ի՛նչ կանէ ջուրըն ընկածը: Ոյժ էլ չունիմ ես՝ նոցա պատշապանել:

Յաճախ երկրորդական խօսքերը գլխաւորից բաժանւում են բուրով. մանաւանդ երբ գլխաւոր խօսքի մէջ չկայ մի ցուցական, որ ակնարկում է երկրորդական խօսքի իմաստին. **ինչպէս՝**

Ով տեսա՛ զարմացաւ, ինչ կուգես՝ արտ. Առա՛ն ինչ որ կուգես: Ինչ որ ասացի՛ր՝ Աստուած կատարի: Արեղ օրէնքն է՛ դանդառ կանեմ. Ընտրէ՛ր՝ որս որ կուգես:

165. Ստորագասական շաղկապներից առաջ ոչ մի կէտ չի գրուում հետևեալ տեսակի ասութիւնների մէջ՝ իրաւ որ, իսկապէս որ, Յշմարիտ որ, վայ թէ, երանի թէ, կարծես թէ, ինչ է թէ, չնայելով որ, նայելով թէ կէտ:

166. Համադասական խօսքերի մէջ, եթէ կարճ են, գրուում է ստորակէտ. օրինակ՝ Եկայ, տեսայ, յաղթեցի. Անունը կայ, ամանումը չկայ

Համադասական խօսքերի մէջ միջակէտ է գրուում (§ 18. 3).
1. Երբ բաւական երկար են, կամ միջի դադարն երկար է.
2. Երբ համադասական խօսքերն ունին երկրորդական խօսքեր, որոնք ստորակէտով են բաժանւում: **Օրինակ՝**

Արեւը մայր մտաւ, բայց անտառում դեռ լոյս է. օդը ջինջ է եւ թափանցիկ. Թռչունները շատախօսութեամբ ծղվում են. խոտն ուրբախ փայլում է զմրուխտի փայլով: — Ցածր նստիր, որ բարձրանաս. բարձր մի՛ նստիր, որ ցածրանաս:

167. Եւ, ու շաղկապներից առաջ ստորակէտ չի գրուում, եթէ երկու համադասական խօսքի ենթական նոյն է: Բայց երբ ենթական փոխւում է, կամ եւ, ու կրկնւում են բոլոր համադասական խօսքերի, կամ բազմակի մասերի սկզբում, եւ, ու շաղկապներից առաջ ևս գրուում է ստորակէտ: **Օրինակ՝**
Աշտարակներից մէկի գլխին նստած է ահագին, սեւ արծնը. եւ լուռ նայում է դէպի խորին անդունդը: Նա նստած է անշարժ. եւ նրա սրածոս աչքերը որոնում են ձորի խորութեան մէջ ցանկալի սրբը: —

Եւ զուր տեղը ես տանջւում եմ, եւ յուզւում եմ, եւ դողում եւ միմիայն թղթի վրայ անմիտ կերպով խաղաղում. ինձ ծաղրում են, եւ ամսթու կարմրում են իմ այտեր:

168. Համադասական շաղկապներից առաջ ստորակէտ չի գրուում.

1. Կամ շաղկապից առաջ, երբ կապուած բառերը նոյն իմաստն ունին, օրինակ՝ Երեւան քաղաքը գտնւում է Հրազդան կամ Զանգուռ գետի վրայ:

2. Առաջին կամ և թէ շաղկապներից առաջ, երբ կրկնւում են. օրինակ՝ Ման կողը կամ շորին կը ծարի. կամ փորին. Ինչի՞ համար նա թէ տեղը փոխեց, թէ ծայրը կտրեց:

Գ. ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ.

169. Չայնարկութիւնն են ասուում են այն բառերը, որոնք մի ձայնով կամ բացազանչութեամբ ցոյց են տալիս խօսողի զգացումներն ու կամքը:

Չայնարկութիւնները խօսքից դուրս մնալով կարող են խօսքն ամեն կերպ ընդհատելով ընկնել խօսքի մէջ. ուստի կոչուում են նաև միջարկութիւն: Օրինակ՝ Ա՛խ, ի՛նչպէս կուզեմ տեսնել մեր հային ուրախ, ապահով, կրթեալ, ինքնագոհ:— Բայց, ա՛խ, միայն մենք կը խօսենք: Երբ յիշատակս ալ թառամի, ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ:

170. Չայնարկութիւնները լինում են բացազանչական և կոչական:

Բացազանչական ձայնարկութիւնները ցոյց են տալիս զանազան զգացումներ, ինչպէս՝ ուրախութիւն, գոհունակութիւն, տրամուծիւն, ցաւ, վիշտ, ափսոսանք, գրկանք, զղուանք ևլն (§ 22): Օրինակ՝ օխայ, օխ, ի՛նչ, աւանդ, վայ, անխ, ի՛նչ, ան, է՛ն, ափսոս, եղով, պանօ, օնօ, ընը, թի՛ն, պան պան պան:

171. Կոչական ձայնարկութիւնները ցոյց են տալիս կամք: Խօսողն այդ բառերով ուղղում է ուրիշի ուշադրութիւնը դրաւել, մի բան հրամայել, մարդկանց կամ կենդանիներին կանչել, խրախուսել, քշել ևլն: Օրինակ մարդոց համար՝ անան, տօ, ծօ, քան, հաքան, հաճէ, աղէ, դե՛հ, հապան, ի՛վ, այ, է՛յ ևլն: Կենդանիների համար՝ հօհօ, դէդէ, քըշ, քըան, փըշտ, փըշի, չիշ ևլն:

Ահան ունի և ցուցական իմաստ. խօսողն ուրիշի ուշադրութիւնը դարձնում է մի բանի վրայ, որ ցոյց է տալիս:

172. Կոչական ձայնարկութիւնները կարող են գործածուել և կոչական անունների հետ միասին:

Կոչական անուն ասուում են այն բառերը, որոնցով առարկաների, գլխաւորապէս մարդկանց անունը տալով՝ ձայնում, կանչում ենք նրանց, երբ ուղղում ենք նրանց ուշադրութիւնը դրաւել մի բան ասելու, կամ հարցնելու համար: Օրինակ՝ Հա՛րսիկ, քեզ ասեմ. ա՛ղջիկ, դու լսիր: Կո՛ւծ, քեզ ասեմ. կո՛ւլայ, դու լսիր: Դու, կաթողիկոս, յօրինէ՛ կոնդակ: Միայն, գրագէ՛տ դու պարունցե, նախանձում եմ ձեր բախտին:

173. Չայնարկութիւնների մէջ են դնում և նմանաձայնութիւնները, ինչպէս՝ ծիւ ծիւ, ծըրըվըստ, ծըն, թըրըխ ևլն:

174. Չայնարկութիւնների վրայ դրուում է միշտ շեշտ, կամ երկաւ. իսկ կոչական անունների շեշտուած վանկի վրայ սովորաբար շեշտ է դրուում:

Եթէ կոչական անունը մի մականուն ունի առաջից, շեշտը դրուում է մականուն վրայ, ինչպէս՝ Սերեյի պարոն, պատուական եղբայր, բայց եղբայր պատուական:

175. Չայնարկութիւնները և կոչական անունները խօսքից բաժանուում են ստորակէտով. ուրեմն եթէ խօսքի սկզբում են ընկնում, ետևից առնում են ստորակէտ. եթէ խօսքի մէջ են մտնում, երկու կողմից ստորակէտերի մէջ են դրուում. իսկ եթէ խօսքի վերջն են գալիս, առաջից դրուում է ստորակէտ, իսկ ետևից որեէ կէտ՝ նայելով իմաստին:

Ա՛յ, ո՛վ կոչական ձայնարկութիւնները, եթէ գործ են ասուում մի կոչական անուն հետ, վերջինից ոչ մի կէտով չեն բաժանուում: Օրինակ՝ Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցար, երանի է մեզ, ա՛վ որդիք փառացի:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ .

176. Բառերի տեսակները .

Ա. Բայ ասուում են մենակ խօսք կազմող բառերը :
Բ. Լրացում ասուում են այն բառերը, որոնք որևէ կողմից պարզում, ամբողջացնում են խօսքը :
Լրացումները նայելով իրենց իմաստին լինում են գոյական և ածական .

ա. Գոյականը ցոյց է տալիս անկախ գոյութիւն ունեցող, կամ իբրև անկախ մտածուած առարկայ և լինում է՝

1. Անուն, որ առարկաների կոչումն է եւ հաստատուն նշանակութիւն ունի .
2. Գերանուն, որ դրում է անուն տեղ եւ փոփոխուող նշանակութիւն ունի .

բ. Ածականը ցոյց է տալիս ոչ անկախ մտածուած գաղափար, որ մտածուում ուրիշ գաղափարների հետ կապուած և լինում է՝

1. Մականուն, երբ մտածուում է անուն հետ .
2. Մակբայ, երբ մտածուում է բայի հետ .
3. Մակածական, երբ մտածուում է ածականի հետ .

Գ. Զօղ ասուում են բառեր և խօսքեր կապող բառերը, որ լինում են՝

1. Կապ, որով կապուում է գոյականն իւր խնդրաուղի հետ .
2. Շաղկապ, որով կապուում են խօսք խօսքի հետ և համադր բառեր միմեանց հետ .

Դ. Զայնարկութիւն ասուում են խօսքից դուրս մնացող բառերը :

Բառերի տեսակներն, ուրեմն, իրենց զլրատւոր ստորաբաժանումներով հանդերձ լինում են՝ բայ, անուն, ղերանուն, մականուն, մակբայ, մակածական, կապ, շաղկապ և ծայնարկութիւն :

ԵՐԿՐՈՐԳ ՀԱՏՈՒԱԾ

Բ Ա Ռ Ա Կ Ա Չ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն .

1. ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

177. Բառակազմութիւնը սովորեցնում է, թէ բառերն ինչ մասերից և ինչպէս են շինուած և շինուում հայոց լեզուի մէջ :

178. Բառերը նայելով իրենց կազմութեան՝ լինում են պարզ կամ արմատական և բաղադրեալ բառեր :

179. Արմատ ասուում է բառերի այն մասը, որ հայոց լեզուի բերականութեամբ բաղադրիչ մասերի չի վերածուում ըստ կազմութեան, այլ միայն բաղադրիչ հնչիւններէ : Օրինակ՝ հիանալ, հիացում, հիանալի, պատել, պատան, պատեան բառերի մէջ հի և պատ վանկերն այդ բառերի արմատն են :

Արմատների մեծ մասը գործ են ածուում իբրև առանձին բառեր և կոչուում են արմատական կամ պարզ բառեր . ինչպէս՝ զարկ, ծեծ, կեր, շարժ, փախ :

Կան բաղմաթիւ արմատներ, որ մենակ չեն գործածուում իբրև առանձին բառ, այլ ածանցների, կամ ուրիշ բառերի հետ միացած . ինչպէս հի արմատը հիանալ, հիասքանչ, հիսթափուել բառերի մէջ :

180. Բաղադրեալ բառերը երկու տեսակ են՝ բարդ և ածանցական :

Բարդ ասուում են այն բառերը, որ կազմուած են երկու բառից, կամ արմատից: Օրինակ՝ մարդասէր, մտազքաղ, հիասքանչ, որոնք կազմուած են՝ մարդ և սէր բառերից. միտ(ք) բառից և զքնող արմատից, հի և սքանչ արմատներից:

181. Ածանցական բառերը կազմուած են մի բառից, կամ արմատից և մի ածանցից, այսինքն մի աննշանակ մասնիկից, որ դրուելով բառի, կամ արմատի վրայ՝ նոր բառի նշանակութիւն է տալիս նրան: Օրինակ՝ գործ բառից կազմուում են՝ գործել, գործիչ, գործօն, գործունեայ, գործնական, գործաւոր, անգործ ևլն: Սքանչ արմատից՝ սքանչանալ, սքանչելի, սքանչացում ևլն:

Ածանցական բառեր կարող են կազմուել թէ պարզ և թէ բաղադրեալ բառերից: Օրինակ՝ թագ բառից կազմուում է թագաւոր, և սրանից՝ թագաւորական:

2. ՉԱՅՆԱՓՈՒՅՈՒԻՒՆ.

182. Բառակազմութեան ժամանակ ձայնաւորները կրած փոփոխութիւնը կոչուում է ձայնափոխութիւն:

Ձայնափոխութիւն լինում է, երբ բառն ածում է, այսինքն բառի վերջից նոր վանկ, կամ վանկեր են աւելանում, ինչպէս՝ նուէր, նուիրել, նուիրական:

183. Ձայնափոխութեան ենթարկում են է, ի, ու ձայնաւորները և նա, ոյ, (այ) երկբարբառները բազմավանկ բառերի վերջին վանկի և միավանկ բառերի մէջ:

Ձայնափոխութիւնը տարբեր ձևով է լինում քաց և փակ վանկերի մէջ:

Վանկը քաց է կոչուում, երբ ձայնաւորով է վերջանում. վանկը փակ է ասուում, երբ բաղաձայնով է վերջանում:

184. է փակը՝ դառնում է ի. ինչպէս՝ տէր, տիրել. հանդէպ, հանդիպել (§ 49):

է բացը՝ անփոփոխ է մնում. ինչպէս՝ բոպէ, բոպէական. մարգարէ, մարգարէութիւն:

185. Ի փակը՝ կամ սղուում է, այսինքն դուրս է ընկնում, կամ փոխուում է ը ձայնաւորի, որ սովորաբար չի գրուում (§§ 56 հտն.). ինչպէս՝ ամիս, ամսական. ճշմարիտ, ճշմարտութիւն. բժիշկ, բժըշկել, բժշկել. դիծ, դըծել. գծել. պատիւ, պատուական. թիւ, թըւական, թուական (§§ 68. 69):

Ի բացը՝ 1. բազմավանկ բառերի մէջ երբեմն դուրս է ընկնում, երբեմն յաջորդ ա ձայնաւորից առաջ դառնում է ե և նրա հետ միասին արտասանուում և գրուում է իբրև եա երկբարբառ. ինչպէս՝ բարի, բարութիւն. եկեղեցի, եկեղեցական. որդի, որդի-ակ, որդեակ. պատանի, պատանի-ակ, պատանեակ:

2. Միավանկ բառերի և շատ բազմավանկների մէջ անփոփոխ է մնում, ինչպէս՝ մի, միակ, միութիւն. թի, թիակ. ձի, ձիաւոր. որդի, որդիական. արի, արիական. արիութիւն, այլ և արութիւն (§ 192):

186. Ու փակը՝ կամ սղուում է, կամ փոխուում ը ձայնաւորի, որ սովորաբար չի գրուում. ինչպէս՝ յատուկ, յատկանալ, անասուն, անասնական. լուծ, լըծել, լծել. ժողովուրդ, ժողովըրդական, ժողովրդական:

Ու բացը՝ դառնում է կամ վ (ւ), կամ ը. բայց գրութիւնն անփոփոխ ու է մնում. միայն տողադարձի ժամանակ գրուում է ըւ. ինչպէս՝ լեզու, լեզուական, լեզուանի (արտասան. լեզական, լեզանի). լու, լուան, լըւան. ծու, ծուածնւ, ծըւածնւ:

187. Եւ փակը՝ դառնում է ե. ինչպէս՝ մատեան, մատենագիր-սենեակ, սենեկապան:

Սայ բացը՝ դառնում է է. ինչպէս՝ քրիստոնեայ, քրիստոնէական, քրիստոնէութիւն. գործունեայ, գործունէութիւն. հրեայ, հրէական:

188. Ոյ փակը՝ դառնում է ու. ինչպէս՝ գոյն, գունաւոր, ծոյլ, ծուլանալ, ողջոյն, ողջունել:

Ոյ բացը՝ նոյնպէս ալ բացը, վերականգնում է վերջի անձայն յ հնչիւնը, որ արտասանւում է յաջորդ ձայնաւորի հետ. ինչպէս՝ գոյ, գոյակ, գոյութիւն. յարգոյ, յարգոյապատիւ. ծառայ, ծառայական, ծառայութիւն. արքայ, արքայական:

189. Մի քանի բառերի մէջ ի, ու ձայնաւորներն անփոփոխ են մնում. ինչպէս՝ հիմ՝(ն), հիմնել. հինգ, հինգերորդ, հինգական, բայց հնգեակ, հնգապատիկ. ինն, իննսուն, իններորդ. ուլթ, ուլթսուն, ուլթերորդ. ուխտ, ուխտել, ուխտաւոր. ուղտ, ուղտապան. ուսում՝(ն), ուսումնական, բայց ուսման ելն:

3. ՅՕԴԱԿԱՊ.

190. Յօդակապ սաւում է ա ձայնաւորը, որ մտնում է բաղադրեալ բառերի բաղադրիչ մասերի մէջ և կապում իրար. օրինակ՝ նորաստատ, զանգակատուն, ողորմագին, մեծագոյն:

191. Յօդակապ չի դրւում, երբ երկրորդ բաղադրիչ մասը ձայնաւորով է սկսւում. ինչպէս՝ ազգօգուտ, ջրանցք, բայց ազգալիսաս, ջրաքերդ:

Աշխարհաբարում ձայնաւորից առաջ ա յօդակապ դրւում է յաճախ, երբ առաջին բաղադրիչ մասն է ամեն բառը, իսկ երկրորդ բաղադրիչն է մի ածական, որ ամեն բառի հետ բարդուելով ստանում է գերադրական աստիճանի իմաստ

(§ 146). ինչպէս՝ ամենօգտակար, ամենազնիւ, ամենաընտիր. ամենաանվաս, ամենաողորմած (§ 65): Աւելի լաւ է խուսափել այսպիսի անճաշակ բարդութիւններից և ասել երկու բառով՝ ամենից օգտակար, ամենից ազնիւ, ամենից ընտիր. ամենից անվրնաս, ամենից ողորմած, կամ ընդհանուր կանոնով բարդել՝ ամենազնիւ, ամենընտիր, ամենօգուտ, ամենողորմած:

192. Բաղմալանկ բառերի վերջի ի ձայնաւորը միանալով ա յօդակապին, կամ երկրորդ բաղադրիչ մասի սկզբի ա ձայնաւորի հետ՝ կազմում է եւ երկբարբառ (§ 185), որ և բառն աճելիս դառնում է ե (§ 187): Օրինակ՝ փոխանակ որդիատէր, հողիահան, հողիական, պատանիական, զինիաւէտ, բարիարար ձեերի կազմւում են որդեսէր, հողահան, հողեկան, պատանեկան, զինեւէտ, բարերար:

Միալանկ բառերի և շատ բաղմալանկների վրայ չի ազդում այս ձայնափոխութիւնը. ինչպէս՝ միանալ, որդիական, կղզիաբնակ ելն (տես § 185):

4. Ք ԱԾԱՆՑ.

193. Կան բառեր, որոնք սովորաբար գործ են ածւում ք ածանցով. ինչպէս՝ մեղ, մեղք. միտ, միտք. աչ, աչք. շնորհ, շնորհք: Կան բառեր ևս, որոնց արմատը գործածական չէ, այլ միայն ք ածանցով ձևն է բանում. ինչպէս՝ փառք, կառք, խելք, կեանք, որ չունին առանձին փառ, կառ, խել, կեան ձևեր:

Բառակազմութեան ժամանակ այսպիսի բառերի ք ածանցը դուրս է ընկնում. օրինակ՝ մեղաւոր, անմեղ. մտաւոր, անմիտ. հրաչեայ, աչեղ. շնորհալի, առատաշնորհ. փառահեղ, սնափառ. կառավարել, խելացի, կենարար ելն:

Սակաւաթիւ բաղադրեալ բառերի մէջ միայն մնում է ք ածանցը. ինչպէս՝ անխելք, անշնորհք (այլ և անշնորհ), անպէտք. պէտքական, աչքարաց, աչքացաւ, ծակաչք ելն:

5. ԲԱՐԴՈՒԹԻՒՆ.

194. Բարդութեան ընդհանուր կանոնն է, որ բաղադրիչ մասերից առաջինն ըստ իմաստի լինում է խնդիր երկրորդ մասի. այսինքն բարդ բառի գլխաւոր կամ հիմնական նշանակութիւնը երկրորդ մասի մէջ է, առաջինը միայն որեւէ կողմից որսչում, լրացնում է երկրորդի իմաստը. Օրինակ՝ Թանաքաման, զանգակատուն, սեւահող, մեծամարդ, մեծասիրտ վերլուծւում են՝ Թանաքի աման, զանգակի տուն, սեւ հող, մեծ մարդ, մեծ սրտով կամ մեծ սիրտ ունեցող: Նոյնպէս մարդասէր, արագավազ բառերի հիմնական մասերն են՝ սէր, վազ, որ ունին սիրող, վազող բաշածականների իմաստը. իսկ մարդ, արագ բառերը նրանց խնդիրն են՝ իբրև մարդ սիրող, արագ վազող:

Այս ընդհանուր կանոնից բացառութիւն կազմում են.

1. Օտար լեզուների նմանութեամբ արտ, մակ, գեր, մէջ և ըն բառերով կամ արմատներով կազմուած սակաւաթիւ բարդ բառեր, որոնց մէջ երկրորդ բաղադրիչը դառնում է առաջինի խնդիր. ինչպէս՝ արտակարգ (կարգից դուրս, արտաքոյ կարգի), արտուղի, արտասահման, գերընական, դերանուն, դերքայ, մականուն, մակըայ, Միջագետք, միջագային և ըն:

2. Սակաւաթիւ բարդ բառեր, որոնց երկու բաղադրիչ մասն իբրև համադաս են առնում և ոչ մէկը միւսի խնդիր. ինչպէս՝ եղջերուաքաղ, իբրև եղջերու և քաղ, այրուծի, երթեւեկ, ելուեջ. այսպէս և կրկնաւորները՝ զանդազունդ, դէզադէզ, շեղաշեղջ, իբրև՝ զունդ զունդ, դէզ դէզ, շեղջ շեղջ:

195. Բարդ բառերն ըստ ձեւի երեք տեսակ են՝ իսկական բարդ բառեր, անիսկական բարդ բառեր և յարադրեալ բառեր:

Իսկական բարդ բառերի երկու բաղադրիչ մասերն իրար միացած են գրւում և ըստ իմաստի և ըստ ձևի մի բառ են կազմում՝ պահելով ձայնափոխութեան և յօդակապի կանոնները. ինչպէս՝ զօրավար, ջրադաց, արքայորդի:

Կան մի քանի բարդ բառեր, որոնց երկրորդ բաղադրիչ մասը բաղաձայնով է սկսւում, բայց ա յօդակապ չունին: Դրանց յօդակապն իսկապէս սղուել է, և կարելի է միշտ աւելացնել. ինչպէս՝ հացթուխ, ջրկիր, ջրհոր, մեռնատու, օրհաս, դեղծափ, ձկնկիթ, արիւնյուայ, որ պիտի լինէին՝ հացամուխ, ջրակիր, ջրահոր, մեռնատու, օրահաս, դեղածափ և ըն:

196. Անիսկական բարդ բառերի բաղադրիչ մասերը միացած են գրւում իբրև մի բառ. բայց դրանք պատահական բարդութիւններ են, ուստի և չեն պահում յօդակապի, երբեմն և ձայնափոխութեան կանոնները: Այս կարգի բառերի մի մասը գրւում են երբեմն և իբրև երկու բառ: Այսպէս կազմուած են.

1. Կցական բարդութիւններ, այսինքն այնպիսի բարդ բառեր, որոնք սկզբնապէս իբրև երկու առանձին բառ են գրուած եղել, բայց այժմ սովորութեամբ միայն, կամ մի նոր ընդհանուր իմաստով առնուած լինելու համար, կամ թէ չէ օտար լեզուների ազդեցութեան տակ, կցուած իբրև մի բարդ բառ են գրւում: Այս կարգի բառերից են՝

ա. Դոյականի եւ ամականի կցումով կազմուածներ, ինչպէս՝ այսպէս, այդպէս, նոյնպէս, որպէս. ինչպէս, այսպիսի, այն-

ախիսի **ԼԸՆ**, այսչափ, այդչափ **ԼԸՆ**, այսքան, այդքան **ԼԸՆ**, այստեղ-
այդտեղ, այնտեղ, որտեղ, ինչտեղ, — այսօր, կէսօր, — նոյնժամայն-
նոյնհետայն, այսինքն, — որովհետեւ, այսուհետեւ, այնուհետեւ, —
տանուտէր, տանտիկին, հինաւուրց, — ոչով, ոչոր, ոչինչ, — մէկմէկու,
մեկէլ, որմին, իրմին, երբեմն, երբեք, ուրեմն, ուրեք, ուստեք **ԼԸՆ**։

բ. Յւ, ու Եաղկապետայն կցուածներ, ինչպէս՝ երթեւեկ-
ելեւմուտք, այլեւայլ, ելեւէջ, առուտուր, առեւտուր, տարուրեր-
այրուծի, աղուհացք (**Մեծ պատ**) **ԼԸՆ**։

գ. Նախդիրներով կազմուածներ, ինչպէս՝ զխիվայր, զա-
ռիվեր, զառիվայր, խոչընդոտն **ԼԸՆ**, նոյնպէս՝ անհասարակ, առ-
ժամանակ, ընդհանուր, ընդդրկել, ընդդժել, ըստանձնել (**ստանձնել**) **ԼԸՆ**։

**2. Կրկնաւոր բարդ բայեր կամ բազմապատ-
կական բայեր, որոնք կազմուած են նոյն արմատի
կրկնութեամբ և ցոյց են տալիս իմաստի կրկնութիւն
(§ 210). ինչպէս՝ կցել, կցկցել, խլել, խլխլել, խշալ,
խշխշալ, ծփալ, ծփծփալ, ըեկել, ըեկընկել։**

Այս կարգի բայերի երկրորդ բաղադրիչի ա ձայ-
նաւորը կարող է սղուել, երբեմն և առաջին, կամ
երկրորդ բաղադրիչից մի բաղաձայն դուրս է ընկ-
նում կամ փոխուած. ինչպէս՝ չափել, չափչափել,
չափչփել, վազել, վազվազել, վազվզել, թափել, թափ-
թափել, թափթփել, փոխել, փոխփոխել, փոփոխել,
հեծել, հեծեծել, թրխակալ, թրխթրխակալ, — թովոալ,
զովոալ, ծրթվրթալ, ծլվլալ, կցել, կցցցել **ԼԸՆ**։

Կրկնաւորներից կազմուած են և ածանցական
բառեր, ինչպէս՝ թրթռուն, վառվառուն կամ վառվը-
ռուն, խշխշոց **ԼԸՆ**։

**197. Յարադրեալ բառերի բաղադրիչ մասերը
միացած չեն գրուած, այլ անջատ. երբեմն ու շաղ-
կապով կամ գծիկով են միանում. Դրանք իմաստով
մի բառ են, իսկ ձևով երկու բառ. Օրինակ՝ պար**

գալ, թափ տալ, սիրտ անել, կանաչ - կարմիր (ծիա-
ծան)։

Այսպէս յարադրուած են՝

1. Կրկնաւորներ, ինչպէս՝ մեծ մեծ (մեծամեծ), նոր նոր
(նորանոր), տաք տաք (չերմաջերմ), սուր սուր, լաւ լաւ, — կերպ
կերպ, խումբ խումբ, գունդ գունդ (գունդագունդ), տեսակ տեսակ **ԼԸՆ**։

Կրկնաւոր յարադրեալ բառերն ունին բազմապատկական իմաստ։
Կրկնաւոր անունները ստանում են ածականի (մականուն, մակբայ)
իմաստ։

**2. Փոփոխութեամբ կրկնաւորներ, որոնք եթէ ու շաղկա-
պով չեն կապուած, միանում են գծիկով։ Օրինակ՝** մա՛ր - մունք,
փալաւ - փուլաւ, կլոր - մլոր, սեւիկ - մեւիկ, աման - չաման, պա-
րապ - սարապ, ծակ - ծուկ, աւալ - թաւալ, հաց ու մաց.

Այս փոփոխութիւնը լինում է երբեմն եւ խոհական բարդ բա-
ռերի մէջ, ինչպէս՝ ժանգոտ, բարձրաբերձ, հաստմետ։

**3. Համանիւթների եւ ճայնանիւթների յարադրութիւն, որոնք
եթէ ու շաղկապով չեն կապուած՝ երբեմն գծիկով են միա-
նում։ Օրինակ՝** ջարդ ու բուրդ, ցիր ու ցան, ահ ու դող, հալ ու
մաշ, ծայն ու ծպտուն, ձէն - ծպուտ, լաց ու կոծ, գունդ ու կծիկ,
կահ - կարասիք **ԼԸՆ**։

**4. Առնչական բառերի յարադրութիւն, որոնք տարբեր
նշանակութիւն ունին, բայց իրար հետ իմաստով որեէ յա-
բակցութիւն ունին, ուստի և յաճախ միասին մի նոր իմաս-
տով, կամ մի հաւաքական ընդհանուր իմաստով են առնուում։
Սովորաբար միանում են ու շաղկապով, երբեմն գծիկով։ Օրին-
ակ՝** աս ու լիս, եփ ու թուխ, տուն ու տեղ, քար ու քանդ,
հաւ ու թիւ, ծառ ու ծուլ, տես ու մանաչ, սար ու սրագ, կեր ու
խումբ, թուր ու մուր, անց ու դարձ, բաց ու խուփ, մի եւ նոյն,
զնալ - դար, կրել - կարգալ **ԼԸՆ**։

**198. Նայոց լեզուին առանձնապէս յատուկ է յա-
րադրեալ բայերի գործածութիւնը, որոնք կազմուած
են մի բայից (յաճախ՝ անել, լինել) և մի յարադրից,**

որ լինում է բայի խնդիրը: Բայն ու յարագիրը միասին ստանում են մի ինչ անել կամ ինչ լինել ցոյց տուող բայի իմաստ: Յարագրեալ բայերը միշտ անջատ են գրւում: Օրինակ՝ պար գալ (պարել), եռ գալ (եռալ), ցոյց տալ (ցուցնել), ծայն տալ (ձայնել), թափ տալ, երես տալ, երես առնել, սիրտ տալ, սիրտ առնել, գրոյց անել (գրուցել), քաց անել (քանալ), դուրս անել (արտաքսել), սիրտ անել, դէմ տալ, դէմ անել, վրայ տալ, վրայ գալ, վրայ քերել, գլուխ տալ, գլուխ գալ, դուրս գալ, մէջ ընկնել, ձեռ տալ ևլն, ևլն:

6. ԱԾԱՆՅՈՒՄ.

199. Ածանցներն երկու տեսակ են՝ նախածանցներ, որոնք աւելանում են բառի վրայ սկզբից, և վերջածանցներ, որոնք աւելանում են բառի, կամ արմատի վրայ վերջից:

200. Նախածանցներից ան, ապ, ս, դժ կոչւում են բացասական մասնիկներ, որովհետև մեծ մասամբ բացասում են բառի իմաստը: Օրինակ՝ անգարդ, անտուն, անհայր, անփոփոխ, անարի, անարժան, ապերախտ, ապօրինի, ապուշ, ապաշնորհ, ապաքախտ, —տգէտ, տձեւ, տհաս, տկար, —դժքախտ, դժկամակ, դժգոհ, դժմիտ: Այս մասնիկների մէջ դնում են և չ, չը բացասական ածականը. ինչպէս՝ չտես, չհաս, չաստուած: Իսկ համ ցոյց է տալիս նոյնութիւն, ինչպէս՝ համազօր, համամիտ, համազգի:

Նախածանցներից յետոյ, բացի ապ, համ մասնիկներից, ա յօդակապ չի գրւում: Ան բացասական մասնիկը բ տառից

առաջ երբեմն դառնում է ամ, ինչպէս՝ անրիծ, անրաւ գրւում են և ամրիծ, ամրաւ:

201. Նախածանցների կարգի մէջ պէտք է դնել և ածականների (աւելի դոյն ցոյց տուող) առաջին վանկի փոփոխութեամբ կրկնուելը բառի սկզբում, որ բառի իմաստը սաստկացնում է: Օրինակ՝ դափ-դարտակ, լիփ-լեցուն, լիփ-լիքը, միս-մենակ, կաս-կարմիր, կուպ-կարմիր, կափ-կանաչ, ձեփ-ձերմակ, կամ ձիփ-ձերմակ, սիպ-սիպտակ, սիփ-սեւ ևլն:

202. Վերջածանցները բազմաթիւ են և բառերի ու արմատների վրայ աւելանալով՝ բազմազան կերպով փոփոխում են նրանց հիմնական նշանակութիւնը: Օրինակ՝ ոց ածանցը հետեւեալ բառերի մէջ՝ ռպրոց, ծաղկոց. խարտոց, կթոց. փսփսոց, խշրտոց. մեկանոց, երեքանոց ևլն:

203. Շատ գործածական վերջածանցներն են՝

1. Ակ, — որդեակ, պատանեակ, տնակ, դռնակ, խմբակ, թիակ. խառնակ, բոլորակ, կապուտակ, միջակ, ճաշակ, ախորժակ, դիտակ, էակ, քանդակ, պահակ ևլն:
2. Այից, — երկնային, ծովային, դաշտային, աղգային, մազդկային, տոհմային, ամպրոպային:
3. Անք, — զրկանք, տանջանք, տառապանք:
4. Գից, — ուժգին, ցաւագին, ողորմագին:
5. Գոյց, — լաւագոյն, մեծագոյն, իմաստնագոյն:
6. Եալ, — մեռեալ, անցեալ, բաղադրեալ, ննջեցեալ, անկեալ. դարձեալ, Բարձրեալ, հեծեալ, արկածեալ:
7. Եայ, — ոսկեայ, արծաթեայ, երկաթեայ, քրիստոնեայ. ութամեայ, սեպեայ, պաշտօնեայ:
8. Եան, — արեւելեան, Մամիկոնեան:
9. Եդ, — զօրեղ, ուժեղ, հանճարեղ:
10. Եղէց, — ոսկեղէն, կանաչեղէն, մանղէն:

- 11. ԵՅԻ,—խնձորենի, տանձենի, վարդենի, մայրենի, վայրենի, ոչխարենի, խոզենի:
- 12. ԵՐՈՐՂ, ԲՈՐՂ,—երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ:
- 13. ԻԿ,—հայրիկ, ձեռնիկ, մասնիկ, պարսիկ, հնդիկ, փոքրիկ, կոկիկ, մշտիկ, մեղմիկ, չրջիկ, ապառիկ, ուռուցիկ, ընթացիկ:
- 14. ԻՅ,—գրիչ, բրիչ, վրկիչ, նկարիչ:
- 15. ԻԱՆ,—թնդիւն, հնչիւն, սոսափիւն:
- 16. ԿԱՆ,—աշխարհական, օգնական, պատմական:
- 17. ԿՈՅ, ՈՅ,—զօրանոց, դպրանոց, դպրոց, ծաղկոց, կլթոց, խարտոց, փափոց, մեկանոց, երեքանոց:
- 18. ՈՅՐ, ԱՐԻԱՆ,—սովորոյթ, սովորութիւն, բնոյթ, բնութիւն, ձանձրոյթ, ձանձրութիւն, հասոյթ, մեծութիւն:
- 19. ՈՅ, ԱՆՅ, ԼԿՈՏ,—աւազոտ, աւազուտ, փշոտ, մսոտ, ամաչկոտ, բարկացկոտ, պարծենկոտ:
- 20. ՈՐՂ,—ճանապարհորդ, անցորդ, ձախորդ, քառորդ:
- 21. Ոււած, ոււածք,—յօղուած, հիւսուածք, զանգուած, նաշուածք, գրուածք:
- 22. Ուկ,—գոմշուկ, իշուկ, գեղջուկ, գաղտուկ, գիրուկ, կարմրուկ, բանուկ, նորնլուկ, հեղուկ, կտրուկ:
- 23. Ուկի,—տիրուհի, թագուհի, վարժուհի, իշխանուհի:
- 24. Ոււ(ն), մոււնք,—ուսում(ն), ուսմունք, պատահում, պատահմունք, նկատում, նկատմունք, մտածմունք, գոհացում, հարցում, ցնցում, բորբոքում:
- 25. Ուն,—գիտուն, թուշուն, շարժուն, խօսուն, թրթուն:
- 26. ՍՅԱՆ,—Հայաստան, ծառաստան, այգեստան:
- 27. ԲԱՆ,—գործարան, ննջարան, երգարան:
- 28. ԲԼՆ,—հայերէն, ռուսերէն, չինարէն, յունարէն:
- 29. ՅԻ,—գիւղացի, երևանցի, մշկցի, բերանացի:
- 30. ԻԷՅ,—հոտաւէտ, ծաղկաւէտ, գինեւէտ:
- 31. ԻՅՐ,— թագաւոր, ձիաւոր, հողեր:

Բացի սրանցից կան և ուրիշ շատ վերջածանցներ, ինչպէս՝ ունի՝ Բագրատունի, արքունի, ի՛ք՝ գործիք, չարիք, ի՛ն՝ առաջին, վերջին. ուրդ՝ խորհուրդ, խառնուրդ. կի՛՝ շեշտակի, կողմնակի. աճ՝ շրջան, խթան. ուտօս, աօս, ցի, ուց կիւ՛:

7. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

204. Ածանցման մէջ առանձին տեղ են բռնում դերբայական կամ բայական ածանցները, որոնցով բայարմատներից, գոյականներից ու ածականներից, երբեմն և ձայնարկութիւններից կազմում են անորոշ դերբայները կամ բայերը (§ 106):

205. Անորոշ դերբայի կազմութեան համար պէտք է նկատի ունենալ՝ հիմք, վերջաւորութիւն, լծորդ և միջաձանց:

1. Հիմքը լինում է կամ մի արմատ, կամ մի բառ, լինի պարզ, բարդ թէ ածանցական: Հիմքի մէջ է բայի կամ դերբայի հիմնական իմաստը: Օրինակ՝ կարդալ, խաղալ, կառավարել, թագաւորել բայերի կարդալ, խաղալ, կառավարել, թագաւորել (պարզ բառ), հիմքն են՝ կարդ (բայարմատ), խաղ (պարզ բառ), կառավար (բարդ բառ) և թագաւոր (ածանցական բառ):

2. Վերջաւորութիւնն անորոշ դերբայի վերջի և բաղաձայնն է:

3. Լծորդը վերջաւորութիւնից առաջ եղած ձայնաւորն է՝ ա, ե, ի, որ վերջաւորութեան հետ միասին հիմքի նշանակութեան վրայ աւելացնում են անելու կամ լինելու իմաստ:

4. Միջաձանցը հիմքի և լծորդի մէջ մտած ածանցն է, ինչպէս՝ տեսնել, մտնալ դերբայների մէջ ն, են, որ մտնում են տես, մտ հիմքերի և ե, ն լծորդների մէջ:

206. Անորոշ դերբայի լծորդը նայելով բային լինում է ա, ե, ի ձայնաւորներից մէկը. ինչպէս՝ խաղալ, ասել, խօսիլ:

Գրաբարում կայ և ու ձայնաւորով լծորդ. ինչպէս՝ Թողուլ, արգելուլ, ընծեւնուլ, որ երբեմն մտնում է արեւմտեան աշխարհաբարի մէջ:

Ի լծորդը բարբառային է. գրական լեզուի մէջ նրան սովորաբար փոխանակում է ե. Օրինակ՝ աշխատիլ, խօսիլ, ծաղկիլ, մեռնիլ, յաջողիլ, համարուիլ ևլն. սովորաբար ասւում և աւելի զրոււմ են՝ աշխատել, խօսել, ծաղկել, մեռնել, յաջողել:

Պարզ բայեր.

207. Բայերը նայելով անորոշ դերբայի կազմութեանը՝ բաժանւում են երկու տեսակի՝ պարզ և ածանցական:

Բայը պարզ է կոչւում, երբ ալ, ել, իլ լծորդութիւններն, այսինքն լծորդ ձայնաւորներն ու վերջաւորութիւնը միասին, անմիջապէս աւելանում են բայի հիմքի վրայ. օրինակ՝ խաղալ, ասել, ծաղկիլ:

Բայը ածանցական է կոչւում, երբ հիմքի և լծորդի մէջ մտնում է որեւէ միջաձայն. օրինակ՝ ելնել, զոհանալ բայերի մէջ ն, ան:

208. Միջաձայնները, ըստ այնմ և նրանցով կազմուած դերբայները կամ բայերը, նայելով իրենց իմաստին լինում են՝ սոսկ, ըստմաստակական, պատճառական և կրաւորական:

Սոսկածանց բայեր.

209. Սոսկ միջաձայնները՝ աճ, եճ, ճ, չ բայի հիմքի նշանակութեան վրայ ոչ մի նոր երկրորդական, ածանցական գաղափար չեն աւելացնում: Օրինակ՝ ցանկանալ, ուզենալ, վախենալ, ուռչիլ մի և նոյն իմաստն ունին, ինչ որ պարզ ձևով ցանկալ, ուզել, վախել, ուռիլ: Այսպէս և սոսկածանց բայ են՝ զար-

մանալ, զողանալ, մծտենալ, տեսնել, մեռնել, թռչել (թռնել), փախչել (փախնել) ևլն:

Ե միջաձայնի փոխանակ նել (նիլ) վերջացած բայերը գրաբարում ունին աճ, և այս ձևով աշխարհաբարի մէջ կան գրաբարից առնուած մի քանի բայեր, ինչպէս՝ ուսանել (ուսանիլ), հատանել, բեկանել, շիջանել:

Բազմապատկական բայեր.

210. Բազմապատկական միջաձայնները՝ աճ, ոճ, ս դրուելով ել լծորդութիւնից առաջ՝ կազմում են բազմապատկական բայեր, որոնք ցոյց են տալիս եղելութեան կրկնութիւն կամ բազմապատկութիւն, այսինքն շատ անգամ կատարուելը, կամ շատ անձի կատարելը (§ 196. 2): Օրինակ՝ կոտրել, կոտրատել, կոտրտել, կտրել, կտրատել, կտրտել. մորթել, մորթտել, ջարդել, ջարդոտել. խաճնել, խաճատել. պատռել, պատռտել, պատատռել. փշրել, փշրտել. նստել, նստոտել. կռուել, կռուտել ևլն:

Կան բարբառներ, որոնց մէջ դրեթէ բոլոր բայերն ունին բազմապատկական ձեւ կամ կրկնաւոր բարդութեամբ (§ 196. 2). կամ բազմապատկական ածանցմամբ. ինչպէս՝ գալ, գնալ, զարմանալ ևլն, ունին՝ եկոսել, գնացոսել, զարմացոսել ևլն:

Պատճառական բայեր.

211. Պատճառական միջաձայնները՝ աճն, եճն, ցն դրուելով բայի հիմքի և ել լծորդութեան մէջ՝ կազմում են պատճառական բայեր, որոնք ցոյց են տալիս այնպիսի գործողութիւն, որի ենթական պատճառ է լինում ուրիշին մի բան կատարելու: Օրինակ՝ մոցնել նշանակում է անել, պատճառ լինել, որ մի բան մտնի:

212. Պատճառական միջածանցներից դուռում են.

1. ացն՝ ալ, անալ վերջացած բայերի հիմքի վրայ. ինչպէս՝ խաղալ, զարմանալ ունին՝ խաղացընել, զարմացնել:
2. եցն՝ ել (ել), ենալ վերջացած բայերի հիմքի վրայ. ինչպէս՝ խօսել (խօսիլ), մօտենալ ունին՝ խօսեցնել, մօտեցնել:
3. ցն՝ չել (չիլ), նել (նիլ) վերջացած բայերի հիմքի վրայ. ինչպէս՝ թռչել (թռչիլ), հասնել, մըտնել ունին՝ թռցնել, հասցնել, մտցնել:

Մի քանի նել վերջացած բայերի հիմքի վրայ բաղաձայնների խառնութիւնը մեղմացնելու համար՝ ցն ձևի փոխանակ դուռում է ացն կամ եցն. ինչպէս՝ պրծնել, պրծցնել, պրծացնել. շիջնել (շիջանել), շիջեցնել, շիջցնել. իջնել, իջցնել. իջեցնել.

213. Առանձին ձևով բայի ընկից (§ 242) պատճառական բայեր կազմուում են.

1. Լալ բայի լաց բնից՝ լացացնել, փոխանակ լացցնել.
2. Դառնալ բայի դարծ բնից՝ դարծնել, փոխանակ դարծցնել.
3. Կենալ կալ (դրաբար) բայերի կեաց, կաց բներից՝ կեցնել, կացնել, փոխանակ կեցցնել, կացցնել.
4. Անցնել բայի անց բնից՝ անցնել, փոխանակ անցցնել.
5. Հարց, լից բներից հարցնել, լցնել, փոխանակ հարցցնել, լցցնել.
6. Ուտել ունի կանոնաւոր ուտեցնել և կեր բնից՝ կերցնել.

214. Մի քանի բայերի մէջ, որոնք առնուած են գրաբարից, պահուում է գրաբարի պատճառական ուղանել ձևով կազմութիւնը, ինչպէս՝ մատչել, մատուցանել. յառնել, յարուցանել. ուսանել, ուսուցանել. սնանել, սնուել, սնուցանել: Այսպէս և զեկուցանել, հատուցանել, կառուցանել:

Կրաւորական բայեր.

215. Կրաւորական միջածանցը՝ ու (արտասանուում է ւ, վ) դուռելով ել (ել) լծորդութիւնից առաջ՝ կազմում է կրաւորական բայեր, որոնք ցոյց են տալիս այնպիսի գործողութիւն, որ ենթական մի ուրիշ առարկայից կրում, ստանում է իւր վրայ: Օրինակ՝ սպանուել, ծեծուել:

216. Կրաւորական միջածանցը դուռում է.

1. Պարզ ել (իլ), սոսկածանց նել և բազմապատկական ասել, ոսել, սել վերջացած բայերի համար անմիջապէս ել (ել) լծորդութիւնից առաջ: Օրինակ՝ գրել, գրուել. խօսիլ, խօսուել. տեսնել, տեսնուել. կտրատել, կտրատուել:

2. Ալ, անալ, ենալ և պատճառական ացնել, եցնել, ցնել վերջացած բայերի համար հիմքից յետոյ և ու միջածանցից առաջ աւելանում է աց, եց, ց. օրինակ՝ կարդալ, կարդացուել. գողանալ, գողացուել. յատկանալ, յատկացնել, յատկացուել. վերանալ, վերացնել, վերացուել. ներկայանալ, ներկայացնել, ներկայացուել. հեռացնել, հեռացուել. մտցնել, մտցուել. կայացուել. հեռացնել, հեռացուել:

3. Գրաբարից առած ուցանել ձևով վերջացած պատճառական բայերն ունին երկու ձևով կրաւորական, ինչպէս՝ մատուցանել, մատուցանուել, մատուցուել. յարուցանել, յարուցանուել, յարուցուել:

Չիլ (չել) վերջացած բայերից, ինչպէս և որոշ թուով ուրիշ բայերից, չեն կազմում կրաւորական բայեր:

217. Նոր մտած մի անուղիղ ձև է պատճառական բայերի կրաւորականը կազմել § 216. 1 ձևով, այսինքն ու ածանցը դնելով անմիջապէս ել լծորդութիւնից առաջ, ինչպէս՝ յատկացնուել, ներկայացնուել, մօտեցնուել, վերացնուել, վերցնուել, մտցնուել ևլն, փոխանակ հին և աւելի գործածական ձևերին՝ յատկացուել, ներկայացուել, մօտեցուել, վերացուել, վերցուել ևլն:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

ԹԵՔՈՒՄ.

218. Թե՛նում ասուում է ամանցման մի տեսակը, որով կազմուում են մի շարք բառեր, որոնք սակայն առանձին առանձին նոր բառեր չեն համարուում, այլ նոյն բառի փոփոխութիւնները կամ ձևերը: Օրինակ՝ գնամ, գնաս, գնայ, գնանք, գնաք, գնան: Հաց, հացի, հացից, հացով ևլն:

Թեքման սուումը կոչուում է ձեւաքանութիւն:

219. Փոփոխութիւն կամ ձևեր ունին միայն բայերն ու գոյականները, որոնք կոչուում են փոփոխական բառեր. իսկ միւս տեսակի բառերը՝ ամական, զօդ, ձայնարկութիւն՝ անփոփոխ մի և նոյն ձևով են մնում, ուստի և ասուում են անփոփոխ բառեր:

Անփոփոխ բառերը գոյականաբար գործածուած ժամանակ կարող են իբրև գոյական ձևեր ունենալ. ինչպէս՝ լաւը, լաւի, լաւից. ախ ու վախը, ախ ու վախի, ախ ու վախից ևլն:

220. Բայերի փոփոխութիւնը կամ ձևերի կազմութիւնը կոչուում է խոնարհում, իսկ գոյականներինը՝ հոլովում:

Թե՛նի նշանակում է՝ շուռ տալ, դարձնել, ուղիղ դրութիւնը ծռելով փոխել. խոնարհել նշանակում է՝ իջեցնել, թեքել, ծռել, կռացնել. իսկ հոլովել նշանակում է՝ պատեցնել, դարձնել, փոփոխել: Այս բառերով կոչում են բառերի փոփոխութիւնը, որովհետեւ մի ձեւ շուռ է դալիս, դառնում, փոխուում է ուրիշ ձեւի:

Ա. ԽՈՆԱՐՀՈՒՄ.

1. ՁԵԿԵՐ.

221. Մի բայ խոնարհել նշանակում է ասել այն բոլոր ձևերը, որ կարող է ունենալ բայը:

Բայի ձևերը ցոյց են տալիս դէմք ու թիւ, եղանակ, ժամանակ և դերբայ:

Դէմքի ու թուի մասին տես §§ 84—90:

Եղանակներ.

222. Ամենայն բայ բայիմաստի, դէմքի ու թուի հետ ցոյց է տալիս և եղանակ, այսինքն թէ խօսողն ինչ կերպ է ասում, խօսում եղելութեան մասին:

Հայոց լեզուի մէջ բայերի եղանակները հինգ են՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղծական և հրամայական:

223. Սահմանական եղանակը ցոյց է տալիս իրական եղելութիւն, այսինքն մի եղելութիւն, որ իրօք, իսկապէս լինում է, եղել է, կամ լինելու է. իսկ միւս բոլոր եղանակները ցոյց են տալիս անիրական եղելութիւն, որ միայն մտածուած, կամ կամեցուած, ցանկացուած է:

Սահմանել նշանակում է որոշ, հաստատ, վճռաբար ասել. բացառել մի բան իբրև ստոյգ, իրական եղելութիւն. ուստի սահմանական եղանակով ասած խօսքերը միշտ համապատասխան են իրականութեան, եթէ միայն խօսողը չի սխալուում, կամ սուտ խօսում:

224. Ենթադրական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողը մտածում, ենթադրում, կարծում է, թէ լինում է, եղել է, կամ կը լինի: Օրի-

նակ՝ երբ ասում ենք՝ Նա այս ըոպէիս տանն է: Նա այժմ գնում է: Այն շիշը տանում էր տասը ըստակ,— է, գնում է, տանում էր բայերը սահմանական եղանակի են. նրանց ցոյց տուած եղելութիւններն իրական են, իսկապէս տեղի ունին կամ համապատասխան են իրականութեան: Բայց երբ նոյն խօսքերը շուռ տանք և ասենք՝ Նա այս ըոպէիս տանը կը լինի: Նա այժմ գնալիս կը լինի: Այն շիշը կը տանէր տասը ըստակ,— կը լինի, գնալիս կը լինի, կը տանէր բայերը ենթադրական եղանակի են. նրանց ցոյց տուած եղելութիւնն իրական չէ, այլ մենք այդպէս մտածում, կարծում ենք միայն. կարող է պատահել, որ այդպէս չլինի էլ:

Ենթադրական եղանակը ցոյց է տալիս ուրեմն եղելութեան լոկ հնարաւորութիւնը. մի եղելութիւն, որ կարող է լինել, գուցէ, կարելի է, որ լինում է, եղել է, կամ կը լինի:

225. Հարկադրական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողը մտածում է, բայց ոչ իբրև լոկ ենթադրութիւն, այլ իբրև անհրաժեշտութիւն, անհրաժեշտ հարկ ու պէտք: Թրինակ՝ Նա այժմ տանը կը լինի լոկ հնարաւոր ենթադրութեամբ ասուած խօսք է. բայց Նա այժմ տանը պիտի լինի խօսքը լոկ ենթադրութեամբ չէ ասուած, այլ նշանակում է՝ նա ստիպուած է, պարտաւոր է, հարկադրուած է տանը լինել:

Հարկադրական եղանակն ուրեմն եղելութեան իրական լինելու աւելի մեծ հաւանականութիւն է ցոյց տալիս, քան ենթադրականը:

226. Ըղծական եղանակը ցոյց է տալիս մի եղել-

ութիւն, որ ըղծացում, ցանկացում է, որ լինի, կամ լինէր: Թրինակ՝ Գնամ, տեսնեմ նրան: Մի գնամ, ասես նրան, որ գայ: Մի գնայի՛ր, նրան ասէի՛ր, որ գայ: Աստուած հոգին լուսաւորէ: Ես ուզում եմ, որ դու սովորես:

Ըղծական եղանակը քերականները սովորաբար կոչում են ստորադասական եղանակ:

227. Հրամայական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողն իւր խօսակցին հրամայում է, որ մի բան անէ կամ լինի: Հրամայականն ունի միայն եղակի և յօգնակի երկրորդ դէմք. Թրինակ՝ գնմ, տես, ասմ: Գնացէ՛ք, տեսէ՛ք, ասացէ՛ք:

228. Հրամայական եղանակի վերջում անմայն յ չի գրւում, և վերջին ձայնաւորը սովորաբար վրան ունենում է շեշտ:

Ժամանակներ.

229. Ամենայն բայ ցոյց է տալիս և ժամանակ, այսինքն թէ երբ է կատարւում եղելութիւնը:

230. Ժամանակի դադարաւոր երեք տեսակ է.

1. Ներկայ, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանին կատարուող եղելութիւն, որ դեռ ևս կատարւում է խօսելիս. օրինակ՝ գնում եմ:

2. Անցեալ, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանից առաջ կատարուած եղելութիւն, որ արդէն անցել է. օրինակ՝ գնացի, գնացել եմ:

3. Ապառնի, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանից յետոյ կատարուելիք գործողութիւն, որ դեռ նոր պիտի լինի ասպագայում. օրինակ՝ գնալու եմ, պիտի գնամ:

231. Ներկայ ժամանակը՝ իբրև խօսելու վայրկեան՝ անբաժանելի է. ուստի և տրամաբանօրէն միայն մի ներկայ կայ. Բայց անցեալ և ապառնի ժամանակները մի տեսակ անորոշ են և կարող են տարբեր շրջանների բաժանուել, աւելի առաջ և յետոյ լինելուստի և այս երկու ժամանակի ձևերը լեզուի մէջ մի քանի տեսակ են, կամ մի քանի տեսակ անցեալ և ապառնի ժամանակներ կան, որոնք ցոյց են տալիս աւելի առաջ կամ յետոյ լինելը: Օրինակ՝ գնացել եմ, գնացել էի, գնացած եմ եղել և ըն:

Դերբայներ.

232. Դերբայ աւուում են այն անուններն և ածականները, որոնք ցոյց են տալիս բայական իմաստ առանց դէմքի: Դերբայները լինում են բայանուն կամ անորոշ դերբայ և բայածականներ (§§ 106. 127): Բայածականներն իրենց կողմից լինում են՝ անկատար, ապառնի, անցեալ և ենթակայական դերբայներ:

Դերբայներն իսկապէս բայ չեն, այլ բայի հիմքից կազմուած անուն կամ ածական (մականուն, մակբայ). բայց որովհետև սովորաբար չեն համարւում առանձին բառեր, այլ մի և նոյն հիմքից կազմուած բայի ձևեր, ուստի և մտնում են խոնարհման մէջ: Այս պատճառով բայի ձևերը բաժանում են՝ դիմաւոր ձևեր կամ դիմաւոր բայեր, որ բուն բայերն են. և անդէմ ձևեր կամ անդէմ բայեր, որ դերբայներն են:

233. Անորոշ դերբայը իբրև բայանուն ցոյց է տալիս լոկ բայիմաստ առանց դէմք և դէմքի թիւ, եղանակ և ժամանակ որոշելու: Օրինակ՝ գնալ, ասել, գրել, կարդալ:

234. Անկատար դերբայը բայական իմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան մէջ լինելը, կամ մի կատարողու եղելութիւն, որ դեռ չի կատարուել, վերջացել. այլ դեռ տևում է յարածիգ: Օրինակ՝ ես գնալիս տեսայ նրան նշանակում է՝ երբ դեռ գնում էի, գնալու մէջ էի, գնալու միջոցին տեսայ: Ես գնում եմ նշանակում է՝ ես դեռ գնալու գործողութեան մէջ եմ:

Անկատար դերբայը երկու վերջաւորութիւն ունի՝ ում և իս (սովորաբար աւուում է՝ իս): Ում դըրւում է անորոշ դերբայի ալ, ել (ել) վերջի տեղ. իսկ իս աւելանում է անորոշ դերբայի վրայ: Օրինակ՝ կարդալ լինում է կարդում, կարդալիս տեսնել տեսնում, տեսնելիմ. թռչել, թռչիլ՝ թռչում, թռչելիս:

235. Ապառնի դերբայը բայական իմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան դեռ նոր կատարելի լինելը, կամ գիտաւորութիւն, պէտք մի բան անելու: Օրինակ՝ ես գնալու եմ. գալիք օրերը նշանակում է՝ ես մտադրութիւն ունիմ գնալու, ես պէտք է գնամ. օրերը, որ պէտք է գան:

Ապառնի դերբայը երկու վերջաւորութիւն ունի՝ ու և իք (սովորաբար աւուում է՝ լու, լիք), որոնք երկուսն էլ աւելանում են անորոշ դերբայի վրայ. ինչպէս՝ գալ, գալու, գալիք. գրել, գրելու, գրելիք. թռչել, թռչիլ, թռչելու:

Իբ վերջաւորութեամբ ապառնի դերբայը յաճախ իբրև հասարակ անուն է գործածւում և այս դէպքում աւուում է իբրև առանձին բառ. ինչպէս՝ ուտելիք, խմելիք, ունելիք, վառելիք, հագնելիք և ըն:

236. Անցեալ դերբայը բայական իմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան կատարուած, վերջացած լինելը, ինչպէս՝ զնացած, զնացել եմ:

Ունի երկու վերջաւորութիւն. վաղակատար՝ ել և յարակատար՝ ւծ (տես § 254):

237. Ենթակայական դերբայը բայական իմաստի հետ ցոյց է տալիս և անող կամ եղող լինելու զաղափար: Օրինակ՝ զնացող նշանակում է՝ նա որ գնում է, ով որ գնում է, գնացել է, կամ գնալու է. գնալու գործողութիւնը կատարող:

Վերջաւորութիւնն է միայն ող (տես § 255):

Անցեալ և ենթակայական դերբայներն ևս յաճախ իբրև հասարակ անուն գործածուելով՝ առնուում են իբրև առանձին բառ, ինչպէս՝ մեռել, ծնող, գրող (մատենագիր), Ստեղծող (Սրարիչ) ևլն:

Ենթակայական դերբայը քերականները դնում են իբրև ներկայ դերբայ. բայց այս դերբայը կարող է բոլոր ժամանակների իմաստով եւս բանել եւ յաճախ ժամանակի ոչ մի որոշ իմաստ չի ցոյց տալիս, այլ ախպիսի եղելութիւն, որ միշտ, ամեն ժամանակ կարող է լինել:

2. ՊԱՐԶ ԶԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

238. Խոնարհման ձևերն իրենց կազմութեան նախելով սովորաբար բաժանում են երկու տեսակի՝ պարզ ձևեր կամ պարզ ժամանակներ և քաղաղրեալ ձևեր կամ քաղաղրեալ ժամանակներ:

Պարզ ժամանակները կազմուած են իրօք կամ ըստ երևութին միայն մի բառից. ինչպէս՝ զրեմ, զրես, զրէ, զրէի, զրած ևլն:

Բաղադրեալ ժամանակները կազմուում են երկու

կամ երեք բառից, որոնք իրարուց անջատ են գրուում. ինչպէս՝ զնում եմ, կը զնամ, պիտի զնամ, զնացած եմ եղել, զնացած պիտի լինիմ:

239. Պարզ ժամանակներն են՝

1. Ըղծական եղանակ, որ ունի երկու ձև՝ ներկայ կամ ապառնի և անցեալ:
2. Սահմանական եղանակի անցեալ կատարեալ:
3. Հրամայական եղանակ, որ միայն մի ձև ունի, և
4. Դերբայներ:

240. Պարզ ժամանակների կազմութեան համար պիտի նկատի ունենալ լծորդ, ըուն և վերջաւորութիւն:

241. Լծորդը անորոշ դերբայի և վերջաւորութիւններից առաջ եղած ձայնաւորն է՝ ա, ե, ի (§ 205. 3. 206), որի վրայ աւելանում են վերջաւորութիւնները:

Ի լծորդ կարող են ունենալ.

1. Բոլոր սոսկածանց չել (չիլ) և կրաւորական ուել (ուիլ) վերջացած բայերը. ինչպէս՝ փախչիմ, փախչիս, փախչի, փախչին. փրկուիմ, փրկուիս, փրկուի ելն:

2. Որոշ թուով սոսկածանց նել (նիլ) և պարզ ել (իլ) վերջացած բայեր. ինչպէս՝ մեռնիմ, մեռնիս, մեռնի. մեռնինք, մեռնիք, մեռնին. խօսիմ, խօսիս, խօսի ելն. Այսպէս և ծաղկիլ, տառապիլ, աշխատիլ, խաղարիլ, թափառիլ, խոռովիլ, թմբիլ, կանգնիլ, պառկիլ, բազմիլ, նստիլ, սահիլ, ընկնիլ, մարիլ, նուագիլ, քրտնիլ ևլն (§§ 206. 248. 3):

242. Բունը բայի հիմքից ամանցուած մի ձև է, որի վրայ աւելանում են վերջաւորութիւնները:

Բնի ածանցներն են.

1. Աց, որ աւելանում է ալ, անալ վերջացած բայերի հիմքի վրայ. ինչպէս՝ կարդալ, կարդաց. զարմանալ, զարմաց:
 2. Եց (եաց), որ աւելանում է պարզ ել (իլ) վերջացած բայերի համար հիմքի վրայ և բազմապատկական ու կրաւորական բայերի համար ածանցներից յետոյ. ինչպէս՝ գրել, գրեց, խօսիլ, խօսեց. գրուել, գրուեց. մորթոտել, մորթոտեց:
 3. ացուր, եցուր, ցուր, որ աւելանում է պատճառական ացնել, եցնել, ցնել վերջացած բայերի հիմքի վրայ՝ զարմացնել, զարմացուր. մօտեցնել, մօտեցուր, թոցնել, թոցուր:
- Արևմտեան աշխարհաբարն ունի ացուց, եցուց, ցուց, ինչպէս՝ զարմացուց. մօտեցուց. թոցուց.
4. ուց (ոյց), որ աւելանում է գրաբարից առած ուցանել վերջացած պատճառական բայերի հիմքի վրայ. ինչպէս՝ յարուցանել, յարուց. հատուցանել, հատուց:
 5. Սոսկածանց չել (չիլ) և նել (նիլ) վերջացած բայերը բուն չունին. գրանց հիմքը գործ է ածուում և բնի համար, ինչպէս՝ փախչել, փախ. տեսնել, տես. ելնել, ել. հասնել, հաս:

243. Բայերի բունը հիմքի իմաստ ունի. Բներից այց, եաց (եց), ոյց ածանցներով կազմուածները գործ են ածուում երբեմն իբրև առանձին բառ, սովորաբար սակայն իբրև բազադդրութեան բուն՝ միացած ուրիշ ածանցների կամ բառերի հետ. օրինակ՝ գնալ, գնաց, գնացք, գնացական. լուալ, լուաց, լուացք, լուացարան. զարմալուալ, զարմաց, զարմացք, զարմացում.

աւել, ատեաց, մարդատեաց. հայել, հայեաց, հայեացք, հայեցողութիւն. մատուցանել, մատուց, անմատուց, նաւամատուց. յարուցանել, մեռելյարոյց, ամպայարոյց. ուսուցանել, ուսուցում. կրօնուսոյց ևն:

Պատճառական ցնել վերջացած բայերի համար ևս (212, 3) յաճախ իբրև բազադդրութեան բուն վերցուում է գրաբարի ոյց ածանցով բունը. Թարցնել (Թարուցանել), քանրարաԹարոյց. ուռցնել (ուռուցանել), ուռոյց, ուռոյցք, ուռուցիկ. սառցնել (սառուցանել), սառոյց, սաստկասառոյց ևն:

Պարզ ալ վերջացած բայերից մի քանիսի լծորդն եւս յ բազաձայնով գործ է ածուում իբրև բազադդրութեան բուն. օրինակ մնալ, մնայ, մնայուն. կալ, կայ, կայուն, կայարան. լուալ, լուալ, աղիւտալ, խաչալուսլ. գնալ, գնայ, գնայուն, բարձրագնայ. վիրալ, վիրալ, վարձալ. վիրայ ևն:

244. Վերջաւորութիւն աւուում են այն աննշանակ մասնիկները, որոնք աւելանալով լծորդի և բնի վրայ՝ ցոյց են տալիս դէմք ու թիւ և կազմում են բայի պարզ ժամանակները: Դերբայների վերջաւորութիւններով կազմուում են դերբայները:

245. Բայերի պարզ ձևերը նայելով թէ վերջաւորութիւնները լծորդի, թէ բնի վրայ են աւելանում՝ բաժանուում են երկու խմբի՝ լծորդի ձևերը և ընի ձևերը:

Լծորդի ձևերն են՝ ըղծական եղանակ և անորոշ դերբայ, որից կազմուում են անկատար և ասպառնի դերբայները (§§ 204 հտն. 234, 235):

Բնի ձևերն են՝ Սահմանականի անցեալ կատարեալ և հրամայական եղանակ:

Անցեալ և ենթականայական դերբայները մասամբ լծորդի ժամանակների կարգին են պատկանում, մասամբ բնից են կազմուում:

Ըղձական եղանակ.

246. Ըղձական եղանակը կազմուած է լծորդից, որի վրայ աւելանում են բոլոր բայերի համար հետեւեալ վերջաւորութիւնները.

1. Ներկայ կամ Ապառնի

2. Անցեալ

| | Եզակի Յոգնակի | | Եզակի Յոգնակի | |
|------------|---------------|----|---------------|-----|
| 1-ին դէմք՝ | մ | ցք | ի | իցք |
| 2-րդ դ. | ս | ք | իր | իք |
| 3-րդ դ. | յ,— | ց | ր | ից |

247. Այսպէս խոնարհուած են բացի ըղձական եղանակից՝ այլ և մի քանի բայերի սահմանական եղանակի ներկայ և անցեալ ժամանակները (§§ 273, 274): Օրինակ՝

1. Ներկայ

2. Անցեալ

| | Եզակի Յոգնակի | | Եզակի Յոգնակի | |
|------------------|---------------|--------|---------------|---------|
| 1. Ա. լծորդ՝ կամ | կացք | կացք | կայի | կայիցք |
| | կաս | կաք | կայիր | կայիք |
| | կայ | կաց | կար | կայից |
| 2. Ե լծորդ՝ | եմ | եցք | էի | էիցք |
| | ես | էք | էիր | էիք |
| | է | եց | էր | էից |
| 3. Ի լծորդ՝ | ունիմ | ունիցք | ունէի | ունէիցք |
| | ունիս | ունիք | ունէիր | ունէիք |
| | ունի | ունց | ունէր | ունէից |

248. Ըղձական եղանակի կազմութեան համար պիտի նկատի ունենալ.

1. Ա. լծորդի ներկայ կամ ապառնի ժամանակի եզակի 3-րդ դէմքի վերջաւորութիւնն է անձայն յիսկ անցեալ ժամանակի մէջ՝ ա լծորդի և վերջաւորութեան ի ձայնաւորի միջև մտնում է յ. ինչպէս՝ գնամ, գնաս, գնայ. գնանք, գնաք, գնան. գնալի, գնալիք, գնար. գնալինք, գնալիք, գնալին:

2. Ե և ի լծորդները ներկայ կամ ապառնի ժամանակի եղ. 3-րդ դէմքի համար վերջաւորութիւն չունին. լծորդը մնում է իբրև վերջաւորութիւն, միայն ե տառի տեղ դրւում է է, որ արևելեան աչք միայն ե տառի տեղ դրւում է է: Ե տառի տեղ խարհաբարում յաճախ փոխւում է ի: Ե տառի տեղ է է գրւում և յոգնակի 2-րդ դէմքի մէջ: Ինչպէս՝ գրեմ, գրես, գրէ կամ գրի, գրենք, գրէք, գրեն:

3. Ի լծորդն արևելեան աչխարհաբարում ներկայ կամ ապառնի ժամանակի բոլոր դէմքերի մէջ բացի եզակի 3-րդ դէմքից, սովորաբար փոխւում է ե (է) լծորդի. օրինակ՝ ծաղկեմ, ծաղկես, ծաղկի, ծաղկենք, ծաղկէք, ծաղկեն. համարուեմ, համարուես, համարուի, համարուենք, համարուէք, համարուեն. փախչեմ, փախչես, փախչի և լն. փոխանակ՝ ծաղկիմ, ծաղկիս, ծաղկինք, ծաղկիք, ծաղկին. համարուիմ, համարուիս, համարուինք, համարուիք, համարուին. փախչիմ, փախչիս, փախչինք, փախչիք, փախչին:

4. Ե և ի լծորդներն անցեալ ժամանակի մէջ փոխւում են է. ինչպէս՝ գրէի, գրէիր, գրէր, գրէինք, գրէիք, գրէին. համարուէի, համարուէիր, համարուէր, համարուէինք, համարուէիք, համարուէին:

Աստուծան. Անցեալ կատարեալ.

249. Սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակը կազմուում է ընկց, որի վրայ աւելանում են վերջաւորութիւնները:

Անցեալ կատարեալն ունի երեք տեսակ վերջաւորութիւն՝ ի ձայնաւորով, ա ձայնաւորով և խառն ի, Ե ձայնաւորներով. ուստի և կազմուում են երեք խոնարհում հետեւեալ վերջաւորութիւններով.

- 1. Ի խոնարհում. 2. Ա խոնարհում. 3. Ի, Ե խոնարհում.
- Եզ. Յոզն. Եզ. Յոզն. Եզ. Յոզն.

| | | | | | | |
|---------|----|----|----|----|----|----|
| 1-ին դ. | ի | իճ | այ | ան | ի | իճ |
| 2-րդ դ. | իւ | իբ | ար | ան | իւ | իբ |
| 3-րդ դ. | — | իճ | աւ | ան | եց | իճ |

250. Անցեալ կատարեալի կազմութեան համար պիտի իմանալ.

1. Ի խոնարհման տակ գնում են՝ պարզ, բազմապատկական և կրաւորական բայերը: Եզակի 3-րդ դէմքը չունի վերջաւորութիւն. բունը մնում է իբրև վերջաւորութիւն: Օրինակ՝ զնալ, բուն՝ զնաց, — զնացի, զնացիր, զնաց, զնացինք, զնացիք, զնացին:

Արեւմտեան աշխարհաբարում այս խոնարհման տակ գնում են նաև պատճառական բայերը. օրինակ՝ փախցնել, բուն՝ փախցուց, — փախցուցի, փախցուցիր, փախցուց, փախցուցինք, փախցուցիր, փախցուցին. մատուցանել, բուն՝ մատուց, — մատուցի, մատուցիր, մատուց (մատուց), մատուցինք, մատուցիք, մատուցին:

2. Ա խոնարհման տակ գնում են սուկածանց բայերը: Օրինակ՝ զարմանալ, բուն՝ զարմաց, — զարմացայ, զարմացար, զարմացաւ, զարմացանք, զարմացաք:

զարմացան. իջնել, հիմք և բուն՝ էջ, — իջայ, իջար, իջաւ, իջանք, իջաք, իջան. փախչել, հիմք և բուն՝ փախ, — փախայ, փախար, փախաւ և ին. Այսպէս և ուսանիլ՝ հիմք և բուն ուս, որից ուսայ, ուսար և ին.

3. Ի, Ե խոնարհման տակ գնում են պատճառական բայերը: Օրինակ՝ զարմացնել, բուն՝ զարմացուր, — զարմացրի, զարմացրիր, զարմացրեց, զարմացրինք, զարմացրիք, զարմացրին. փախցնել, բուն՝ փախցուր, — փախցրի, փախցրիր, փախցրեց, փախցրինք, փախցրիք, փախցրին. մատուցանել, բուն՝ մատուց, — մատուցի, մատուցիր, մատուցեց, մատուցինք, մատուցիք, մատուցին:

Անուղղ ձեւ է փախցրեցի, փախցրեցիր, փախցրեցինք, փախցրեցիք, փախցրեցին. զարմացրեցի, զարմացրեցիր, զարմացրեցինք, զարմացրեցիք, զարմացրեցին եւ նմանները: Կրաւորական՝ մօտեցուցի, մօտեցուցիր, մօտեցուցեց, մօտեցուցինք, մօտեցուցիք, մօտեցուցին եւ նմանները:

251. Պարզ իլ և կրաւորական ուիլ վերջացած բայերն արեւելեան աշխարհաբարում սովորաբար գնում են ի խոնարհման տակ, բայց կարող են միշտ և ա խոնարհման տակ ընկնել: Արեւմտեան աշխարհաբարում այդ բայերը միշտ ա խոնարհման տակ են գնում: Օրինակ՝ ծաղկիլ (ծաղկել), ծաղկեցայ, ծաղկեցար, ծաղկեցաւ, ծաղկեցանք, ծաղկեցաք, ծաղկեցանք, ծաղկեցաք, համարուել (համարուել), համարուեցայ, համարուեցար, համարուեցաւ, համարուեցանք, համարուեցաք, համարուեցանք, համարուեցաք, համարուեցանք կամ ծաղկեցի, ծաղկեցիր, ծաղկեց, ծաղկեցինք, ծաղկեցիք, ծաղկեցին. համարուեցի, համարուեցիր, համարուեց, համարուեցինք, համարուեցիք, համարուեցին:

Հրամայական եղանակ.

252. Հրամայական եղանակը կազմուում է ընկն-
Յոգնակի 2-րդ դեմքի վերջաւորութիւնն է էփ,
որ աւելանում է ընդոր քայերի բնի վրայ: Օրինակ՝
գնալ, բուն՝ գնաց, — գնացէք. գրել, բուն՝ գրեց, — գրե-
ցէք. իջնել, բուն՝ էջ, — իջէք. զարմանալ, բուն՝ զար-
մաց, — զարմացէք. փախչել, հիմք և բուն՝ փախ, —
փախէք. փախցնել, բուն՝ փախցուր, — փախցրէք. ա-
րևմտ. աշխ. բուն՝ փախցուց, — փախցուցէք. մատու-
ցանել, բուն՝ մատուց, մատուցէք:

Պարզ ել (իլ) վերջացած, բաղմնապատկական և
կրաւորական բայերի յոգնակի հրամայականը կազմուում
է նաև առանց եց ածանցի. գրեցէք կամ գրէք, աշ-
խատեցէք կամ աշխատէք:

253. Եզակի 2-րդ դեմքը երեք տեսակ է կազ-
մուում համապատասխան անցեալ կատարեալի երեք
խոնարհման.

1. Ի խոնարհման (պարզ, բաղմնապատկական և կրա-
ւորական) բայերի բունը առանց վերջի ց բաղաձայնի
մնում է իբրև հրամայական, միայն վերջի ե-ն փոխ-
ւում է է: Արևելեան աշխարհաբարում այս է-ի տեղ
դրում է սովորաբար իր: Օրինակ՝ գնաց, գնա՛. գրեց,
գրէ՛, գրի՛ր. սիրեց, սիրէ՛, սիրի՛ր. կտրատեց, կտրատէ՛,
կտրատի՛ր:

Արևելեան աշխարհաբարում վերջի է՛ հնչիւնը սովորա-
բար փոխւում է ի՛ հնչիւնի, որ աւելի ժողովրդական լեզուի
մէջ է գործածուում. գրական լեզուի մէջ ի հնչիւնից յետոյ
աւելանում է ր: Օրինակ՝ սիրեց, սիրէ՛, սիրի՛, սիրիր՝ գրեց, գրէ՛,
գրի՛, գրիր՝:

Ի՛ր ձևն ունին պարզ իլ և կրաւորական ուլ վերջա-

գած բայերը. ինչպէս՝ ծաղկիր, աշխատիր, դուրիր, որոնց աշ-
խատէ՛, ծաղկէ՛, դուրէ՛ ձևերը գործածական չեն:

Արևմտեան աշխարհաբարում այս ձևով կազմուում է և
պատճառական բայերի հրամայականը, այսինքն բունն առանց
ց տառի մնում է իբրև հրամայական, միայն գրական լեզուի
մէջ վրան աւելանում է ր: Օրինակ՝ փախցնել, բուն՝ փախցուց,
հրամայ. փախցու՛, փախցու՛ր:

2. Ա խոնարհման (սոսկածանց) բայերն ունին
իր վերջաւորութիւնը, որ աւելանում է բնի վրայ.
Ինչպէս՝ զարմացիր, մտնեցիր, իջիր, փախիր:

3. Ի, Ե խոնարհման (պատճառական) բայերի
բունը և հրամայական է, միայն արևելեան աշխար-
հաբարին յատուկ է ուր բաղադրութեան յետևառա-
ջութիւնը ընդ ձևով: Օրինակ՝ զարմացնել, բուն՝ զար-
մացուր, հրամ. զարմացրու՛. փախցնել, բուն՝ փախ-
ցուր, հրամ. փախցրու՛:

Գրաբարից առած ուղանել վերջացած պատճառական բա-
յերը չունին եզակի հրամայական: Գրաբարում դրանց հրա-
մայականը կազմուում է ըստ ի խոնարհման ձևի, ինչպէս՝
մատուցանել, բուն՝ մատուց, հրամ. մատու՛, յարուցանել, բուն՝
յարուց, հրամ. յարու՛, որ սակայն գործածական չեն աշխար-
հաբարում:

Դերբայներ.

254. Անցեալ դերբայը կազմուում է երկու ձևով.

1. Պարզ ել (իլ) վերջացած և բաղմնապատկական
ու կրաւորական բայերի համար ել (իլ) լծորդութեան
տեղ դրում են վաղակատար՝ ել և յարակատար՝ ած
վերջաւորութիւնները: Օրինակ՝ վաղակատար լինում է
գրել, նստոտել, գրուել. իսկ յարակատար՝ գրած,
նստոտած, գրուած:

Վաղակատար ել վերջաւորութիւնը ծագում է դրաբարի
եալ վերջաւորութիւնից, որ աշխարհաբարում դարձել է ել և
նոյնացել ել լծորդութեան հետ. ինչպէս մեռել, մեռել, հեծեալ
հեծել են դառնում, նոյնպէս դրեալ՝ դրել, դործեալ՝ գործել:

Արեւմտեան աշխարհաբարում վաղակատար ել վերջա-
ւորութիւնը սովորաբար փոխում է եր ձևի. ինչպէս՝ Թողեր
եմ ու եկեր վրերս ու այդիս:

2. Պարզ ալ վերջացած և սոսկածանց ու պատճա-
ռական բայերի համար ել և ած վերջաւորութիւննե-
րը դրում են բնի վրայ: Օրինակ՝ զնալ, զնացած,
զնացել. զարմանալ, զարմացած, զարմացել. մօտենալ,
մօտեցած, մօտեցել. իջնել, իջած, իջել. փախչել,
փախած, փախել. զարմացնել, զարմացրած, զարմա-
ցրել. փախցնել, փախցրած, փախցրել:

Արեւմտեան աշխարհաբարում լինում են՝ փախցնել, փախ-
ցուցած, փախցուցել (փախցուցեր). զարմացնել, զարմացուցած,
զարմացուցել (զարմացուցեր) ևլն:

255. Ենթակայական դերբայը կազմում է եր-
կու ձևով:

1. Բոլոր ել (իլ) վերջացած, այսինքն պարզ ել
(իլ), սոսկածանց նեւ, չեւ և բազմապատկական, պատ-
ճառական ու կրաւորական բայերի համար ող վերջա-
ւորութիւնը դրում է ել (իլ) լծորդութեան տեղ:
Օրինակ՝ գրել, գրող. խօսիլ, խօսող. տեսնել, տեսնող.
փախչել, փախչող. կտրատել, կտրատող. զարմացնել,
զարմացնող. գրուել, գրուող:

2. Բոլոր ալ վերջացած, այսինքն պարզ ալ, սոս-
կածանց անալ, ննալ բայերի համար ող վերջաւորու-
թիւնը դրում է բնի վրայ: Օրինակ՝ զնալ, զնացող,
զարմանալ, զարմացող. մօտենալ, մօտեցող:

Անուղիղ ձեւ է ալ վերջացած բայերի լծորդից կազմել ենթա-
կայական դերբայ. ինչպէս՝ կարգալ, կարող. խաղալ, խաղող. զարմա-
նալ, զարմանող. հեռանալ, հեռանող. մօտենալ, մօտենող եւլն, փոխանակ՝
կարդացող, խաղացող, հեռացող եւլն ձեւերի:

Սակաւաթիւ 6ել (դրաբար՝ աճել) վերջացած սոսկածանց
բայերի բնից ևս կազմում են ող վերջաւորութեամբ դեր-
բայներ, որ սակայն մեծ մասամբ կորցրել են իրենց դերբա-
յական իմաստը և գործ են ածւում իբրև որակական ածա-
կան. ինչպէս՝ զիջող, տեսող, առող ևլն: Այս ձևերը կամ
դրաբարից են առնուած, կամ այս ու այն բարբառներից:
Դրանցից կազմում են և նոր բառեր՝ զիջողաբար, զիջողութիւն,
տեսողութիւն, հասողութիւն, (հատանել) հատող, հատողութիւն,
ուսանել, ուսողութիւն ևլն:

256. Անորոշ, անկատար և ապառնի դերբայնե-
րի կազմութեան համար տես §§204 հտն. 234. 235:

3. ԲԱՂԱԳՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ:

257. Բաղադրեալ ժամանակների կազմութեան
համար պիտի նկատի ունենալ՝ եղանակիչ, օժանդակ
բայ և դերբայ:

258. Եղանակիչներն են կը և պիտի բառե-
րը, որոնք դրուելով ըզձական եղանակի ներկայ
կամ ապառնի՝ և անցեալ ժամանակների վրայ՝ կազ-
մում են ենթադրական և հարկադրական եղանակ-
ները:

1. Ենթադրական եղանակի ներկայ կամ ապառ-
նի և անցեալ ժամանակները կազմում են կը եղա-
նակիչով. ինչպէս՝ կը զնամ, կը զնաս, կը զնայ,
կը զնանք, կը զնաք, կը զնան. կը զնայի, կը զնայիր ևլն:

2. Հարկադրական եղանակի ներկայ կամ ապառ-
նի և անցեալ ժամանակները կազմում են պիտի եղա-

նակիչով. ինչպէս՝ պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնայ եւն. պիտի գնայի, պիտի գնայիր եւն:

Կը եղանակիչը, որ ծագած է կայ բառից, այժմ առանձին բառ չի համարուում, այլ մասնիկ. ուստի երբ բայը ձայնաւորով է սկսուում, ը ձայնաւորը սղուում է և բային կպած է գրուում՝ կասէ, կերթայ, կուտէ, կընկնի, կողորմի, կոլորէ (արտասանուում է կօլորմի, կօլորէ). երբեմն ապաթարց է գրուում ը ձայնաւորի սղուումը ցոյց տալու համար. ինչպէս՝ կ'ասէ, կ'երթայ, կ'ողորմի. իսկ երբ բայը բաղաձայնով է սկսուում, կը եղանակիչը սովորաբար անջատ է գրուում՝ կը բերեմ, կը խօսի, կը վազէ. բայց կան գրողներ և միացած՝ կըբերեմ, կըտանեմ, այլ և՛ կ'բերեմ, կ'տանեմ, կ'խօսեմ:

Պիտի եղանակիչն առանձին բայ է և նշանակուում է պէտք է, որ և երբեմն փոխանակուում է պիտի բառին. ինչպէս՝ պիտի գնամ, պէտք է գնամ:

259. Օժանդակ բայերն են՝ եմ և լինիմ, որոնց վրայ դրուում են դերբայները և կազմում բաղադրեալ ժամանակներ: Եմ՝ բայով կազմուած ձևերը կոչուում են գլխաւոր բաղադրեալ ժամանակներ, իսկ լինիմ՝ բայով կազմուածները՝ երկրորդական բաղադրեալ ժամանակներ:

260. Գերբայներից օժանդակ բայերի հետ իբրև բաղադրիչ վերցուում են՝ անորոշ, անկատար, անցեալ՝ վաղակատար և յարակատար դերբայները. Իսկ ապառնի դերբայներից միայն լու վերջաւորութեամբ կազմուած ձևը:

Թէպէտ եւ ենթակայական եւ լիք վերջաւորութեամբ ապառնի դերբայներն եւս յաճախ դրուում են եմ եւ լինիմ բայերի վրայ, բայց այդ դործածութիւնները չեն մտնում խոնարհման մէջ իբրև բաղադրեալ ժամանակներ. այլ դերբայը բայի խնդիրն է համարուում, ենչպէս՝ կարծես մինք նրան ասող լինեք, որ սպասի: Կոչնպէս երբեմն իբրև օժանդակ բայ բանում է կամ բայը, բայց դրանով կազմուած

ձևերն եւս չեն մտնում խոնարհման մէջ. ինչպէս՝ Դու այդպիսի բան տեսած կա՞ս: Իսկապէս բայերի բուն ձևերն են միայն պարզ ժամանակները, իսկ բոլոր բաղադրեալ ժամանակներն անիսկական ձևեր են եւ չպիտի մտնէին խոնարհման մէջ:

Գլխաւոր բաղադրեալ ժամանակներ.

261. Եմ բայն ունի միայն երկու ժամանակ՝ սահմանական ներկայ և անցեալ (§ 247). ուստի և այս բայով կազմուում են սահմանական ներկայ եւ անցեալ բաղադրեալ ժամանակներ, որոնք իրենց իմաստն ստանում են բաղադրիչ դերբայից և եմ՝ բայի ժամանակներից:

262. Եմ բայի վրայ դրուում են անկատար, ապառնի, վաղակատար և յարակատար դերբայները և կազմում հետևեալ գլխաւոր բաղադրեալ ժամանակները.

- | | |
|----------------------------|------------------------|
| 1. Անկատար կամ բուն ներկայ | նստուում եմ, գնում եմ. |
| 2. Անկատար անցեալ | նստուում էի, գնում էի. |
| 3. Ապառնի ներկայ | նստելու եմ, գնալու եմ. |
| 4. Ապառնի անցեալ | նստելու էի, գնալու էի. |
| 5. Վաղակատար ներկայ | նստել եմ, գնացել եմ. |
| 6. Վաղակատար անցեալ | նստել էի, գնացել էի. |
| 7. Յարակատար ներկայ | նստած եմ, գնացած եմ. |
| 8. Յարակատար անցեալ | նստած էի, գնացած էի. |

263. Անկատար դերբայի ձևերից եմ բայի հետ վերցուում է միայն ում՝ վերջաւորութիւնը. երեք բայի համար միայն՝ գալ, լալ, սալ, որոնք չունին անկատար դերբայ ում՝ ձևով, վերցուում է լիս վերջաւորութիւնը, ինչպէս՝ գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ:

4. ԿԱՆՈՆԱԻՈՐ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐ.

264. Բոլոր բայերի ըղծական եղանակը և քաղա-
ղրեալ ժամանակները միակերպ են խոնարհուում. իրա-
րուց տարբերում են միայն սահմանական անց. կա-
տարեալը և հրամայականը, որոնք նայելով իրենց վեր-
ջաւորութիւններին՝ երեք խմբի կամ երեք կանոնա-
ւոր խոնարհման են բաժանուում (§§ 249. 250. 253):

Ներքեում դրուած են երեք կանոնաւոր խոնարհման
օրինակներ, որոնց մէջ նման կազմութեան ձևերը մի անգամ
են միայն առնուած. իսկ բնի և լծորդի կազմութիւնը որոշե-
լու համար ամեն խոնարհման երկու կամ երեք բայ են դը-
րուած: Ենթակայական և լիք վերջացած ապառնի գերբայնե-
րը չեն առնուած, որովհետև բաղադրիչ չեն:

1. Ի ԽՈՆԱՐՀՈՒՄ.

265. Պարզ, քաղմապատկական և կրաւորական
բայեր, որոնց լծորդն է ա, ե. բունը՝ աց, եց:

Արեւմտեան աշխարհաբարում նաև պատմաւական բայեր
որոնց լծորդն է ե. իսկ բունը՝ ացուց, եցուց, ցուց, — սյց (ուց):

Սահմանական

| | |
|--------------------------|----------------|
| Անկատար կամ լուծն ներկայ | Անկատար անցեալ |
| գնում եմ | գնում էի |
| գնում ես | գնում էիր |
| գնում է | գնում էր |
| գնում ենք | գնում էինք |
| գնում էք | գնում էիք |
| գնում են | գնում էին |

Ապառնի ներկայ

- գնալու եմ
- գնալու ես
- գնալու է
- գնալու ենք
- գնալու էք
- գնալու են

Ապառնի անցեալ

- գնալու էի
- գնալու էիր
- գնալու էր
- գնալու էինք
- գնալու էիք
- գնալու էին

Վաղակատար ներկայ

- գնացել եմ
- գնացել ես
- գնացել է
- գնացել ենք
- գնացել էք
- գնացել են

Վաղակատար անցեալ

- գնացել էի
- գնացել էիր
- գնացել էր
- գնացել էինք
- գնացել էիք
- գնացել էին

Յարակատար ներկայ

- գնացած եմ
- գնացած ես
- գնացած է
- գնացած ենք
- գնացած էք
- գնացած են

Յարակատար անցեալ

- գնացած էի
- գնացած էիր
- գնացած էր
- գնացած էինք
- գնացած էիք
- գնացած էին

Անցեալ կատարեալ

- գնացի
- գնացիր
- գնաց
- գնացինք
- գնացիք
- գնացին
- գրեցի
- գրեցիր
- գրեց
- գրեցինք
- գրեցիք
- գրեցին

Հրամայական

- գնա՛
- գրե՛
- (գրի՛) գրի՛ր
- գնացե՛ք
- գրեցե՛ք
- գրէ՛ք

Ըղձական

Ներկայ կամ Ապառնի

| | |
|-------|----------|
| գնամ | գրեմ |
| գնաս | գրես |
| գնայ | գրէ, գրի |
| գնանք | գրենք |
| գնաք | գրէք |
| գնան | գրեն |

Անցեալ

| | |
|---------|--------|
| գնայի | գրէի |
| գնայի | գրէիր |
| գնար | գրէր |
| գնայինք | գրէինք |
| գնայիք | գրէիք |
| գնային | գրէին |

Ենթադրական

Ներկայ կամ Ապառնի

կը գնամ
կը գնաս
կը գնայ
կը գնանք
կը գնաք
կը գնան

Անցեալ

կը գնայի
կը գնայիր
կը գնար
կը գնայինք
կը գնայիք
կը գնային

Հարկադրական

Ներկայ կամ Ապառնի

պիտի գնամ
պիտի գնաս
պիտի գնայ
պիտի գնանք
պիտի գնաք
պիտի գնան

Անցեալ

պիտի գնայի
պիտի գնայիր
պիտի գնար
պիտի գնայինք
պիտի գնայիք
պիտի գնային

Դերբայներ

Անորոշ՝ գնալ, գրել (գրուել, յատկացուել, ծաղկել)
Անկատար՝ գնում, գրում. գնալիս, գրելիս.
Ապառնի՝ գնալու, գրելու.
Վաղակատար՝ գնացել, գրել.
Յարակատար՝ գնացած, գրած:

2. Ա. ԽՈՆԱՐՀՈՒՄ.

266. Սոսկաձանց բայեր, որոնց լծորդն է՝ ա, ե, ի, իսկ բունը՝ աց, եց և հիմք: Այս ձևով անցեալ կատարեալ կարող են ունենալ և պարզ իլ, կրատրական ուիլ վերջացած բայերը, որոնց բունն է եց:

Սահմանական

Հրամայական

Անցեալ կատարեալ

| | | | | |
|-----------|---------|-------|----------|------|
| զարմացայ | մտեցայ | մտայ | | |
| զարմացար | մտեցար | մտար | զարմացիր | մտիր |
| զարմացաւ | մտեցաւ | մտաւ | մտեցիր | |
| զարմացանք | մտեցանք | մտանք | | |
| զարմացաք | մտեցաք | մտաք | զարմացէք | մտէք |
| զարմացան | մտեցան | մտան | մտեցէք | |

(Պարզ իլ, կրատր. ուիլ)

Ըղձական

| | | | |
|-----------|--------------|---------|------------|
| ծաղկեցայ | համարուեցայ | ծաղկիմ | համարուիմ |
| ծաղկեցար | համարուեցար | ծաղկիս | համարուիս |
| ծաղկեցաւ | համարուեցաւ | ծաղկի | համարուի |
| ծաղկեցանք | համարուեցանք | ծաղկինք | համարուինք |
| ծաղկեցաք | համարուեցաք | ծաղկիք | համարուիք |
| ծաղկեցան | համարուեցան | ծաղկին | համարուին |

Դերբայներ

Անորոշ՝ զարմանալ, մտենալ, մտնել,
ծաղկիլ, համարուիլ.

Անկատար՝ զարմանում, մտենում, մտնում.
զարմանալիս, մտենալիս, մտնելիս.

Ապառնի՝ զարմանալու, մտենալու, մտնելու.

Վաղակատար՝ զարմացել, մտեցել, մտել.

Յարակատար՝ զարմացած, մտեցած, մտած.

3. Ի, Ե ԽՈՆԱՐՀՈՒՄ.

267. Պատճառական ըայեր, որոնց լծորդն է Ե, Իսկ բունը՝ ացուր, Էցուր, ցուր, ոյց:

Սահմանական

Հրամայական

Անցեալ կատարեալ

| | |
|------------|-----------|
| զարմացրի | մատուցի |
| զարմացրիր | մատուցիր |
| զարմացրեց | մատուցեց |
| զարմացրինք | մատուցինք |
| զարմացրիք | մատուցիք |
| զարմացրին | մատուցին |

| | |
|-----------|----------|
| զարմացրու | — |
| զարմացրէք | մատուցէք |

Արեւմտեան աշխարհ:

| | | | |
|--------------|-----------|-------------|---|
| զարմացուցի | մատուցի | զարմացնուր | — |
| զարմացուցիր | մատուցիր | | |
| զարմացուց | մատուց | | |
| զարմացուցինք | մատուցինք | | |
| զարմացուցիք | մատուցիք | զարմացուցէք | |
| զարմացուցին | մատուցին | մատուցէք | |

Դերբայներ

Անորոշ՝ զարմացնել, մատուցանել.

Անկատար՝ զարմացնում, մատուցանում.

զարմացնելիս, մատուցանելիս.

Ապառնի՝ զարմացնելու, մատուցանելու.

Վաղակատար՝ զարմացրել, մատուցել.

Յարակատար՝ զարմացրած, մատուցած.

5. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

268. Անկանոն ասուում են այն բայերը, որոնց ըռնը, երբեմն միայն բնից կազմուած մի քանի ձևերը, տարբերուելով սովորական կազմութիւնից՝ ուրիշ կերպ, կամ հիմքից են կազմուում, կամ թէ չէ մի կանոնաւոր խոնարհումից միւսին են շեղուում:

Անկանոն բայերի անկանոնութիւնը միայն սահմանական անցեալ կատարեալի, հրամայականի, անցեալ դերբայի, երբեմն և ենթակայական դերբայի մէջ է:

Անկանոն բայերի կրաւորականը սովորաբար բնից է կազմուում:

269. Ա. Պարզ բայեր.

1. Գալ, բուն՝ եկ: Սահմ. Անցեալ կատարեալ՝ եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան: Հրամայական՝ եկ, եկէք, այլ և՛ արի, արիք: Անցեալ դերբայ՝ եկած, եկել: Ներակայական դերբայ՝ եկող (տես § 263):

2. Լալ, բուն՝ լաց. Սահմ. անց. կաս. լացի, լացիր, լացաւ, լացինք, լացիք, լացին: Հրամ. Լացի, լացէք: Անց. դերբ. լացած, լացել: Ներբ. դերբ. լացող (տես § 263):

Լաց բնից կազմուած է լացել սլարզ բայը, որի ձեւերից դործածական են՝ Սահմ. անց. կատ. եզ. 5-րդ դեմքը՝ լացեց. Հրամածական՝ լացի՛ր. եւ սպա դերբայներ՝ լացել, լացելիս եւլն:

Լալ բայի տեղ արեւելեան աշխարհաբարում, մասնաւանդ բնից կազմուած ժամանակների համար, սովորաբար գործ է ածուում լաց լինել յարադրեալ բայը:

3. Տալ, բուն՝ տալ, տաւր. կրաւորական՝ տաւել: Սահմ. անց. կաս. տուի, տուիր, տուաւ, տուինք, տուիք, տուին կամ տուեցի, տուեցիր, տուեց, տուեցինք, տուեցիք, տուեցին: Հրամ. տուր, տուէք: Անց. դերբ. տուած, տուել: Ներբ. դերբ. տուող (տես § 263):

4. Ստել, բուն՝ ասաց. կրաւորական՝ ասուել: Սահմանց. կաս. ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին: Ժողովրդական ձևով՝ ասի, ասիր, ասաւ, ասինք, ասիք, ասին (արևմտեան աշխարհաբարում՝ ըսի, ըսիր, ըսաւ, ըսինք, ըսիք, ըսին), այլ և կանոնաւոր՝ ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցին: Հրամ. ասա՛, ասացէ՛ք, այլև՝ ասէ՛ք:

5. Բերել, բուն՝ բեր. կրաւորական՝ բերուել: Սահմ. անց. կաս. բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին: Այլ և կանոնաւոր՝ բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցին: Հրամ. բեր, բերէք:

6. Հանել, բուն՝ հան, կրաւորական՝ հանուել: Սահմ. անց. կաս. կանոնաւոր՝ հանեցի, հանեցիր, հանեց ելն ձեռի հետ ունի նաև քիչ գործածական՝ հանի, հանիր, հանաւ, հանինք, հանիրք, հանին: Հրամ. յոգնակի՛ հանէք:

7. Նստել (նսիլ), բուն՝ նստ: Սահմ. անց. կաս. կանոնաւոր՝ նստեցի, նստեցիր, նստեց կամ նստեցայ, նստեցար, նստեցաւ ելն. ձեռքի հետ կայ նաև՝ նստայ, նստար, նստաւ, նստանք, նստարք, նստան: Հրամ. կանոնաւոր՝ նստիր ձեռի հետ կայ և նիստ (քիչ գործածական):

8. Սկսել, բուն՝ սկիս (որից սկիզբ): 9. Ծնել, բուն՝ ծից. կրաւորական՝ սկսուել, ծնուել: Սահմ. անց. կաս. կանոնաւոր՝ սկսեցի, սկսեցիր, սկսեց ելն. ծնեցի, ծնեցիր, ծնեց ելն ձեռքի հետ ունին նաև՝ սկսայ, սկսար, սկսաւ, սկսանք, սկսարք, սկսան. ծնայ, ծնար, ծնաւ, ծնանք, ծնարք, ծնան:

10. Ուտել, բուն՝ կեր. կրաւոր. ուտուել: Սահմ. անց. կաս. կերայ, կերար, կերաւ, կերանք, կերարք, կերան: Հրամ. կեր, կերէք: Անց. դերք. կերած, կերել:

Կրաւորական Սահմ.անց. կաս. կերուեցաւ: Անց. դերք. կերուած, կերուել:

270. Բ. Սոսկածանց բայեր.

11. Բանալ, բուն՝ բաց, կրաւոր. բացուել: Սահմ. անց. կաս. բացի, բացիր, բացաւ, բացինք, բացիք, բացին: Հրամ. բաց, բացէք: Անց. դերք. բացած, բացել: Ենթ. դերք. բացող:

Բաց բնից կազմուած կայ բացել պարզ բայը, որի ձեւերից գործածական է Սահմ. անց. կատ. եղ. 3-րդ դէպքը՝ բացեց:

Բանալ բայի տեղ արեւելեան աշխարհաբարում, մանաւանդ բնից կազմուած Ժամանակների Համար, յաճախ գործ է ածուած բաց անել յարադրեալ բայը:

12. Ենեալ, կանոնաւոր ձեւերի հետ ունի և բուն՝ կաց, որից Սահմ. անց. կաս. կացայ, կացար, կացաւ, կացանք, կացաք, կացան (կանոնաւոր՝ կեցայ, կեցար ելն): Հրամ. կաց, կացէք (կանոնաւոր՝ կեցիր, կեցէք): Անց. դերք. կացած, կացել: Ենթ. դերք. կացող:

Գիտեալ բայի Սահմ. անց. կատ. Հրամ. եւ Անց. դերք. լինում են նաեւ և ձայնաւորի սղմամբ՝ գիտեցայ, գիտցար, գիտեցել, գիտցել, գիտցէք. գիտեցած, գիտցած: Բարբառային է Անց. կատ. գիտացի, գիտացիր եւլն:

13. Բարձալ, բուն՝ բարձ, կրաւորական՝ բարձուել: Սահմ. անց. կաս. բարձայ, բարձար, բարձաւ, բարձանք, բարձաք, բարձան: Հրամ. բարձիր, բարձէք: Անց. դերք. բարձած, բարձել: Ենթ. դերք. բարձող:

Այսպէս խոնարհուում է և համբառուալ բայը:

Բարձ բնից կազմուած կայ եւ բարձել կանոնաւոր պարզ բայը. որի բոլոր ձեւերը գործածական են:

14. Դարձալ, բուն՝ դարձ: Սահմ. անց. կաս. դարձայ, դարձար, դարձաւ, դարձանք, դարձաք, դարձան: Հրամ. դարձիր, դարձէք: Անց. դերք. դարձած, դարձել: Ենթ. դերք. դարձող:

Ժողովրդական է Անց. կաս. դառայ, դառար, դառաւ, դառանք, դառարք, դառան: Հրամ. դառ, դառէք: Անց. դերք. դառած, դառել:

15. Զարկել, բուն՝ զարկ, կրաւորական զարկուել, զարկուել: Սահմ. անց. կաս. զարկի, զարկիր, զարկաւ, զարկինք, զարկիք, զարկին: Հրամ. զարկ, զարկէք: Անց. դերք. զարկած, զարկել: Ենթ. դերք. զարկող կամ զարնող:

Զարկ բնից կազմուած է՝ կանոնաւոր զարկել պարզ բայը, Անց. կաս. զարկեցի, զարկեցիր, զարկեց եւլն: Հրամ. զարկիր, զարկեցէք:

Անուղղղ ձեւ է՝ զարնեցի, զարնեցիր եւլն. Ժողովրդական է՝ զարկայ, զարկար, զարկանք, զարկաք, զարկան:

16. Անել, բուն առ (զրարար առառ, որից՝ հացարար), կրաւոր. առուել: Սահմ. անց. կաս. արի, արիր, արաւ, արինք, արիք, արին (արեմտ. աշխ. ըրի, ըրիր, ըրաւ ելն), կամ արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցին: Հրամ. արած, արեք: Անց. դերք. արած, արել:

Անուղիղ ձեւ է կրաւորական անուել, որ բաւական գործածական է: Անց. կատարեալն եւ Անց. դերբայը միայն առուել ձեւերն են կազմուած:

17. Գնել, բուն՝ դիր, կրաւորական՝ դրուել: Սահմ անց. կաս. զրի, զրիր, զրաւ, զրինք, զրիք, զրին կամ զրեցի, զրեցիր, զրեց ելն: Հրամ, դիր, զրեք: Անց. դերք. զրած, զրել:

Անուղիղ ձեւ է կրաւորական դնուել:

18. Տանել, բուն՝ տար, կրաւոր. տարուել: Սահմ. անց. կաս. տարայ, տարար, տարաւ, տարանք, տարաք, տարան: Հրամ. տար, տարեք: Անց. դերք. տարած, տարել:

Անուղիղ ձեւեր են՝ Անց. կաս. տարեցի, տարեցիր, տարեց եւլն. կամ տարի, տարիր եւլն. Կրաւորական՝ տանուել:

19. Ելնել: 20. Տեսնել: 21. (վեր)կալնել ունին բուն և Հրամ. ել, տես, (վեր)կալ:

Կալնել, բունել, փակել իմաստով, նաև ի խոնարհման տակ է գնում՝ կալնեցի, կալնեցիր, կալնեց ելն:

22. Առնել, բուն առ. կրաւոր. առնուել: Հրամ. առ. Սահմ. անց. կաս. արեմտ. աշխարհարարում՝ առի, առիր, առաւ, առինք, առիք, առին: Արեւել. աշխ. կանոնաւոր՝ առայ, առար, առաւ ելն:

Գաւառական է՝ առեցի, առեցիր, առեց եւլն:

23. Թողնել, բուն՝ թող, կրաւոր. թողնուել: Հրամ, թող: Սահմ. անց. կաս. թողի, թողիր, թողաւ, թողինք, թողիք, թողին: Բարբառային է կանոնաւոր ձեւը՝ թողայ, թողար, թողաւ ելն:

Թող բնից կազմուած է թուլի պարզ բայը, որի ձևերից գործ է ածուում աւելի անց. կասարեալը՝ թողեցի, թողեցիր, թողեց, թողեցինք, թողեցիք, թողեցին:

24. Լինել (լինիլ), բուն՝ եղ: Սահմ. անց. կաս. եղայ, եղար, եղաւ, եղանք, եղաք, եղան: Հրամ. եղիք, եղէք: Անորոց դերք. լինել (լինիլ): Ըղծական ցերկայ կամ ապառնի՝ լինիմ, լինիս, լինի, լինինք, լինիք, լինին: Բարբառային է ե լծորդով՝ լինեմ, լինես, լինենք, լինէք, լինեն. 3-րդ դեմքը միայն՝ լինի: Անց. դերք. լինում, լինելիս: Ապ. դերք. լինելու: Անց. դերք. եղած, եղել: Կնք. դերք. եղող:

Լինիլ բայի բունը եւ բնի ժամանակները ծագում են գաւառական եղնիլ (գրաբար եղանիլ) բայից, որի լծորդի ժամանակները չկան գրական լեզուի մէջ:

6. ՊԱԿԱՍՍԱԻՈՐ ԲԱՅԵՐ.

271. Պակասաւոր աւուում են այն բայերը, որոնց մի քանի ժամանակները չկան կամ գործածական չեն. պակաս ձևերը սովորաբար լրանում են ուրիշ նոյնանիշ բայերից: Այսպէս պակասաւոր բայեր են անկաշունն բայերի մէջ գրուածները՝ ուտել, անց. կատ. կերայ և լինել, անց. կատ. եղայ:

272. Պակասաւոր բայ են և հետևեալները:

1. Երբայ, բուն երբաց, (կրաւորական՝ երբացուել): Գործածական են միայն լծորդի ձևերը. Ըղծական ցերկայ՝ երթամ, երթաս, երթայ ելն. Ըղծ. անց. երթայի, երթայիր, երթար ելն: Ենթադրական՝ կերթամ ելն. կերթայի ելն: Հարկադրական՝ պիտի երթամ ելն. պիտի երթայի ելն: Անորոց դերք. երթալ: Անկաս. դերք. երթալիս (ժողովրդական է՝ երթում, արտասան. էրթում): Ապ. դերք. երթալու: Պակասը լրանում է գնալ բայից:

2. Յանկայ, գործածական են միայն Ըղծական, Ենթադր. և Հարկադրական եղանակներն ու Անորոց դերբայը. ցանկամ. և Հարկադրական եղանակներն ու Անորոց դերբայը. ցանկամ. ցանկայի, կը ցանկամ, կը ցանկայի, պիտի ցանկամ, պիտի ցանկայի, ցանկալ: Պակասը լրանում է ցանկանալ բայից:

3. Յաւալ, լուալ, չունին անկատար դերբայ ում ձևով, որով պակասում են նաև Սահմ. անկաս. ցերկայ և անցեալ

ժամանակները: Պակասը լրանում է յոյս ունենալ, լուանալ բայերից: Յուսալ բայը Սահմ. անց. կաս. և Հրամ. կանոնաւոր ձևերի հետ ունի և անկանոն՝ յուսացայ, յուսացար, յուսացաւ կէն. յուսացիր:

4. Վեր ունել չունի բնի ժամանակները. պակասը լրանում է վեր կալնել ամբողջական բայից:

Ընդունել պարզ բայի համար եւս երբեմն գրաբարից փոխառութեամբ գործ է ածւում Սահմ. անց. կաս. ընկալայ, ընկալար եւն. Հրամ. ընկալ:

5. Զբօսնել (զբօսանք անել), յառնել (յարու թիւն անել), մասշիլ (մօտենալ), փակչիլ (կալչել), մարսնչիլ (կողնել), բեկանել (բեկել), հասսնել (հատել) և մի քանի ուրիշ բայեր, որ առնուած են գրաբարից, միայն լծորդից կազմուած ժամանակներն ունին: Ինչի ժամանակների համար գործ են ածւում կամ նոյնանիշ բայերի ձևերը, կամ գրաբար ձևեր, ինչպէս՝ յարեայ, յարեաւ կէն: Զբօսնեցի, մարսնչեցի, զբօսնի՛ր, մարսնչի՛ր կէն ձևերը նոր կազմուած են:

7. ՅԱԻՆԵԼԱԻՈՐ ԲԱՅԵՐ.

273. Յաւելաւոր ասուում են այն բայերը, որոնք Սահմ. անկատ. ներկայի և անցեալի համար ունին կրկին ձեւեր՝ պարզ և բաղադրեալ, որոնք իմաստով և գործածութեամբ տարբերւում են իրարուց: Օրինակ՝ Նա այժմ տանն է, խօսքը մի որոշ դէպքի մասին է. իսկ նա այդ ժամերին տանն է լինում, — խօսքը սովորաբար կատարուած, կրկնուած եղելութեան մասին է:

274. Յաւելաւոր բայերն են.

- 1. Եմ, 2. կամ (խոնարհումը տես § 247), — յաւելաւոր ձևեր են լինել բայի:
- 3. Ունիմ, ունիս, ունի կէն (խոնարհումը տես § 247), — յաւելաւոր ժամանակներ են ունենալ բայի: Բարբառային է

է լծորդով՝ ունեմ, ունես, ունենք, ունէք, ունեն. 3-րդ դէպքը միայն ունի:

4. Պիտեմ, գիտես, գիտե, գիտենմ, գիտեմ, գիտեն. գիտի, գիտիր, գիտեք, գիտիմ, գիտիմք, գիտիմք, — յաւելաւոր ժամանակներ են գիտենալ բայի:

5. Պիտի, պիտէք, (պիտեմ ե, պիտեք եք), — յաւելաւոր ժամանակներ են պիտեմ լինել բայի:

Պիտիմ, պիտիս, պիտիմք, պիտիմք, պիտիմք, պիտիմք, պիտիմք, — յաւելաւոր ժամանակներ են:

6. Կարող եմ, կարող ես կէն. կարող էի, կարող էիր կէն (արևմտ. աշխ. կրնամ, կրեսա, կրնայ, կրնանք, կրնամք, կրնանք. կրնայի, կրնայիր, կրնար կէն), — յաւելաւոր ժամանակներ են կարողանալ, կարենալ, կարող լինել բայերի:

7. Արժեմ, արժես, արժե, արժենմ, արժեմք, արժեմք, արժեի, արժիր, արժեք, արժեիմք, արժեիմք. — յաւելաւոր ժամանակներ են արժել, արժենալ բայերի:

275. Մի քանի բայի համար եւ կան պարզ յաւելաւոր ձևեր. գրանք սակայն իսկական յաւելաւոր ձևեր չեն, որովհետև իմաստով չեն տարբերւում բաղադրեալ ժամանակներից. ինչպէս՝ կարծեմ, կարծես. (կարծում եմ, կարծում ես, կը կարծես), ասես (ասում ես, կասես), խնդրեմ (խնդրում եմ, կը խնդրեմ), յուսամ (յոյս ունիմ, կը յուսամ), զոհանամ, վախենամ: Հնացած են՝ կամիմ, կամիս, կամի կէն փոխանակ կամենում եմ կէն ձևերի:

8. ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԲԱՂԱԳՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

276. Երկրորդական բաղադրեալ ժամանակները կազմուում են խոնարհուող լինել բայի ժամանակներից և անկատար, ապառնի և անցեալ դերբայներից: Գրական լեզուի մէջ անցեալ դերբայի միայն յարական լեզուի մէջ անցեալ դերբայի միայն յարակատար ձևն է վերցւում իբրև բաղադրիչ, իսկ անկատար դերբայի երկու ձևն ևս կարող են վեր-

ցուել. բայց երբ խոնարհուող լինել բայը անկատար ներկայ և անցեալ է, ում վերջաւորութեան կրկնութիւն չանելու համար առնուում է միայն լիս վերջաւորութիւնը. ինչպէս՝ գնում կը լինի կամ գնալիս կը լինի, բայց միայն գնալիս է լինում և ոչ գնում է լինում:

277. Երկրորդական բաղադրեալ ժամանակները նայելով բաղադրիչ դերբային՝ երեք կերպ են՝ կատարուող (անկատար), կատարուած (անցեալ) և կատարելի (ապառնի: Տես §§ 234—236):

Ներքեում դրուած են երեք կերպի խոնարհման օրինակներ, որոնց մէջ առնուած են միայն եզակի 1-ին դէմքերը: Մի քանի ժամանակներ գործածական չեն կամ հարուղէպ են պատահում. ուստի դուրս են ձգուած:

278. Կատարուող կերպ. Սահմ. Անկաս. Գերկայ՝ գնալիս եմ լինում: Անկ. անց. գնալիս էի լինում: Վաղ. Գերկ. գնալիս եմ եղել, գնում եմ եղել: Անց. կաս. գնալիս եղայ: Ըղծ. Գերկ. և անց. գնալիս լինիմ, գնում լինիմ. գնալիս լինէի, գնում լինէի: Ենթադր. Գերկ. և անց. գնալիս կը լինիմ, գնում կը լինիմ. գնալիս կը լինէի, գնում կը լինէի: Հարկ. Գերկ. և անց. գնալիս պիտի լինիմ, գնալիս պիտի լինէի: Անորոշ դերբ. գնալիս լինել:

279. Կատարուած կերպ. Սահմ. անկաս. Գերկ. գնացած եմ լինում: Անկաս. անց. գնացած էի լինում: Վաղ. Գերկ. գնացած եմ եղել: Անց. կաս. գնացած եղայ: Հրամ. գնացած եղիր: Ըղծ. Գերկ. և անց. գնացած լինիմ, գնացած լինէի: Ենթադր. Գերկ. և անց. գնացած կը լինիմ, գնացած կը լինէի: Հարկ. Գերկ. և անց. գնացած պիտի լինիմ, գնացած պիտի լինէի: Անորոշ դերբ. գնացած լինել:

280. Կատարելի կերպ. Սահմ. անկ. Գերկ. գնալու եմ լինում: Անկ. անց. գնալու էի լինում: Վաղ. Գերկ. գնալու

եմ եղել: Վաղ. անց. գնալու էի եղել: Անց. կաս. գնալու եղայ: Ըղծակ. Գերկ. և անց. գնալու լինիմ, գնալու լինէի: Ենթադր. Գերկ. և անց. գնալու կը լինիմ, գնալու կը լինէի: Հարկ. Գերկ. և անց. գնալու պիտի լինիմ, գնալու պիտի լինէի: Անորոշ դերբ. գնալու լինել:

281. Արեւմտեան աշխարհաբարում չկայ անկատար դերբայ, ուստի պակասում են այս դերբայով կազմուած բոլոր ժամանակները, որոնց փոխանակում են ուրիշ ձևեր: Սահմ. անկաս. Գերկ. և անց. ժամանակների տեղ գործ են ածուած Ենթադրական ներկայ կամ ապառնի և անցեալ ժամանակները. որով արեւմ. աշխ. կը բերեմ նշանակում է թէ բերում եմ և թէ կը բերեմ. իսկ կը բերեի՝ թէ բերում էի և թէ կը բերեի: Այս պատճառով արեւելեան ենթադրական ներկայ կամ ապառնի և անցեալը արեւմտեան աշխարհաբարում դրուած են իբրև սահմանական ներկայ (որ և ապառնի է) և անցեալ:

Արեւմտեան աշխարհաբարում կան առանձին բաղադրեալ ժամանակներ, որ կազմուած են եղել (եղեր) դերբայից, որ անփոփոխ է մնում, և ենթադրական (արեւմտեան՝ սահմանական) և հարկադրական ներկայ և անցեալ ժամանակներից. ինչպէս՝ կերբամ եղեր, կերբայի եղեր, պիտի տեսնե եղեր: Նոյնպիսի բաղադրեալ ժամանակներ կազմուած են և եղել: Նոյնպիսի բայերից, ինչպէս՝ կայ եղել, ունի եղել, գիտե յաւելաւոր բայերից, ինչպէս՝ կայ եղել, ունի եղել, գիտե եղել, որ երբեմն գործ են ածուած և արեւելեան աշխարհաբարում և նշանակում են՝ ասում են թէ կայ, եղել է. ասում են թէ ունի, ունեցել է. ուրիշների ասելով՝ կայ, ունի:

9. ԲԱՅԱՍԱԿԱՆ ՁԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

282. Բացասական մակբայները ոչ, չը, մի՛ դրուելով բայի վրայ՝ բայի ցոյց տուած դրական եղելութիւնը ժխտում են, այսինքն՝ հերքում, մերժում են: Օրինակ՝ դրական՝ ասայ. ասում, խօսում է. գնացէ՛ք. բացասական՝ չասայ. ոչ ասում է, ոչ խօսում. մի՛ գնաք:

Ոչ առանձին գործածութեամբ կարող է դրուել բոլոր ձևերի վրայ. մի՛ դրուում է միայն հրամայականի վրայ, իսկ չը՝ մնացած բոլոր ձևերի վրայ:

283. Ըղձական եղանակը, սահմ. անցեալ կասարեալը, սահմ. յաւելաւոր ներկան ու անցեալը և դերբայները բացասականի համար չունին առանձին ձևեր. դրանց վրայ դրուում է բացասական չը մակբայը և կազմում բացասական ձև: Օրինակ՝ ասեմ, չասեմ. գրէի, չը գրէի. տեսաւ, չը տեսաւ. ունիմ, չունիմ. գիտես, չը գիտես. ասել, չասել. ասած, չասած. ասող, չասող:

Չայնաւորից առաջ դրուում է չ և բայի հետ միացած է գրուում. իսկ բաղաձայնից առաջ գրուում է չը և բայից անջատ են գրում. ինչպէս՝ չասաց, չողորմեց, չեկաւ.—չը պրեց, չը խօսեց. Բայց կան դրողներ և միացած՝ չըպրեց, չըխօսեց, աւելի առանց ը տառի՝ չըպրեց, չըխօսեց:

Աւելորդ նորաձեւութիւն է սպաթարցով դրել՝ չ'եմ, չ'ես, չ'է, չ'ուրակելմ եւլն:

284. Հրամայական եղանակի բացասականը, որ կոչւում է արգելական, կազմւում է մի՛ մակբայով, որ վրան միշտ շեշտ ունի:

Արգելականի վերջաւորութիւններն են՝ եզակի 2-րդ դէմքի համար ը, իսկ յոգնակի 2-րդ դէմքի համար ք: Երկու վերջաւորութիւնն էս դրուում են լծորդի վրայ. Ե լծորդը եզակիում սովորաբար դառնում է ի. իսկ ի լծորդը կարող է Ե-ի փոխուել (§ 248. 3): Օրինակ՝

- Եզ. Մի կարգար մի զարմանար մի գրիւր (գրեր)
- մի խօսիր (խօսեր):
- Յոգն. Մի կարգաք մի զարմանաք մի գրէք
- մի խօսէք (խօսիք):

Արևելեան աշխարհաբարում արգելականի եզակի ը վերջաւորութիւնը սովորաբար փոխուում է Լ տառի, որ և խօսակցական լեզուի մէջ յաճախ դուրս է ընկնում: Ե լծորդն այս դէպքում միշտ ի լծորդի է փոխուում. ինչպէս՝ մի՛ կարողաւ, մի՛ կարողա(յ). մի՛ զարմանաւ, մի՛ զարմանա(յ). մի՛ գրիւ, մի՛ գրի. մի՛ փախչիւ, մի՛ փախչի:

Երբ Լ վերջաւորութիւնը դուրս է ընկնում, ա ձայնաւորից յետոյ սովորաբար անձայն յ են դնում, որ աւելորդ է:

Ժողովրդական ձեւ է արգելականի յոգնակին կազմել միմ մակբայով. ինչպէս՝ մի՛ք կարգալ, մի՛ք ասիլ, մի՛ք գնալ: Անուղիղ ձեւ է դրական հրամայականի վրայ մի մակբայը դնելով արգելական կազմել. ինչպէս՝ մի՛ գնացէք, մի՛ զարմացէք, մի՛ իջէք, մի՛ բեր, մի՛ կեր փոխանակ մի՛ գնաք, մի՛ զարմանաք, մի՛ իջնէք, մի՛ բերիլ, մի՛ ունիլ ձեւերի. Պարզ բայերի մի՛ գրիւր, մի՛ կտրիւր, մի՛ գնալ(յ), մի՛ կարգալ(յ) արգելականները թէպէտ նոյնանում են դրական հրամայականի հետ, բայց սրանից չեն ծագում:

285. Ենթադրական եղանակի բացասականը կազմւում է եմ՝ օժանդակով և անորոշ դերբայով: Բացասական չ մակբայը դրուում է օժանդակ բայի վրայ, որ սովորաբար դերբայից առաջ է ընկնում: Եզակի 3-րդ դէմքը միշտ չի ձևն ունի: Դերբայի Ե լծորդը միշտ փոխուում է ի ձայնաւորի. Օրինակ.

| | | | | | |
|------|------|--------------------|------|--------|------|
| | | Ներկայ կամ սուլանի | | Անցեալ | |
| չեմ | գնալ | չեմ | գրիւ | չէի | գնալ |
| չես | գնալ | չես | գրիւ | չէիր | գնալ |
| չի | գնալ | չի | գրիւ | չէր | գնալ |
| չենք | գնալ | չենք | գրիւ | չէինք | գնալ |
| չէք | գնալ | չէք | գրիւ | չէիք | գնալ |
| չեն | գնալ | չեն | գրիւ | չէին | գնալ |

Անորոշ դերբայի յ վերջաւորութիւնը խօսակցական, երբեմն և գրական լեզուի մէջ յաճախ դուրս է ընկնում: Ա ձայնաւորից յետոյ այս դէպքում սովորաբար անձայն յ են գրում, որ աւելորդ է: Օրինակ՝ չեմ գրի, չեմ խօսի, չեմ գնա(յ), չեմ զարմանա(յ):

Արեւմտեան աշխարհաբարում դերբայի վերջի լ-ը փոխւում է ր, որի առաջ ե և ի լծորդներն անփոփոխ են մնում: Ներկայի (որ և ապառնի § 281) մէջ օժանդակ բայի եզակի 3-րդ դէմքի չի ձևը երբեմն դառնում է չը՝ (չ) շեշտով: Օրինակ՝ չեն տար, չեն դատաւարտեր, չի պահպաներ, չի պակտիր, չի վտահիր: չէր մնար, չէր ուզեր, — չվախնար, չը՞ մնար, չերթար, չառներ, չկենար չբարեւեր, չուտուիր, չընդունիր, չկարմիրի, չպոտիր, չյողներ, չնայիր, — փոխանակ՝ չի վախնար, չի՞ մնար, չի կենար, չի կարմիրի ելն: Նոյնպէս յաւելաւոր բայերի համար՝ չեմ վտեր, չես դիտեր՝ չի դիտեր ելն. չեմ կրնար, չես կրնար ելն:

286. Հարկադրական եղանակի բացասականը կազմւում է չը մակբայով, որ սովորաբար գրւում է խոնարհուող բայի վրայ. բայց կարող է և եղանակիչ պիտի բայի վրայ գրուել: Օրինակ՝ պիտի չգնամ, չըպիտի գնամ:

287. Բաղադրեալ ժամանակների մէջ չը բացասականը գրւում է եմ օժանդակի վրայ, որ սովորաբար դերբայից առաջ է ընկնում. օրինակ՝ չեմ ասում, չես ասում, չէի ասում, չեմ ասել, չեմ ասելու ելն. Ասած չեմ լինում, ասած չեն լինում ելն:

Եթէ օժանդակը միայն լինիմ է, բացասականը սովորաբար գրւում է լինիմ օժանդակի վրայ. բայց կարող է և դերբայի վրայ գրուել, բայցի անկատար դերբայից: Օրինակ՝ ասած չլինիմ, չասած չլինիմ. գնալու չլինի, չգնալու չլինի ելն:

Ներկայ ժամանակների մէջ եմ օժանդակի բացասական երբորդ դէմքը չէ՝ յաճախ ժողովրդական ձևով դառնում է չի. ինչպէս՝ չէ ասում, չէ ասել, չէ ասելու դառնում են՝ չի ասում, չի ասել, չի ասելու:

Դուր, լալ օալ բայերի Սահմ. անկատար ներկայի և անցեալի վերջի ս տառը կարող է դուրս ընկնել, երբ օժանդակ բայն առաջ է գրւում. օրինակ՝ տալիս եմ, գալիս եմ, լալիս եմ. բայց չեմ տալի(ս), չեմ գալի(ս), չեմ լալի(ս). չէի գալի(ս), չէր գալի(ս) ելն:

288. Յարադրեալ բայերի (§ 198) խոնարհման համար պիտի նկատի ունենալ, որ բացասական չեմ օժանդակը կարող է և յարադրից առաջ գրուել և յարադրի ու բայի մէջ մտնել: Օրինակ՝ չեմ ցոյց տալի(ս), ցոյց չեմ տալիս. չեմ քաց անում, քաց չեմ անում:

Դրական ձևի մէջ եմ օժանդակը սովորաբար մտնում է յարադրի և բայի մէջ: Օրինակ՝ ցոյց եմ տալի(ս), պար է գալի(ս), քաց ենք անում. բայց ցոյց տուած ենք լինում, քաց արած ենք լինում ելն:

Բ. ՀՈԼՈՎՈՒՄ.

1. ՉԵՒԵՐ ԵՒ ԻՐԵՆՅ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

289. Մի գոյական հոլովել նշանակում է ասել այն բոլոր ձևերը, որ կարող է ունենալ գոյականը. Գոյականի ձևերը ցոյց են տալիս թիւ և հոլով:

Ա. Թիւ.

290. Գոյականի թիւը երկու տեսակ է՝ եզակի և յոգնակի:

Եզակի ասում է գոյականի այն ձևը, որ ցոյց է տալիս մի հատ առարկայ. իսկ յոգնակի կոչում է այն ձևը. որ ցոյց է տալիս մէկից աւելի կամ շատ նոյն տեսակի առարկայ (§§ 88. 89): Օրինակ՝ ծառ, քաղաք եզակի են, իսկ ծառեր, քաղաքներ՝ յոգնակի:

291. Յոգնակին կազմում է եզակի թուի վրայ աւելանալով միավանկ անուններին եւ մասնիկը, իսկ բազմավանկներին՝ ներ: Բազմավանկների վերջի անձայն յ-ն դուրս է ընկնում: Օրինակ՝ պատ, պատեր. պարտէզ, պարտէզներ. պսակ, պրսակ, պսակներ. քահանայ, քահանաներ. ծառայ, ծառաներ:

292. Բարդ բազմավանկ անունների վրայ յոգնական եւ մասնիկն է դրւում, երբ երկրորդ բազադրիչ բառը միավանկ է և բարդութեան ժամանակ պահում է իւր բուն իմաստը: Օրինակ՝ սեւահող (սեւ հող), սեւահողեր, անձրեւաջուր (անձրևի ջուր), անձրեւաջրեր. զօրագունդ (զօրքի գունդ), զօրագնդեր:

մօրաքոյր (մօր քոյր), մօրաքոյրեր: Այսպէս և դասագրքեր, դասակարգեր, քարաժայռեր, գրասններ, վանելափայտեր, պարսաքարեր ևլն: Բայց քարասիրտ (քար սիրտ ունեցող) ունենում է քարասիրտներ. նոյնպէս՝ մարդասէր (մարդ սիրող), մարդասէրներ. ձկնորս, ձկնորսներ ևլն:

293. Աստղ, կոճիւղ, եզր, վազր, տարր, փոքր բազմավանկ անունների յոգնակին երկու ձևով է լինում՝ աստղեր, աստղներ. կոճիւղեր, կոճիւղներ. եզրեր, եզրներ. վազրեր, վազրներ. տարրեր, տարրներ. փոքրեր, փոքրներ:

294. Կան միավանկ անուններ, որոնք յոգնակիում ունին ներ մասնիկը, բայց ն հնչիւնը յոգնականի վերջաւորութեան մաս չէ, այլ բառի բնի մաս, որ աշխարհաբարում դուրս է ընկել և յոգնակիում, ինչպէս և բառակազմութեան ժամանակ, վերականգնում է: Օրինակ՝ մատ, մատներ (մատներ, մատնանիշ). ոտ, ոտներ (ոտնատակ, ոտնաման, ոտնակոխ). ձեռ, ձեռներ (ձեռնադրել, ձեռնարկել). հարս, հարսներ (հարսնախօս, հարսնառ). ակ, ակներ ևլն:

Անձ(ն), մաս(ն) թէպէտ և ունին բնի մէջ ն, որ վերականգնում է բառակազմութեան ժամանակ, ինչպէս անձնական, մասնաւոր ևլն, բայց յոգնակի ունին առանց ն տառի՝ անձեր, մասեր:

Բ. Հոլովներ.

295. Հոլով ասում են գոյականի այն ձևերը, որոնք ցոյց են տալիս, թէ գոյականը խօսքի մէջ ինչ

պիսի լրացում է դառնում մի ուրիշ բառի, կամ իբրև խնդիր ինչպիսի կախում ունի իւր խնդրառու բառից:

Հոլովները կազմում են վերջաւորութիւններով, օրինակ՝ քաղաք, քաղաքի, քաղաքից, քաղաքով, քաղաքում:

Մշխարհաբարի հոլովները հինգ են՝ ուղղական, տրական, քացառական, գործիական և ներքոյական:

Ամեն հոլով նայելով տեղին՝ խօսքի մէջ մի քանի տեսակ կախում կարող է ցոյց տալ, կամ մի քանի տեսակի պաշտօն վարել: Օրինակ՝ Ջուր չկայ: Նա Ջուր խմեց: Առաջին խօսքի մէջ Ջուր բառն ենթակայ է, իսկ երկրորդի մէջ նոյն բառը նոյն ձևով խնդիր է:

Հոլովներն իրենց վերջաւորութեամբ՝ խօսքի մէջ ճիշտ նոյն պաշտօնն են կատարում, ինչ որ կապերը, այսինքն խնդիրները կապում են իրենց խնդրառուի հետ (§§ 151. 152). ուստի և յաճախ հոլովներն ու կապերը կամ կապական բառերը փոխանակում են իրար: Օրինակ՝ Անէծքն անիծողին կը դառնայ նոյն է թէ՛ Անէծքը դէպի անիծողը կը դառնայ:

Ուղղական հոլով:

296. Ուղղական կոչում է առաջին հոլովը, որովհետև գոյականի ուղիղ, անփոփոխ ձևն է. ինչպէս՝ հաց, ջուր, քաղաք:

Միևս բոլոր հոլովներն ուղղականի նկատմամբ ասում են թե՛ հոլով, որովհետև թեքուած, այսինքն փոփոխուած ձևով են լինում:

Ուղղական հոլովը լինում է կոչական անուն, ենթակայ և խնդիր. իսկ թեք հոլովները լինում են միայն խնդիր՝ առարկայական կամ պարագայական խմաստով (§ 144):

297. Կոչական անունն և ենթակայի համար պէտք է իմանալ:

1. Կոչական սեռերը դրւում է միայն ուղղական հոլովով: Օրինակ՝ Կու՛մք, քեզ ասե՛մ. կու՛լայ, դու լսի՛ր (§§ 172—175):

2. Ծերական դրւում է միայն ուղղական հոլովով, եղակի բայի հետ եղակի ուղղական, յոգնակի բայի հետ յոգնակի ուղղական: Օրինակ՝ Թռչունը թռչում է. Թռչունները թռչում են:

Ենթական լրացում է բայի դէմքի, որից անբաժան է և դէմքի թիւը. ուստի երբական և բայք դէմքով ու բաւով համաձայն են դրւում, ինչպէս՝ ես եկայ, դու եկար, նա եկաւ. մենք եկանք, դուք եկար, նրանք եկան. Ողորմելիս կարծում էի, թէ... Սշակերտներդ եկար (§ 134):

Բազմակի երբականների բայը սովորաբար յոգնակի է դրւում. եթէ ենթականերից մէկն առաջին դէմքով է, բայը դրւում է յոգնակի առաջին դէմքով. եթէ առաջին դէմքով ենթակայ չկայ, բայց կայ երկրորդ դէմքով ենթակայ, բայը դրւում է յոգնակի երկրորդ դէմքով. իսկ եթէ բոլոր ենթակաները երրորդ դէմքով են, բայը դրւում է յոգնակի երրորդ դէմքով: Օրինակ՝ Նս. դու եւ եղբայրս գնացինք, Դու եւ եղբայրս գնացիք, եղբայրս եւ նա գնացին:

Եղակի ենթակայի բայը կարող է եւ յոգնակի դրուել. երբ ենթական եղակի ձեւով յոգնական կամ հաւարական խմաստ ունի. այսինքն բազմութիւն է ցոյց տալէս: Օրինակ՝ Ժամաւոր դուրս եկան ու ցուեցին իրենց սներ: Աւակերտների մեծ մասը գնացել են գրօսելու: Ուխտաւոր արտասուքն աչքներին վանքի չորս կողմը պսոյց են գալիս: Տեղ ու դագար չկայ. հիմզն ուխտ է անում, քար ցերեւ են լցում: Ամեն ձիւս վրայ ցնած են երեք հոգի:

298. Ուղղական խնդիրները նայելով իրենց խմաստին լինում են:

1. Կողմնակի երբակայական խնդիր, օրինակ՝ Սայլը շրջուելուց յետոյ ճանապարհ ցոյց տուող շատ կը լինի:

2. Ասարգեալ, որ դրուելով եմ (լինիմ) բայի հետ, ցոյց է տալիս ենթակայի ինչ, ինչ բան լինելը: Օրինակ՝ Չայլամը քոչուն է:

Ստորագեալը կարող է լինել եւ ածական, որ ցոյց է տալիս ենթակայի ինչպիսի, քանի եււն լինելը: Օրինակ՝ Տիգրանը ջանասէր է:

3. Ուղիղ խնդիր կամ կրօղ առարկայ, որ իւր վրայ կրում է ենթակայի գործողութիւնը, այսինքն ներգործւում, ազդւում է, կամ առաջ է դալիս ենթակայի գործողութիւնից: Օրինակ՝ Ամեն ջուր գերան չի բերիւ երեխան պատուեց գիւրբ: Անշուր ջրադացն ալիւր չի սղար:

Ուղիղ խնդրի նկատմամբ բոլոր բայերը բաժանւում են երկու տեսակի՝ անցողական եւ անանցողական բայեր: Անցողական ասւում են այն բայերը, որոնք ունին կամ կարող են ունենալ ուղիղ խնդիր: Անանցողական ասւում են այն բայերը, որոնք չեն կարող ունենալ ուղիղ խնդիր կամ կրող առարկայ: Բոլոր պատահական բայերն անցողական են. իսկ կրաւորական բայերն՝ անանցողական. մնացած բայերը կամ անցողական են եւ կոչւում են ներգործական բայ, ինչպէս՝ գրել, տեսնել (մի բան). կամ անանցողական են եւ կոչւում են չեզոք բայ, ինչպէս՝ գալ, նստել, մնալ եւլն:

4. Պարագայական խնդիրներ, որ ցոյց են տալիս տեղ, ժամանակ, որակ, քանակ, նպատակ (§ 141):

5. Մականուանական խնդիրներ (§ 139):

Թեք հոլովներ.

299. Տրական հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս այն առարկան, որին մի բան տրւում, մատուցւում է, կամ մօտեցւում, ընծայւում է, վերազարւում, վերաբերւում, պատկանւում է: Օրինակ՝ Նա հաց տուաւ աղիւտին: Մենք մօտեցանք Տիգրանին: Այս երկը վերազարւում է Խորենացուն:

Տրական հոլովը սեռական է կոչւում, երբ խընդիր է լինում մի անտանն և որոշում է, թէ անտանն ցոյց տուած առարկան ի՞նչ կամ ինչի է ընծայւում, վերազարւում, վերաբերւում կամ պատկանւում: Օրինակ՝ հացի խնդիր նշանակում մի խնդիր, որ վերաբերւում է հացի, հացի վերաբերած խնդիր. վանքի կալուած նշանակում է մի կալուած, որ վերաբերւում, պատկանւում է մի վանքի, վանքի պատկանած կալուած:

300. Բացառական հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս այն առարկան կամ տեղը, որից մի բան «ի բաց է առնւում», այսինքն առնւում, հեռացւում է: Օրինակ՝ Նա սեղանից հեռացաւ: Նա գիւղացուց ցորենն զնեց: Նա դռնէ դուռ է ընկել:

Հոլովական վերջաւորութիւններն են՝ նայելով բառին և տեղին՝ ից, ուց, է:

Է վերջաւորութիւնը յատուկ է արեմտեան աշխարհաբարին. արեւելեանի մէջ միայն որոշ դէպքերում է գործածւում այդ ձեւը, ինչպէս՝ դռնէ դուռ, երկրէ երկիր ման գալ:

301. Գործիական հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս այն գործիքը, որով մի բան լինում է. կամ այն անձը կամ իրը, որի միջոցով մի բան կատարւում է: Օրինակ՝ Թրով շկտրածը հացով կը կտրուի: Հոլովական վերջաւորութիւնն է ով (երբեմն ք):

302. Ներհոյական հոլովը ցոյց է տալիս այն տեղը կամ առարկան, որի մէջ կամ ներսը մի բան է, կամ լինում է: Օրինակ՝ Նա քաղաքում է: Այս բանը կատարուեց գիւղում:

Հոլովական վերջաւորութիւնն է ում:

Ներքոյական բառը գրւում են եւ ներհոյական, կազմուած ներգոյ բառից, որ նշանակում է՝ ինչ որ ներսը կայ, ներսը եղածը:

Արեւմտեան աշխարհաբարում ներքոյական հոլով չկայ. նրա իմաստով գործ է անւում միշտ կամ մէջ կապական բառը, կամ ուղղական, երբեմն տրական հոլովը: Արեւելեան աշխարհաբարում ևս անձի, վերացական, երբեմն և նիւթեղէնի անուանները յաճախ ներքոյական հոլով չունին, կամ ներքոյականը գործածական չէ: Նոյն իմաստով գործ են անւում դարձեալ կամ մէջ կապական բառը, կամ ուղղական և տրական հոլովները: Օրինակ՝ գործի մէջ, մարդու մէջ, կաթի մէջ ելն:

Չայնափոխութիւն.

303. Հոլովելու ժամանակ ձայնափոխութեան կանոնները ճշգրտեամբ չեն պահուում, թէպէտ և բառն ածում է:

Չայնափոխութիւն կրում են սովորաբար ի, ու ձայնաւորները (§§ 185. 186), որոնք սակայն բազմաժանկ անունների յոգնակիւմ անփոփոխ են մնում. ինչպէս՝ գիրք, զրքի, զրքեր. ամիս, ամսից. սուրբ, սրբի, սրբեր. թիւ, թուի, թուեր. հովիւ, հովուի. ձու, ձուի, ձուեր (արտաս. ձրւի, ձրւեր). լեզու, լեզուի (արտաս. լեզւի), բայց ամիսներ, հովիւներ, լեզուներ՝ հարուստներ, բժիշկներ և չն:

Կան բառեր, որոնց մէջ ի, ու ձայնաւորներն անփոփոխ են մնում. կան բառեր ևս, որոնց մէջ ի, ու ձայնաւորները նայելով գրողին՝ կարող են և անփոփոխ մնալ և փոփոխուել. ինչպէս՝ նախատինք, նախատինքի. կարծիր, կարծիրի. հայրենիր, հայրենիրի. հարսանիր, հարսանիրի այլ և հարսանքի. յունիս, յունիսի. մայիս, մայիսի. թռչուն, թռչունի. երբեմն և թռչնի. երկուս, երկուսի կամ երկսի. ուրիշ, ուրիշի. երբեմն ուրշի. անուն, անունի. անունից. հագուստ, հագուստի. ղեղնուց, ղեղնուցի. հեղուկ, հեղուկի. հայրիկ, հայրիկի. անուս, անուսի և չն:

2. ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄ.

304. Անունները նայելով տրական հոլովի կազմութեանը՝ յօթը տեսակ են հոլովում, կամ հայեփէնում եօթը հոլովում կայ:

1. Ի հոլովում.

305. Այս հոլովման տրականը կազմում է ի ձայնաւորով, որ աւելանում է ուղղականի վրայ: Օրինակ՝

| | Եզակի | | Յոգնակի | |
|-------|----------|-------|-------------|---------|
| Ուղ. | քաղաք | ջուր | քաղաքներ | ջրեր |
| Տր. | քաղաքի | ջրի | քաղաքների | ջրերի |
| Բաց. | քաղաքից | ջրից | քաղաքներից | ջրերից |
| Գործ. | քաղաքով | ջրով | քաղաքներով | ջրերով |
| Ներք. | քաղաքում | ջրում | քաղաքներում | ջրերում |

306. Ի հոլովման տակ դնում են անունների և դոյա-կանաբար առնուած մականունների (§ 138) մեծագոյն մասը, ինչպէս և փոխանուն սեռականները, այսինքն անուան փոխանակող սեռականները: Միւս հոլովումների տակ դնացող անուններն ևս մեծ մասամբ վեր են ածւում այս հոլովման:

Արևմտեան աշխարհաբարում յոգնակի տրականն ունի ու վերջաւորութիւնը՝ քաղաքներու, ջրերու, որ և երբեմն մտնում է արեւելեան աշխարհաբարի մէջ:

Յաճախ սեռականի անունը (§ 299) կրկնութիւն չանելու համար զեղչւում է եւ սեռականն ընդունելով և յօղք փոխանակում է իւր անունը եւ նրա հոլովով գործածւում Օրինակ՝ Ես քո գիրքը տարայ, Տիգրանինը (այսինքն՝ Տեգրանի գիրքը) բերի. կամ Տեգրանի գիրքը տարայ, քանր (այսինքն՝ քո գիրքը) բերի: Տիգրանինը, քանր փոխանուն սեռական են: Եթէ սեռականը ձայնաւորով է վերջանում՝ անուան զեղչուելու ժամանակ ևր (ևն) կրկն յօղք է ընդունում. իսկ եթէ բաղաձայնով է վերջանում, միայն մի և (ր) է ստանում, ինչպէս՝ իմր, քոնր, Տեգրանինը (§ 323):

307. Այս հոլովման տակ դնացող բառերի համար պիտի նկատի ունենալ.

1. Մի թուականը յօգ ընդունելիս և հոլովելիս դառնում է մինը, մինի, մինից և չն: Ամեն մինը, ամեն մինի և չն:
2. Երկու, քանի, մի քանի յօգ ընդունելիս և հոլովելիս դառնում են՝ երկուսը, երկուսի (երկսի), երկուսից և չն. արեւմտ.

աշխ. երկուրք. երկուքի. քանիսը. քանիսի. քանիսից. մի քանիսը. մի քանիսի կէն:

3. Եօրը, թաւը հոլովում են եօթի, տասի, կամ եօթնի տասնի կէն:

4. Իճը հոլովում է իննի, իննից կէն:

5. Ամենը, բայօրը, իւրաքանչիւրը, ամեն մէկը, ամեն ինչ չունին յոգնակի. գրանց կզակին գործ է արւում և յոգնական իմաստով: Անձի համար ամենը բառի յոգնակին է ամենը, որ հոլովում է՝ ամենքի, ամենքից կէն:

6. Ամենայն յօգ չի ընդունում և սակաւ անգամ գործ է արւում միայն կզակի տրական՝ ամենայնի:

7. Այլ անտիտիտ է մնում և ունի միայն գրաբարից առած յոգնակի տրական հոլով՝ այլոց ձևով, որ հնացած է:

8. Պարտէզ, կանգէս, էօ, երբեմն և ուրիշ բառեր, հոլովում են նաև ձայնափոխութեամբ՝ պարտիզի, հանգիսի, իշի Սովորական ձևն է առանց ձայնափոխութեան հոլովումը:

9. Այս, յայս, այժ, փայր և մի քանի ուրիշ բառեր գործիականն ունին ձայնափոխութեամբ՝ լուսով, յուսով, ուժով, փութով, Երբեմն ձայնափոխութիւն լինում է այս բառերի և ուրիշ հոլովների մէջ, ինչպէս և կա(յ) երկբարբառի համար՝ ոյժ, ուժի, ուժից. քրիստոնեայ, քրիստոնէի կէն:

2. Ու հոլովում.

308. Այս հոլովման տրականը կազմում է ու ձայնաւորով, որ աւելանում է ուղղականի վրայ. Բացառականի վերջաւորութիւնն է ուց: Օրինակ՝

| | | | |
|-------|--------|-------|------------------|
| | Եզակի | | Յոգնակի |
| Ուղ. | սակի | ձի | սակիներ |
| Տը. | սակու | ձիւ | ձիեր և լին |
| Բաց. | սակուց | ձիւց | (ի հոլովման պէս) |
| Գործ. | սակով | ձիով | |
| Ներք. | սակում | ձիում | (§ 302) |

309. Ու հոլովման տակ գնում են՝

1. Այն անուններն և գոյականաբար առնուած մակա- նունները, որոնց ուղղականը վերջանում է ի ձայնաւորով. ինչպէս՝ այդի, զինի, որդի, եկեղեցի, զիւղացի, ծերունի, վայրենի:

2. Անորոշ դերբայները՝ զրել, զրելու, զրելով, զրելուց՝ զրելում (§ 302):

3. Մի քանի ուրիշ անուններ՝ ինչպէս մարդ, Աստուած և լին, և իրարու մէկմէկու փոխադարձ դերանունները:

Բարբառների եւ դրաբարի չաղբեցութեան տակ յաճախ շատ բառերի տրականը, աւելի արեւմտեան աշխարհաբարում, լինում է ու ձայնաւորով, ինչպէս՝ պահ, պահու. ժամ, ժամու եւ լին. Այսպէս գործ են արւում աւելի յատուկ անուններն իբրև սեռական (§ 299). օրինակ՝ Երեքալու վանք, Արմաու վանք, Լիբանանու լեռներ, Մու սա- րեք, Աւսարակու գիւնի եւ լին:

310. Ի վերջացած բազմականի բառերի համար պիտի նկատի ունենալ.

1. Ուղղականի վերջի ի ձայնաւորը տրականի և բացառականի մէջ դուրս է ընկնում. իսկ գործիականի և ներքոյ- յականի մէջ երբեմն դուրս է ընկնում, երբեմն սրահւում է: Վան բառեր, որոնց համար անխտիր երկու ձևն ևս գործ է արւում, ինչպէս՝ այդիով, այդով, այդիւմ, այդում, Ժողովրդա- կան լեզուի մէջ սովորաբար ամեն դէպքում վերջի ին դուրս է ընկնում:

2. Հոգի բառի գործիականը սովորաբար գրւում է գրաբարի ձևով՝ հոգով:

3. Կաօի բառը կանոնաւոր՝ կաշու, կաշուց կաշով կամ կաշիով ձևերի հետ ունի և կաշուի, կաշուից կաշուով ձևերը:

4. Ի հոլովման վերածելն ընդունուած է միայն անորոշ դերբայից ի ամանցով կազմուած բառերի համար՝ որպէս զի ջշփոթուին դերբայի հետ. ինչպէս՝ սիրելի, սիրելիի. յարգելի, յարգելիի:

Արեւմտեան աշխարհաբարում սակայն այս կարգի բառերը կամ ի հոլովման տակ են գնում՝ ձի, ձիի. քամի, քամիի. գիւնի, գիւնիի. եկեղեցի, եկեղեցիի. կամ տրականը դրաբարի ձեւով լոյ վերջաւորութեամբ է կազմուած՝ եկեղեցույ, գիւնույ, որդույ, հոգույ, Անույ եւ լին. Այս երկու ձեւն երբեմն սրատահում են եւ արեւելեան աշխարհաբարի մէջ:

311. Անորոշ դերբայի համար պիտի նկատել.

1. Իլ լծորդութիւնը հոլովելիս միշտ փոխուում է ել լծորդութեան՝ խօսիլ, խօսել, խօսելու, խօսելուց, խօսելով, խօսելում:

2. Յոգնակիրն և եզակի ներքոյականը թէպէտ պատահում են, բայց ցործածական չեն:

3. Ի հոլովման վերածելը գաւառական է, ինչպէս՝ «Սոխակ, ինչո՞ւ դադրեցար քու անուշ երգը երգելից» (Գամառ-Գաթիկա):

312. Այս հոլովման տակ գնացող միւս սակաւաթիւ բառերի համար պիտի նկատել.

1. Ամուսից, անկողին, դար, մարդ հաւասարապէս և ի հոլովման տակ են գնում: Մարդ բառի յոգնակիրն տես § 324:

2. Աստուած բառի ա ձայնաւորը եզակիում սղուում է՝ Աստուծու, Աստուծուց, Աստուծով: Տրականի համար գործ է ածւում է և գրաբարի Աստուծոյ ձևը. ժողովրդական է Աստծու, Աստծուց:

3. Սէր հոլովւում է ձայնափոխութեամբ՝ սիրու, սիրուց, սիրով, ժողովրդական է ի հոլովումը՝ սէրի, սէրից, սէրով, սէրում: Տրականի համար գործ է ածւում և գրաբարի ձևը՝ սիրոյ:

4. Լոյս, էօ ժողովրդական ձևով երբեմն ունին տրական լուսու, իշու (§ 307. 8. 9): Լոյս ունի տրականի համար և գրաբար ձևը՝ լուսոյ:

5. Ի՞նչ հարցականը հոլովւում է սովորաբար ինչի՞, ինչից՝ բայց ունի և ինչո՞ւ, ինչո՞ւց, Ինչո՞ւց բարբառային է. «Ինչո՞ւց է մինն աղբատ, մինը ունի մեծ գումար» (Ջիւանի):

6. Երաբու, մէկմէկու (մէկգմէկու) փոխադարձ դերանունները չունին եզակի ուղղական և յոգնակի թիւ: Իրարու տրականի համար կայ և իրար ձևը: ժողովրդական է իրարից, մէկմէկից բացառականը փոխանակ իրարուց, մէկմէկուց ձևի:

Արեւմտեան աշխ. մէկը՝ մի մարդ, ոմին նշանակութեամբ հոլովւում է սովորաբար մէկու ձեւով, իսկ թուականն ունի մէկի ձեւը:

313. Մի քանի բառեր որոշ գործածութեան ժամանակ միայն ունին ու վերջաւորութեամբ տրական, որ և իբրև բացառական է ըմբռնւում: Օրինակ՝ աւօթու կարմրել, կսկծու մեռնել, ահու չորանալ, ծիծաղու թուլանալ ևլն:

3. ԱՆ հոլովում.

314. Այս հոլովման տրականը, որ ունի ան կամ եան վերջը, կազմւում է երկու կերպ. կամ ուղղականի վերջի ն հնչիւնից առաջ մտնում է ա ձայնաւորը, կամ ուղղականի վրայ աւելանում է ան կամ եան վերջաւորութիւնը: Միւս հոլովների վերջաւորութիւնները գրւում են ուղղականի, երբեմն և տրականի վրայ: Յոգնակիրն ունի ներ: Օրինակ՝

| | | |
|-------|-------------------|---------------------|
| | Եզակի | Յոգնակի |
| Ուղ. | դուռ(ն) սրբութիւն | դռներ, սրբութիւններ |
| Տր. | դռան սրբութեան | |
| Բաց. | դռնից սրբութիւնից | (ի հոլովման պէս) |
| Գործ. | դռնով սրբութիւնով | |
| Ներք. | դռնում | (§ 302) |

315. Այս հոլովման տակ գնում են.

1. Մի քանի միավանկ անուններ, որոնց եզակի ուղղականը գրաբարում վերջանում է և հնչիւնով, որ աշխարհաբարում դուրս է ընկել, բայց հոլովելիս վերականգնում է: Այս բառերն են՝ բուռ(ն), դուռ(ն), նուռ(ն), փուռ(ն), ծուկ(ն), կուռ(ն), մուկ(ն), լեռ (լեռան), եղ(ն), թուռ(ն), գառ(ն), ունկ(ն) ծունկ(ն) ևլն:

Գառ, ծուկ, փուռ եզակիում հոլովւում են և ի հոլովման տակ՝ գառի, ծնկի, փռի ևլն, միայն յոգնակիում վերականգնում են ն հնչիւնը (տես և § 294 յիշուած բառերը):

Լեռ, քառ ունին և առանց ն-ի ձևեր՝ լեռից, լեռով, թուռից, Բարբառային է միւս բառերի ի հոլովումը՝ նուռի, թուռի, ծուկի, մուկի, եղի ևլն:

Ի հոլովման հետ տրական ան ձևով ունին երբեմն և արեգակ(ն), արեգական, ակ(ն), ական, ամառ(ն), ամառան կամ ամառն, ակ(ն), արեգական.

ծմեռ(ն), ծմեռան կամ ծմռան կէն, որոնք սակայն զբաբար կամ ժողովրդական ձևեր են համարուում: Ամառ, ծմեռ բառերը համար տես և § 317:

Գրաբարում մի քանի բառերի ու հնչյւնքը, երբ յաջորդէ հնչյւնից հետոնում է, փոխուում է Ե. ինչպէս՝ դուռն, դրան-լեռն, լերին. ամառն, ամարան. ծմեռն, ծմերան: Աշխարհաբարին յատուկ չէ այս փոփոխութիւնը. ուստի պէտք է զրել՝ դուան, լեռան կէն, և ոչ ինչպէս երբեմն գրում են՝ դրան, լերան կէն:

2. Ում (ն) ածանցով կազմուած բառերը (§ 203. 24), և հիմ (ն) անունը, որոնց վերջի ն հնչյւնն ևս աշխարհաբարում սովորաբար դուրս է ընկնում, ունին ի հոլովման հետ տրականի համար նաև նոյն կերպ կազմուած աճ ձևը: Օրինակ՝ ուսում, ուսումի կամ ուսման, ուսումից, ուսումով. հիմ(ն), հիմի կամ հիման, հիմից, հիմով կէն:

Այս բառերի, ինչպէս և ուրիւն ածանցով կազմուածների գործիականը գրաբարի ձևով լինում է և ք տառով, որ աւելանում է տրականի վրայ. ք-ից առաջ ն հնչյւնքը փոխուում է մ-ի (§ 200). ինչպէս՝ ուսմամբ, պատահմամբ, նկատմամբ, մեծութեամբ, սրբութեամբ, հիմամբ:

3. Ուրիւն ածանցով կազմուած բառերը և արիւն, սիւն, աճկիւն (203. 18), որոնց վերջի ն-ից առաջ տրականի մէջ մտնում է ա հնչյւնքը. իւ երկբարբառի ւ (ու) հնչյւնքը (§ 68) դուրս է ընկնում, իսկ ի-ն միանալով յաջորդ ա-ի հետ կազմում է եա երկբարբառ (§§ 185. 187. 192). օրինակ՝ լաւութեան, արեան, սեան:

Արեմտեան աշխարհաբարում բացառականի է վերջաւորութիւնը դրուում է տրականի վրայ, որի եա երկբարբառի ա ձայնաւորը սղուում է, և կազմում՝ լաւութենէ, մեծութենէ կէն. արեւելեան աշխարհաբարում սակայն հնացած ձև է լաւութենից, մեծութենից, ինչպէս և նոյն կազմութեամբ գործիականը՝ լաւութենով, մեծութենով, Բացառականի սովորական կազմութիւնն է ուղղականից՝ լաւութիւնից:

Ի հոլովման ձևով կազմուած տրականը՝ լաւութիւնի, սրբութիւնի ժողովրդական է. իսկ գործիականը՝ լաւութիւնով կամ լաւութեամբ երկուսն ևս սովորական են գրական լեզուի մէջ:

Արիւն, անկիւն, սիւն սովորաբար ի հոլովման տակ են գնում: Գործածական են միայն տրականները՝ արեան, անկեան, սեան:

4. Եռն, տուն, որոնց ու ձայնաւորը դուրս է ընկնում և վերջի ն-ից առաջ մտնում է ա. շան, շնից, շնով, շներ կէն. տան, տնից, տնով, տներ կէն: Տուն ներքոյական ունի տան(ը) կամ տան մէջ:

Այս բառերի համար պատահում են և տրականից կազմուած ձևեր՝ շանից, շանով, տանից, տանով:

Անուն, մահ ի հոլովման հետ ունին տրական՝ անուան, մահուան. Գործիականը՝ անուամբ, մահուամբ հնացած է:

6. Ան վերջաւորութիւնն աւելանում է հետեւալ բառերին.

Պարուն, առուն, որ ունին տրական՝ զարնան, աշնան. Բացառականը և գործիականը կազմուում են տրականից՝ զարնանից, աշնանից, զարնանով, աշնանով. բայց սովորականն է ի հոլովման ձևով՝ զարունից, աշունից, զարունով, աշունով: Ներքոյական ունին՝ զարնան(ը), աշնան(ը) կամ զարնան մէջ, աշնան մէջ:

Աղջիկ, կնիկ, որ ունին տրական՝ աղջկան, կնկան, որոնց վերջի ն հնչյւնքը յաճախ դուրս է ընկնում, և կազմում է անձայն յ-ով՝ աղջկայ, կնկայ. Բացառականը և գործիականը կազմուում են տրականից՝ աղջկանից, աղջկանով, կնկանից, կնկանով:

Այսպէս հոլովում են երբեմն և մահուկ, մանկան. էրիկ, էրկան. Ասողիկ, Ասողկան կէն, որոնք սակայն զբաբար կամ ժողովրդական ձևեր են համարուում: Գրանք սովորաբար գնում են ի հոլովման տակ:

7. Եան վերջաւորութեամբ տրական ունին՝ ժողովուրդ, ծնունդ, գալուստ, ժողովրդեան, ծննդեան, գալստեան, որոնք սովորաբար գնում են և ի հոլովման տակ:

4. Ուան հոլովում.

316. Այս հոլովման տրականը կազմում է ուան վերջաւորութեամբ, որ աւելանում է ուղղականի վրայ. բացառականի, երբեմն և գործիականի վերջաւորութիւնները դրւում են տրականի վրայ: Տրականի վերջի ն բաղաձայնը յաճախ դուրս է ընկնում, և տեղը գրւում են աւելորդ անձայն յ: Օրինակ՝

Եզակի

Յոգնակի

Ուղ. օր

օրեր և ին

Տր. օրուան, օրուա(յ)

Բաց. օրուանից

(ի հոլովման պէս)

Գործ. օրով

Ներք. օրում (§ 302)

317. Այսպէս հոլովւում են մեծ մասամբ ժամանակի անունները, որ են.

Ժամ, ժամուան, ժամուանից. սովորաբար գնում է ի հոլովման տակ՝ ժամի, ժամից.

Օր, գնում է և ի հոլովման տակ՝ օրի. օրից, ինչպէս՝ օր օրի վրայ. Տրականն ունի և աւուր ձևը. ինչպէս՝ օր աւուր. մի աւուր (օրուան) ցանապարհի. Այսպէս և այսօր, այսօրուան, այսօրուանից. մեկէլօր, մեկէլօրուան, մեկէլօրուանից.

Շաբաթ, շաբաթուան, շաբաթուանից. այլ և՛ շաբաթի, շաբաթից. գրաբար է՝ շաբաթու.

Ամիս, ամսուան, ամսուանից, սովորաբար՝ ամսի, ամսից. Ս յօդով տրականը գրւում են և գրաբարի ձևով՝ ամսոյս.

Տարի, տարուան, տարուանից. գնում է երբեմն և ու հոլովման տակ՝ տարու (արևմտ. աշխ. տարի, տարւոյ), տարուց. տարով, տարում.

Առաւօտ, առաւօտուան (առաւօտեան), առաւօտուանից (առաւօտեանից), այլ և առաւօտից.

Եւտօր, կէսօրուան, կէսօրուանից. այլ և կէսօրի(ն), կէսօրից.

Իրիկուն (երեկոյ), իրիկուան (երեկոյեան), իրիկուանից, իրիկնով, Յոգնակի՝ իրիկունները կամ իրիկները (երեկոները):

Գիշեր, գիշերուան, գիշերուանից. այլ և գիշերի, գիշերից. Յերեկ, ցերեկուան, ցերեկուանից. այլ և ցերեկի, ցերեկից. Առունք, աշունքուան, աշունքուանից. այլ և աշունքից (տես

315. 6):

Գարունք, գարունքուան, գարունքուանից, այլ և դարունքից (տես և 315. 6):

Ամառ, ամառուան, ամառուանից (տես և 315. 1):

Ձմեռ, ծմեռուան, ծմեռուանից, ծմեռունով. (տես և 315. 1):

Նրեկ, երեկուան, երեկուանից. երբեմն երեկի, երեկից.

Վաղը, վաղուան, վաղուանից, Յոգնակի չունի:

Էգուց, էգուցուան, էգուցուանից.

Հերու, հերուան, հերուանից կամ հերնուան, հերնուանից.

Այժմ, այժմուան (այժմեան), այժմուանից (այժմեանից) կամ

այժմէն, այժմուց, Յոգնակի չունի:

Հիմա, հիմի (հիմակ, հիմիկ), հիմիկուան, հիմիկուանից

կամ հիմիկուց. հիմակուան, հիմակուանից: Յոգնակի չունի:

Առաջ, առաջուան, առաջուանից.

Յետոյ, յետուան, Ժողովրդական է: Ուրիշ ձևեր և յոգնակին՝ յետոնները գործածական չեն:

Ե՛րբ, երբումն. երբումնից: Ժողովրդական է: Յոգն. չունի:

Անգամ, անգամուան, անգամուանից. սովորաբար անգամի.

անգամից:

Կիրակի, երկուօրեայի, երեքօրեայի և ին կիրակուան, կիրակուանից, երկուշաբթուան, երկուշաբթուանից և ին:

Այս ձևով տրական հոլով ունին և մի քանի ուրիշ բառեր,

երբ ժամանակի իմաստով են առնւում. ինչպէս՝ ճաշ, ճաշուան.

զատիկ, զատիկուան. մայիս, մայիսուան.

Արեւմտեան աշխարհաբարում այս հոլովման տակ գնացող

բառերի յեծ մասի բացառականի մէջ ա ձայնաւորը փոխւում է ք

ձայնաւորի, ինչպէս՝ վաղուրնէ, առաջուրնէ եւ ին:

5. Ոջ հոլովում.

318. Այս հոլովման տրականը կազմուած է ոջ վերջաւորութեամբ, որ աւելանում է ուղղականի վրայ: Միւս հոլովների վերջաւորութիւնները դրւում են տրականի վրայ: Օրինակ՝

| | |
|---------------|------------------|
| Եզակի | Յոգնակի |
| Ուղ. տէր | տէրեր ևլն |
| Տը. տիրոջ | (ի հոլովման պէս) |
| Բաց. տիրոջից | |
| Գործ. տիրոջով | |
| Ներք. (§ 302) | |

319. Այսպէս հոլովուած են.

Տէր և բարդ բառերը՝ տանուտէր, ինքուտէր ևլն: Ժողովրդական է տէր բառի ի հոլովումը՝ տէրի, տէրից, տէրով, կայ և տիրու տրականը: Յոգնակին գրաբարի ձևով գործ է ածւում և ուղղ. տնարք (միայն կոչական), տրական՝ տերանց.

Կից, կնոջ, կնոջից ևլն. նոյնպէս և բարդ բառերը՝ թիկից, թէթերակից, Տեղերակից, առնակից ևլն. կին և տիկին բառերի յոգնակին տես § 324. 4: Անգործածական է ի հոլովման ձևը՝ կիներ, կինների կամ կներ, կների ևլն. բայց տիկիներ, տիկիների ևլն սովորական ձևն է:

Տիկից բառը խոթիկ խաղաղքի իմաստով հոլովուած է թիկից կամ թիկնու եւլն:

Քոյր, քրոջ, քրոջից ևլն, յոգնակի՝ քոյրեր. նոյնպէս և բարդ բառերը՝ մօրաքոյր, հօրաքոյր: Ժողովրդական է տրական՝ քուոր, բացառ. քուորից և յոգն. ուղղ. քուորք ևլն:

Սկեսուռ, սկեսորոջ ևլն. գնում է և ի հոլովման տակ:

Անք, անքորոջ ևլն. գնում է երբեմն և ի հոլովման տակ: Ժողովրդական է անօր, անօրից հոլովումը (տես § 320):

Տալ, տալոջ ևլն. գնում է և ի հոլովման տակ:

Ընկեր, միայն տրական՝ ընկերոջ. գնում է սովորաբար ի հոլովման տակ:

6. Օր հոլովում.

320. Այս հոլովման տրականը կազմուած է ուղղականի վերջին ը բաղաձայնից առաջ օ դրուելով փոխանակ այ երկբարբառի: Միւս հոլովների վերջաւորութիւնները դրւում են տրականի վրայ: Օրինակ՝

| | |
|---------------|------------------|
| Եզակի | Յոգնակի |
| Ուղ. հայր | հայրեր ևլն |
| Տը. հօր | (ի հոլովման պէս) |
| Բաց. հօրից | |
| Գործ. հօրով | |
| Ներք. (§ 302) | |

321. Այսպէս հոլովուած են միայն երեք բառ՝ հայր, մայր, եղբայր և բարդ բառերը՝ նախահայր, վաճառայր, նախամայր, կնքահայր, Տիրամայր, Աստուածամայր, հօրեղբայր, մօրեղբայր ևլն:

Հայր եւ եղբայր բառերի յոգնակի ուղղականի համար իբրեւ կոչական գործ են ածւում երբեմն գրաբարի հա՛րք եւ եղբա՛րք ձևերը: Հնացած են տրականները՝ հարց կամ հարանց, եղբարց:

7. Ք, ց հոլովում.

322. Այս անեզական հոլովման ուղղականն ունի ք վերջաւորութիւնը, իսկ տրականը՝ ց: Միւս հոլովների վերջաւորութիւնները դրւում են տրականի վրայ: Օրինակ՝

| | |
|------------------|----------|
| Յոգնակի. | |
| Ուղ. խաչոյենք | քեռոնք |
| Տը. խաչոյենց | քեռոնց |
| Բաց. խաչոյենցից | քեռոնցից |
| Գործ. խաչոյենցով | քեռոնցով |
| Ներք. (§ 302) | — |

323. Այսպէս հոլովուում են յոգնակի հաւաքական իմաստով ստացական անուցները, որ են.

1. Յատուկ անուցներից և պաշտօն, պարապմունք, ազգակցութիւն կ'ըն ցոյց տուող հասարակ անուցներից ենք, ոնք անք (ուկը) անանցներով կազմուած բառերը, որոնք ստացական իմաստ ունին, այսինքն ցոյց են տալիս այս ինչին կամ այն ինչին վերաբերող անձեր, տանեցիներ, ընկերներ կ'ըն: Օրինակ՝ Տիրաններ, Մաթոսներ, վարժապետներ, տէրտէրներ, ժամհարներ, մկիթներ, խնամներ, քեռներ, պապներ, պապներ (պապուներ), հէրանք (հայր բառից), աներանք, Վարդանանք կ'ըն:

Գրաբարեց փոխառութեամբ ենք, անք անանցների տեղ գործ է ածուում երբեմն եանք անանցը, ինչպէս՝ Ղեւոնդեանք, Ղեւոնդեանց, Հռիփսիմեանք, Հռիփսիմեանց, Ասովեանք, Ասովեանց եւն:

2. Իմ, քո, մեր, ձեր, ո՛ւմ բառերից նոյն ստացական իմաստով կազմուածները՝ իմանք, բռնանք, մերանք, ձերանք, ո՛ւմանք, որ նշանակուում են՝ ինձ, քեզ, մեզ, ձեզ, ո՛ւմ վերաբերեալ անձեր, տանեցիներ կ'ըն, երբեմն և իրիր:

Այս բառերը սովորաբար դերանունների մէջ են դնուում իբրեւ ստացական դերանուն:

Ստացական անուցները անեղական բառեր են. դրանց եղակի իմաստով երբեմն գործ է ածուում փոխանուն սեռականը (§ 306). ինչպէս՝ իմք կամ իմս, բռնք կամ բռն (արեւմտ. աշխ. բուկղ), մերք, ձերք, ումք, խաչոյիք, բեռուք, քաղաւորիք եւն, որ նշանակուում են՝ իմ, քո, մեր, ձեր, քեռու, թագաւորի այս ինչ բանք, կամ անձք:

324. Այսպէս հոլովուում են նաև՝

1. Ունք բառի յոգնակին՝ ումանք. ումանց կ'ըն: Եղակի թեք հոլովներ կ'ըն:

2. Ուր բառի յոգնակին՝ որոնք, որոնց կ'ըն: Եղակին դընուում է ի հոլովման տակ՝ որի (արեւմտ. աշխ. որու), որից, որով: Ներքոյական որում անգործածական է. սովորաբար ասուում է որի մէջ:

Յարաբերական որ դերանունան յոգնակի ուղղականը որոնք ձեի հետ լինուում է և անփոփոխ որ, Երբ որ յարաբերականն ենթակայ է, երկու ձեն ևս անխտիր գործ են ածուում՝

որոնք կամ որ. օրինակ՝ Այն մարդիկը, որ (կամ օրանք) գնացել էին ... Այն բառերը, որ (կամ օրանք) գործ են ածուում ... Երբ որ յարաբերականն ուղիղ խնդիր է, այսինքն կ'ընող առարկայ (§ 298. 3) և յարաբերեալն անձի անուն է, դընուում է որ կամ տրական՝ որոնք. իսկ երբ յարաբերեալն իրի կամ վերացական անուն է, գործ է ածուում միայն որ ձեւը: Օրինակ՝ Այն աշակերտները, օրանք (կամ օր) դու տեսել ես: Բայց՝ Այն բառերը, որ դու գործ ես ածել: Սխալ է այս դէպքում ասել՝ Այն բառերը, օրանք (կամ օրանց) դու գործ ես ածել ...

3. Միմեանց փոխադարձ դերանունը, որ ուղղական և եղակի կ'ըն:

4. Մարդ, կից, թիկից բառերի յոգնակին, որոնց ուղղականը կազմուում է անկանոն ձեով՝ մարդիկ, կանայք, տիկնայք. իսկ միւս հոլովները՝ մարդկանց, մարդկանցից, մարդկանցով, մարդկանցում. կանանց, կանանցից, կանանցով, կանանցում. տիկնանց, տիկնանցից կ'ըն:

Մարդ, կից բառերի կանոնաւոր յոգնակին՝ մարդեք, կիցեք անգործածական են (§ 319) արեւելեան աշխարհաբարում: Մարդ յոգնակի տրական լինուում է եւ գրաբարի ձեւով՝ մարդոց:

Կից յոգնակի ունի եւ ժողովրդ. ձեւով՝ կիցնիք, կիցնոց եւն: Պարսն բառի համար երբեմն իբրեւ յոգնակի կոչական գործ է ածուում պարսնայք՝ ձեւը՝ թիկնայք եւ պարսնայք:

Մի քանի ուրիշ բառեր եւս կրկին յոգնակի ունին այս հոլովման ձեւով. ինչպէս ձի, ձիեր, այլ եւ ձիանք, ձիանց եւն: Աղջիկ, աղջիկներ, այլ եւ աղջկեք, աղջկանց կամ աղջկեանց եւն:

Գրաբար հոլովման ձեւեր.

325. Կան հոլովական ձեւեր, որոնք գրաբարից (կամ ժողովրդական լեզուից) են մտած աշխարհաբարի մէջ, բայց սովորական ընդունուած են և գրաբար չեն համարուում: Դրանց մի մասն արդէն յիշուած են վերեւում եօթը հոլովման մէջ: Կարևոր են և հետևեալ վերջաւորութիւններով կազմուած ձեւերը.

1. Յոգնակի ուղղականի համար ք, (ունք, ինք)

վերջաւորութիւնը, որ գրուած է սովորաբար ի վերջացած բառերի վրայ, օրինակ՝ այգիք, եկեղեցիք, որդիք, հոգիք, դաշտեցիք, երեւանցիք, անեցիք, հոմայեցիք, տղայք, երեխայք, դիցազունք, ծաղկունք, մանկունք, անձինք ևլն:

2. Եզակի սրականի համար այ, ոյ վերջաւորութիւնները. օրինակ՝ Աստուածածնայ (տօն, պաս), Վարազայ (սուրբ խաչ), Ծարեկայ (վանք), Սեւանայ (լիճ), Վանայ (ծով),— Խտալիա, Խտալիոյ. Գերմանիա, Գերմանիոյ. Նիկիա, Նիկիոյ (սուրբ ժողով). Անգլիա, Անգլիոյ ևլն:

Կայսր, խաթր բառերը կայսրի, խաթրի ձևի հետ ունին և կայսեր, խաթեր ձևը:

3. Յոզնակի սրականի համար աց, ից, ոց, (ուց), անց վերջաւորութիւնները. օրինակ՝ յունաց, ռուսաց, վրաց, տաճկաց, թուրքաց, Արշակունեաց, Բագրատունեաց, Սիւնեաց,— պարսից, Կասպից (ծով), Աղուանից (աշխարհ),— Հայոց, տղայոց, երեխայոց, որդոց, հոգոց (երբեմն գրաբարի ձևով՝ որդւոց, հոգւոց), սրբոց, այսպէս և դաշտեցոց, երեւանցոց, անեցոց, հոմայեցոց, տեղացոց ևլն. անձանց, մանկանց, Հայկազանց, դիցազանց ևլն:

Գրաբար են համարուում՝ մեծութիւնը, մեծութեանց, լաւութիւնը, լաւութեանց և նմանները:

326. Կան գրաբարի մի քանի ուրիշ հոլովման ձևեր ևս, որոնք միայն որոշ բառերի մէջ իբրև մալբարակերպ են գործածուում:

1. Բացառական, օրինակ՝ ի ծնէ, ի բնէ, ի սրտէ, ի բոլոր սրտէ, ի հարկէ. ի վերջոյ, վերջ ի վերջոյ, կարճ ի կարճոյ ևլն:

2. Գործիական ամբ, աւ, իւ, օք վերջաւորութիւններով մասամբ, անձամբ, իրաւամբ, կանխաւ, դիրաւ, հաւաստեաւ, ճշտիւ, ստուգիւ, ճշմարտիւ, լրիւ, մեղմիւ, կարծեօք (կարծիքով), աւօք փառօք (առք ու փառքով) ևլն:

Յարադրեալ անունների հոլովումը.

327. Յարադրեալ անունները (§ 197) հոլովուում են երկու կերպ. կամ իւրաքանչիւր յարադիր մասն իբրև առանձին բառ է վերցուում և հոլովուում. կամ երկու յարադիր մասը միասին իբրև մի բառ են առնուում մի նոր իմաստով կամ միացեալ հաւաքական իմաստով, և այն ժամանակ միայն երկրորդ մասն է հոլովուում.
Օրինակ՝

| | | |
|-------|--------------|------------|
| Ուղ. | լաց ու կոծ | ոտ ու ձեռ |
| Տր. | լաց ու կոծի | ոտի ձեռի |
| Բաց. | լաց ու կոծից | ոտից ձեռից |
| Գործ. | լաց ու կոծով | ոտով ձեռով |
| Ներք. | — — | — — |

328. Յատկապէս իբրև մի բառ հոլովուում են.

1. Այն յարադրեալ անունները, որոնց յարադիր մասերն իբրև առանձին բառ չառ կամ բնաւ գործածական չեն ինչպէս՝ առ ու լիս, առ ու փախ, նիստ ու կաց ևլն:

2. Փոփոխութեամբ կամ առանց շաղկապի միացածները, ինչպէս՝ ծակ ու ծուկ, աման - չաման, զնալ - գալ, գրել - կարդալ, Օրինակ՝ Աղջկերբը ծակ ու ծուկիցն էին մտիկ տալիս: Քամաշաւորը վերել - ներհեւիցը ձայն տուին, Օտարը զնալ - գալով բարեկամացաւ:

Երբ երկու մասն ևս հոլովուում են, միջի ու շաղկապը սովորաբար դուրս է ընկնում: Օրինակ՝ Ոտից ձեռից ընկել եմք Գնչով զլիտով նշան անել, աչքով ունքով անել. խաչի զօրութիւնը քո բանին գործին աշողութիւն տայ, Բայց ոտ ու ձեռից ընկել եմ ոտ ու ձեռով հասկացնել, մեռնեմ այն աչք ու ունքին. իր բան ու գործին, իր ցանքս ու վարին աշխատել. մարդ ու կնկայ, հարսն ու աղջկերբ ևլն:

Հայրն ու մայր (ծնողներ) բառը հոլովուում է՝ հօրն ու մօր, հօրն ու մօրից կամ հօրից մօրից, հօրն ու մօրով կամ հօրով մօրով:

Բացայայտի եւ բացայայտեալի հոլովում.

329. Եթէ բացայայտիչը բացայայտեալից առաջ է դրուում, առնուում է իբրև մականունն և անփոփոխ ուղղական է մնում (§ 139. 2). բայց երբ բացայայտեալից յետոյ է դրուում, այն ժամանակ նրանից բաժանուում է ստորակէտով կամ բուժով, և երկուսն ևս՝ բացայայտիչ և բացայայտեալ՝ նոյն հոլովով են դրուում: Օրինակ՝ Անի քաղաքը, Անի քաղաքի, Անի քաղաքից և ինչ. Վարդան զօրավարը, Վարդան զօրավարի, Վարդան զօրավարից և ինչ. զօրավար Վարդանը, զօրավար Վարդանի և ինչ. Բայց Անին, Բազրատունեաց մայրաքաղաքը, Ախուրեան գետի վրայ է: Անուց, Բազրատունեաց մայրաքաղաքից, շատ հեռու չէ նրանց հին նստավայրը՝ Երազգաւորս: Գազիկ թագաւորը սպարապետի եղբորդուն՝ Գրիգոր Մագիստրոսին՝ հետն առաւ եւ ...

Յօդերով հոլովում.

330. Յօդերի համար հոլովելիս պէտք է իմանալ.

1. Ս, Ի յօդերը պահուում են բոլոր հոլովների վրայ. ինչպէս՝ գիրքս, գրքիս, գրքիցս, գրքովս, գրքումս, գիրքդ, գրքիդ և ինչ:

2. Ն (ը) յօդը չի պահուում տրականի վրայ, երբ սեռական է, այսինքն անուան լրացում է. բացառականի, դործիականի և ներքայականի վրայ կարելի է պահել և չպահել. իսկ ուղղականի և տրականի վրայ, երբ վերջինս խնդիր է մի բայի կամ ածականի, միշտ պահուում է. Օրինակ՝ Հո պարսէզը հեռու է: Հո պարսէզի ծառերը ... Հո պարսէզին մօտեցանք: Հո պար-

սէզից(ը) հեռացանք: Հո պարսէզով(ը) անցանք: Հո պարսէզում(ը) կան ...:

Արեւմտեան աշխարհաբարում սեռականի վրայ ևս սովորաբար պահուում է ն յօդը:

Ուղղականի վրայ, երբ կոչական է, երբեք ն (ը) յօդ չի դրում:

3. Յարագրեալ անուններն երկուսն ևս կարող են յօդ ընդունել. բայց երբ միայն երկրորդ անունն է հոլովուում, յօդն էլ միայն երկրորդի վրայ է դրուում. ինչպէս՝ քո լացն ու կոծը կամ քո լաց ու կոծը, քո լաց ու կոծին և ինչ:

331. Անուան վրայ որսուող (ը) յօդ է դրուում՝

1. Երբ յատուկ է, կամ այգպիսի խնդիր ունի՝ Արշակը տեսաւ Հայկին: Հայկի զիրբը: Արշակ թագաւորը:

2. Երբ մի անգամ յիշուած է և կրկնուում է, կամ այգպիսի խնդիր ունի. օրինակ՝ Մի գառ գնաց մի աղբիւրի մօտ. գառը խմում էր աղբիւրի ջուրը, երբ ...

3. Երբ ցոյց է տալիս առաջուց ծանօթ առարկայ, կամ այգպիսի խնդիր ունի. օրինակ՝ Արեգակն ու լուսինը լուսաւորում են երկիրը: Կայսրը ժամանեց. Արեգակի լոյսը:

4. Երբ սեռի իմաստով է գործածուում, այսինքն ցոյց է տալիս առարկայի տեսակն ընդհանրապէս, կամ այգպիսի խնդիր ունի: Օրինակ՝ Զից չորրտանի է. Անձրեւի ձեծածը կարկուտն էլ կը ձեծի:

5. Երբ խնդիր ունի մի ցուցական մականուն, կամ բոլոր, ո՞ր, ո՞ւմ բառերից մէկը (§§ 125. 129), կամ մի դերաբանուն (բացի փոխադարձներից) որեւէ հոլովով. օրինակ՝ այս զիրբը. բոլոր աշակերտները. միւսի տունը. նրա զիրբը. ո՞ւմ զիրբը:

6. Երբ անուան խնդիրն ինքն ունի վերուում յիշուած ձևերով որոշուած մի խնդիր. օրինակ՝ Մեր պարտէզի ծառերը.

3. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄ.

332. Անձնական դերանուններ

| | | |
|--------------------|----------------|---------------|
| | <i>Նզակի</i> | |
| Ուղ. ես, ինքս | դու, ինքդ | նա, ինքը |
| Տր. իմ, ինձ | քո, քեզ | իր, իրեն |
| Բաց. ինձնից | քեզնից | իրենից |
| Գործ. ինձնով | քեզնով | իրենով |
| Ներք. ինձնում | քեզնում | իրենում |
| | <i>Յոզնակի</i> | |
| Ուղ. մենք, ինքներս | դուք, ինքներդ | նրանք, իրենք, |
| Տր. մեր, մեզ | ձեր, ձեզ | իրենց |
| Բաց. մեզնից | ձեզնից | իրենցից |
| Գործ. մեզնով | ձեզնով | իրենցով |
| Ներք. մեզնում | ձեզնում | իրենցում |

333. Անձնական գերանունների համար պիտի նկատել՝

1. Բացառական, գործ., և ներք. հոլովների համար կան և ինձանից, քեզանից, մեզանից, ձեզանից, ինձանով, քեզանով, մեզանով, ձեզանով, ինձանում, մեզանում, ձեզանում, մեզանում, ձեզանում, որոնք քիչ գործածական են:
2. Տրական կայ և ինձի, քեզի, մեզի, ձեզի, որ արևելեան աշխարհաբարում քիչ են գործածուում:
3. Ինքն հոլովում է և ա ձայնաւորով՝ իրան, իրանից, իրանով, իրանք, իրանց ևլն: Տրական ունի և իւր, ժողովրդական՝ իրա, իսկ յոզնակին նաև՝ իւրեանք, իւրեանց, իւրեանցից, իւրեանցով:
4. Արևմտեան աշխարհաբարում բացառ. և գործ. հոլովների մէջ ն տառի տեղ դրւում է մ. ինձմով, քեզմով, մեզմով, ձեզմով, մեզմէ, ձեզմէ, իրմէ, իրմով, իրենցմէ, իրենցմով:

Գրաբարից փոխառութեամբ արականի տեղ իբրև կրող առարկայ գործ են ածւում զիս, զիեզ, զմեզ, զձեզ, զիմն, այլ եւ զո՛վ, փոխանակ ինձ, քեզ, մեզ, ձեզ, իրեն, ո՛ւմ ձեւերի:

334. Յուցական դերանուններ.

| | | |
|---------------|--------------|----------------|
| | <i>Նզակի</i> | <i>Յոզնակի</i> |
| Ուղ. նա | նրանք | |
| Տր. նրա, նրան | նրանց | |
| Բաց. նրանից | նրանցից | |
| Գործ. նրանով | նրանցով | |
| Ներք. նրանում | նրանցում | |

335. Այսպէս հոլովում են և սա, սրա, սրան, սրանից ևլն. դա, դրա, դրան, դրանից ևլն:

Սա, դա, նա յուցականներն ունին նաև ա տառով ձևեր՝ սորա, դորա, նորա, սորանից, դորանից ևլն. սորանք, դորանք, նորանք ևլն, որոնք հնացած են բացի սեռականից՝ սորա, դորա, նորա, Այս գերանունների յոզնակին հոլովում են նաև սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա, սոցանից, դոցանից, նոցանից, սոցանով, դոցանով, նոցանով, որոնք այժմ պակաս գործածական են:

336. Այս, այդ, այն յուցականներն արևելեան աշխարհաբարում չեն հոլովում. հարկաւոր դէպքում գործ են ածւում համապատասխան սա, դա, նա յուցականների հոլովները:

Արևմտեան աշխարհաբարում և բարբառներում սակայն այս յուցականներն ևս հոլովում են այսպէս.

| | | |
|------------------|------------------|----------------|
| | <i>Նզակի</i> | <i>Յոզնակի</i> |
| Ուղ. այդ էդ | ադոնք էդոնք | ըդոնք |
| Տր. ադոր էդոր | ադոնց էդոնց | ըդոնց |
| Բաց. ադկից էդուց | ադոնցմէ էդոնցից | ըդոնցից |
| Գործ. ադով էդով | ադոնցմով էդոնցով | ըդոնցով |
| Ներք. — էդում | — էդոնցում | ըդոնցում |

337. Ո՞վ հարցականը հղումում է՝ տրակ. ո՞ւմ, բաց. ումնից, գործ. ումնով, ներք. ումնում. յոգն. ուղ. ո՞վքեր. (գրաբար ձևով՝ ո՞յք). միև հղումները չունի: Ներքոյականն և յոգն. ուղղականն ևս քիչ գործածական են:

338. Ո՞ւր հարցականը միայն բացառական հղում ունի՝ ուստի, ուսկից, որ քիչ գործածական է: Մնացած հղումների համար գործ է ածուում լ՛րտեղ, որ ի հղուման տակ է գնում:

339. Դերանունների տրական հղումի համար պիտի նկատի ունենալ, որ առաջին ձևը՝ իմ, քո (ժողովրդ. քու), մեր, ձեր, իր կամ իւր (ժողովրդ. իրա) սրա, դրա, նրա (այլ և գրաբար՝ ո՞յր, փոխ. ո՞ւմ) գործ են ածուում իբրև սեռական, այսինքն իբրև անուան խնդիր, ինչպէս՝ իմ գիտքը, քո գիտքը, իւր գիտքը, մեր գիտքը, ձեր գիտքը, նրա գիտքը, սրա գիտքը, դրա գիտքը: Իսկ միև ձևերը՝ ինձ, քեզ ևլն. լինում են խնդիր բայի կամ ածականի. ինչպէս՝ ինձ մօտեցաւ. քեզ հասաւ. նրան ծանօթ է:

Արևելեան աշխարհաբարում կրող առարկան (§ 298. 3) երբ անձի անուն է և յօդ ունի, ուղղական հղումի տեղ գրուում է սովորաբար տրական հղումով. ինչպէս՝ ես տանը մարդ չեմ տեսել. բայց ես տանն այն մարդուն չեմ տեսել, այլ Տիգրանին եմ տեսել: Նոյն ձևով և դերանուններն երբ կրող առարկայ են, գրուում են տրական՝ ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ, իրենց, սրան, դրան, նրան, սրանց, միմեանց, իրարու (իրար), ում, այլ և որին, որոնց (երբ որ գրուում է անձի անուան տեղ. տես §324. 2). օրինակ՝ Դու ո՞ւմ տեսար: Քեզ տեսայ: Այն աշակերտը, որին դու տեսել ես...

Այս, այդ, այն ցուցականները գործ են ածուում իրի և վերացական անուան տեղ, ուստի և երբ կրող առարկայ են, գրուում են միշտ ուղղական հղումով, ինչպէս՝ ես այդ չգիտեմ: ես այն չեմ տեսել:

Սխալ է իրի և վերացական անուան համար իբրև կրող առարկայ գործածել տրական՝ սրան, դրան, նրան ևլն. և ասել օրինակ գրքի համար՝ ես նրան չեմ կարդացել, փոխանակ ասելու՝ ես այն (այս, այդ, սա, դա) չեմ կարդացել:

340. Չպէսք է չփոթել երրորդ դէմքի անձնական ևս, ինքն դերանուան հղումները ցուցական ևս դերանուան հղումների հետ: Անձնականի հղումները գործ են ածուում ենթակայի անուան տեղ, իսկ ցուցականինը՝ մի անուան տեղ, որ ենթակայ չէ. ուստի ինչպէս ասուում է՝ ես տեսայ իմ եղբոր. դու տեսար ես եղբոր, նոյնպէս՝ ևս տեսաւ իւր (իր, իրա) եղբոր. քանք տեսան իրենց եղբոր. բայց՝ ևս տեսաւ քա (մի ուրիշի) եղբոր: Տիգրանը տեսաւ իւր որդուն և իւր կնոջը (որդին ու կինը Տիգրանին են): Տիգրանը տեսաւ քա որդուն և քա կնոջը (որդին ու կինն ուրիշին են): Տիգրանը տեսաւ իւր որդուն և քա կնոջը (որդին Տիգրանին է, իսկ կինը՝ որդունը կամ մի ուրիշինը):

Ցուցական ևս դերանուան հղումներն երբեք չեն կարող գործածուել անձնականի տեղ, այսինքն գրուել ենթակայի անուան տեղ. իսկ անձնական ևս, ինքն դերանուան հղումները միշտ կարող են ցուցականի տեղ գրուել, այսինքն մի անուան տեղ, որ ենթակայ չէ. բայց միայն երբ խօսքի մէջ չփոթուածին առաջ չի գալ և որոշ կը հասկացուի, թէ դերանունը որ անուան տեղ է գրուած. օրինակ՝ ես տեսայ Տիգրան և իւր եղբոր:

341. Ինքն, ինքն, ինքն անձնական դերանունները դէմքի հետ չեղտում են ինքնուծեան, այսինքն ոչ ուրիշ լինելու գաղափար: Դրանք յաճախ իբրև զօրացման դերանուններ գրուում են միև դերանունների կամ անունների հետ. ինչպէս՝ ես ինքս գնացի, դու ինքզ գնացիր. նա ինքը գնաց (այսինքն անձամբ և ոչ ուրիշը): Բնութիւնն ինքը կը բժշկի. կամ ինքը բնութիւնը կը բժշկի:

Ինքս, ինքդ չունին թեք հոլովներ, որոնց իմաստով գործ են ածուում հենց, իսկ բառերը. ինչպէս՝ հենց քեզինց եմ լսել այդ բանը: Իսկ ինքն՝ գործ է ածուում և թեք հոլովներով. ինչպէս նրա մօր՝ իր բերնի խօսքն է, որ ... նրա մօրն՝ իրեն ասացի:

Մտուգաբանական վերլուծութիւն.

342. Մտուգաբանութիւն ասուում է բառերի ծագման ու կազմութեան բացատրութիւնը:

Ստուգաբանական վերլուծութեամբ ուրեմն որոշուում են բառերի ծագումն ու կազմութիւնը, այսինքն բառերի արմատն ու հիմքը, բաղադրիչ մասերն ու ձևերը և տեսակներն ըստ կազմութեան (§§ 177—217, 221, 289): Օրինակ՝

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից.

Սերտ բարեկամք անջատած են ինձանից:

Հեռացել վաղակատ. դերբ. հեռանալ ստկածանց բայի. հիմքը հեռ., որից՝ հեռանալ, հեռացնել, հեռացուել, հեռու, հեռի, հեռաւոր, հեռաստան:

եմ Սահմ. յաւելաւոր ներկ. եզ. 1-ին դ. լինել ստկածանց բայի. հիմքը՝ է, որից՝ էակ, էական, էութիւն, էանալ:

իմ Եզ. տրական հ. ես պարզ բառի, որից եսական. իմ ձևից՝ իմոնք:

մայրենի Ածանցական մայր պարզ բառից, որից՝ մայրական. մայրենի, մայրիկ, մայրութիւն կէն: Մօր ձևից՝ մօրական, մօրու.

աշխարհից Եզ. բացառ. հ. աշխարհ պարզ բառի, որից՝ աշխարհական, աշխարհային, աշխարհիկ կէն:

Սերտ Պարզ բառ, որից՝ սերտել, սերտանալ, սերտացնել, սերտարան, սերտութիւն կէն:

բարեկամք Յոգն. ուղղ. հ. (գրաբարի ձևով, վիոխանակ բարեկամներ) բարեկամ բարդ բառի, կազմուած բարի, կամ(ք) բառերից. որից՝ բարեկամութիւն, բարեկամական, բարեկամուհի, բարեկամանալ, բարեկամացնել, բարեկամացում կէն:

անջատած Յարակատ. դերբ. անջատել պարզ բայի. հիմքը՝ անջատ, որից՝ անջատել, անջատուել, անջատում, անջատութիւն, անջատական:

են Սահմ. յաւելաւոր ներկ. յօգն. Յ-րդ դէմք լինել բայի Տես վերնում եմ:

ինձանից Եզ. բացառ. հ. ես բառի: Տես վերնում իմ:

Քերականական վերլուծութիւն.

343. Քերականական վերլուծութիւն ասելով հասկացուում է ասացուածների և խօսքերի վերլուծութիւնը, որով որոշուում են՝

1. Ասացուածի մասերը, այսինքն թէ քանի խօսքից է կազմուած ասացուածը, և թէ խօսքերն ինչպիսի կապակցութիւն ու յարաբերութիւն ունին իրար հետ (§§ 7, 91, 109, 131, 149, 157—160, 163, 164, 166, 167):

2. Խօսքի մասերը, այսինքն բառերի տեսակներն ըստ իմաստի, պաշտօնը և ձևերը (§§ 77—176, 218—341):

Վերլուծութեան օրինակներ.

Ա. Անշնորհք մարդու լեզուն երկայն կը լինի Մի ասացուած, կազմուած մի խօսքից:

Անշնորհք Մականուն որակական, խնդիր մարդու բառի մարդու Անուն հասարակ, եզ. սեռական, խնդ. լեզուն բառի լեզուն Անուն հաս. եզ. ուղղ. ենթակայ կը լինի բայի՝ ն որոշող յօդ.

երկայն Մականուն որակ. ստորոգեալ կը լինի բայի: կը լինի Բայ անանցողական, ենթադր. ներկ. եզ. Յ-րդ դէմք:

Բ. Ամեն մարդ կրակն իր բաղարջի տակ կը քաշէ: Մի ասացուած, կազմուած մի խօսքից:

Ամեն Մականուն անորոշ, խնդ. մարդ բառի: մարդ Անուն հաս. եզ. ուղղ. ենթակայ կը քաշէ բայի: կրակն Անուն հաս. եզ. ուղղ. կրող առարկայ կը քաշէ բայի՝ ն որոշ. յօդ:

իր Գերանուն անձն. եզ. սեռակ. խնդ. բաղարջի բառի: բաղարջի Անուն հաս. եզ. սեռակ. խնդ. տակ բառի: տակ Անուն հաս. եզ. ուղղ. գործածուած իբրև կապական բառ. բաղարջի տակ խնդիր կը քաշէ բայի: կը քաշէ Բայ անցող. ենթադր. ներկ. եզ. Յ-րդ դէմք:

Գ. Սատկեց այն արլորը, որ քեզ համար ոսկէ ձու էր ածում:
Մի ասացուած, կազմուած երկու խօսքից: 1-ին խօսք. Սատկեց
 այն արլորը. գլխաւոր խօսք: 2-րդ խօսք. Որ քեզ համար ոսկէ
 ձու էր ածում. երկրորդական խօսք, գլխաւորի հետ կապուած
 որ յարաբերական դերանունով. յարաբերիալ՝ արլորը:
 Սատկեց Բայ անանցող. Սահմ. անց. կատ. եղ. 3-րդ դէմք:
 այն Մականունն ցուցական, ինդ. արլորը բառի:
 արլորը Անուն հաս. եղ. ուղղ. ենթակայ սատկեց բայի: Ը ո-
 րոշող յօդ:
 որ Դերանունն յարաբեր. եղ. ուղղ. ենթակայ ածում էր
 բայի:
 քեզ Դերանունն անձն. 2-րդ դ. եղ. ար. խնդ. համար բառի:
 համար Կապ. քեզ համար խնդիր ածում էր բայի:
 ոսկէ Մականունն որակ. խնդիր ձու բառի:
 ձու Անուն հաս. եղ. ուղղ. կրող առարկայ ածում էր բայի:
 էր ածում Բայ անցող. Սահմ. անկ. ներկ. եղ. 3-րդ դէմք:

Դ. Ով տունն չէ շինել, այնպէս գիտէ, թէ սինը մէջն է բուսել:
Մի ասացուած, կազմ. երեք խօսքից: 1-ին խօսք. Ով տունն չէ
 շինել. երկրորդական խօսք, գլխաւորի հետ կապուած ով յա-
 րաբերական անունով: 2-րդ խօսք. Այնպէս գիտէ. գլխաւոր
 խօսք: 3-րդ խօսք. Թէ սինը մէջն է բուսել. երկրորդ. խօսք,
 գլխաւորի հետ կապուած թէ ստորադասական շաղկապով:
 Ով Անուն յարաբեր. եղ. ուղղ. ենթակայ չէ շինել բայի:
 տունն Անուն հաս. եղ. ուղղ. կրող առարկայ չէ շինել բայի:
 չէ շինել Բայ անցող. Սահմ. վաղ. ներկ. եղ. 3-րդ դէմք. բա-
 ցասական:
 այնպէս Մակբայ ցուցական—որակական, խնդ. գիտէ բայի:
 գիտէ Բայ անցող. Սահմ. յաւելաւոր ներկ. եղ. 3-րդ դ.
 թէ Շաղկապ ստորադասական:
 սինը Անուն հաս. եղ. ուղղ. ենթակայ բուսել է բայի: Ը ո-
 րոշող յօդ:
 մէջն Անուն հաս. եղ. ուղղ. խնդ. բուսել է բայի: Ն որոշ. յօդ:
 է բուսել Բայ անանցող. Սահմ. վաղ. ներկ. եղ. 3-րդ դէմք:

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ

(Թուանշանները ցոյց են տալիս երեսները)

Ածական 56
 Ածանցում 30. 33
 Անանցողական բայեր 133 —
 Անդէմ բայեր 100
 Անենթակայ խօսք 45
 Անկանոն բայեր 121
 Անկատ. դերբ. 101. 114. 127
 — ներկ. եւ անց. 115
 Անձնական դերանուն 53
 Անորոշ անուն 50. 52. 55.
 — 60. 64
 — դերբայ 49. 91. 114.
 — 131. 143
 — մականուն 59. 64.
 Անուն 49. 64. 66. 71. 133
 Անշատման դիծ 14
 Անցեալ ժամանակ 99
 — դերբայ 102. 111
 — կատարեալ 103. 108
 Անցողական բայեր 133
 Անփոփոխ բառեր 96
 Ապաթարց 13. 414. 130
 Ապառնի ժամանակ 99
 — ներկայ եւ անցեալ 115
 — դերբ. 101. 114. 127
 Առարկայական խնդիր 66
 Աբմունք 39
 Առդանութեան նշաններ 10
 Ասացուած 3. 44. 51. 54. 61
 Աստիճան 67
 Արգելական 130
 Արմատ 79
 Բազմակէտ 13

Բազմակի մասեր 73
 — ենթակայ 73. 137
 Բազմապատկ. բայեր 36. 93
 Բազադրեալ բառեր 79
 — ասացուած 44. 51. 54.
 — 61. 71
 — ձեւեր 102. 113. 127
 Բազադրիչ մասեր 4
 — դերբայներ 114. 127
 Բազադրութեան բուն 104
 Բազաճայն 16
 Բազաւատական աստիճան 68
 Բայ 41. 91. 138
 Բայածական 59. 100
 Բայանուն 49. 100
 Բայեմաստ 41
 Բառ 15. 39
 Բառագիտութիւն 39
 Բառակազմութիւն 79
 Բարբառ 1
 Բարդ բառեր 30
 Բարդութիւն 34
 Բացաբանչ. ձայնարկութ. 76
 — նշան 11. 77
 Բացայայտիչ 64. 156
 Բացայայտութեան նշաններ 11
 Բացառական Հոլով 139
 Բացասական մակբայ 65
 — ձեւեր բայի 129
 Բոլորագիր 7
 Բութ 9. 12. 73. 74. 156
 Բուն 103
 Բնի ձեւեր 105. 108

Գերադաս խօսք 71
 Գերադրական աստիճան 68
 Գլխադիր 7
 Գլխաւոր խօսք 51. 54. 61. 71
 — բաղադր. ժամանակն. 114
 Գոյական 48
 Գործիական Հոլով 139
 Գասական մականուն 57
 Գերանուն 52
 Գերբայ 100. 111
 Գէմք 42. 53
 Գիմաւոր բայեր 100
 Գիմորոշ յօդեր 62
 Գրական աստիճան 68
 Եզակի 43. 134
 Եղանակ 97
 Եղանակական մակբայ 65
 Եղանակիչ 113
 Ենթադր. եղ. 97. 113. 131
 Ենթակայ 45. 136
 Ենթակայական դերբայ 102.
 112. 114
 Ենթամնայ 15
 Երկար 11. 77
 Երկբայական մակբայ 65
 Երկբարբաւ 17
 Երկրորդական խօսքեր 51. 54.
 61. 71. 73—75
 — բաղադր. ժամանակներ
 114. 127
 Եւ նշանագիր 7. 28
 Չեղչում 9. 64. 74. 141
 Չօդ 69
 Չօրացման դերանուն 161
 Ըղձական եղ. 98. 103
 Քանձրացական առարկայ 48
 Քարմատար որ 51. 61
 Քեք Հոլովներ 136. 138
 Քեքում 96
 Քիւ 43. 134
 Քուական անուն 57

Ժամանակ 99
 Ժամանակական մակբայ 65
 Ժամանակի անուն 51. 148
 Լծորդ 91—107. 130
 Լծորդութիւն 92
 Լրացում 45
 Խնդիր 46. 65. 71. 114
 — անուն 57. 138
 — կապով 69
 — Հոլովներով 136
 Խնդրառու բառեր 47. 136
 — խօսքեր 71
 Խոնարհում 96
 Խօսք 3. 41
 Խօսքի մասեր 46
 Կախման կէտեր 14
 Կանոն. խոնարհում 108. 116
 Կասկ 69
 Կապական բառ. 70. 136. 139
 Կատարելի, կատարուած եւ կատարուող կերպեր 128
 Կետադրութիւն 9. 73
 Կը եղանակիչ 113
 Կիսաձայն 17. 33
 Կողմնակի խնդիր 46. 47
 — ենթակ. խնդ. 137
 Կոչական անուն 77. 136
 — ձայնարկութիւն 76
 Կրաւորական բայեր 95
 Կրող առարկայ 138. 153. 160
 Համադասական խօսքեր 75
 — շաղկապ 72
 — կապակցութիւն 69
 Համաձայն. ենթ. եւ բայի 137
 — բացայայտչի 156
 Համանիշ բառեր 40
 Համանուն բառեր 40
 Հասարակ անուն 49
 Հաստատական մակբայ 65
 Հարկադր. եղան. 97. 113. 131
 Հարցական անուն 50. 55

Հարցական մականուն 60
 — նշան 11
 Հաւաքական բառեր 137
 Հեղել 15. 28
 Հիմք բայի 91. 104
 Հնչաբանութիւն 6
 Հնչափոխութիւն 18—38
 Հնչիւն 6
 Հոլով 135—140
 Հոլովում 96. 134
 Հրամայական եղ. 99. 110
 Զայնակապ յ 33
 Զայնարկութիւն 76
 Զայնաւոր 16
 Զայնափոխութիւն 80. 140
 Զեւաբանութիւն 96
 Զեւեր 96. 134
 Մակածական 56. 67
 Մականուն 56. 64
 Մակբայ 56. 65
 Միութեան դիժ 14
 Միջածանց 91
 Միջակէտ 9. 12. 75
 Միջարկութիւն 76
 Յատուկ անուն 8. 49
 Յարաբերական անուն 51. 55
 — դերանուն 54
 — մականուն 61
 — խօսք 51. 54. 61
 ✓ Յարաբերակալ 54
 ✓ Յարադր. բառեր 86⁴ 133⁷ 155⁷
 Յարակատար դերբայ 102. 111
 — ներկայ եւ անցեալ 115
 Յաւելաւոր բայեր 126
 Յետադրութիւն 70
 Յոգնակի 43. 134
 Յօդակապ 32
 Յօդեր 62. 141. 156
 Նախադասութիւն 3
 Նախադրութիւն, նախդիր 70.
 Նախածանց 38
 Ներգործական բայ 138

Ներկայ ժամանակ 99. 115
 — դերբայ 102
 Ներքոյական Հոլով 139
 Նմանաձայնութիւն 77
 Նշանագիր 6
 Նոյնանիշ բառեր 40
 Նոտրագիր 7
 Շաղկապ 71
 Շաղկապական բառեր 51. 54.
 55. 61. 72
 Շարադրութիւն 5
 Շեշտ 10. 66. 99. 130
 Շղագիր 7
 Ուրակ 11
 Ոճ 5
 Որակակ. մականուն 57. 59. 64
 — մակբայ 65
 Որոշող յօդ 63. 141. 157
 Ուղիղ խնդիր 138
 Ուղղադրութիւն 18—38
 — յատուկ անուն 8. 33
 — անձայն յ-ի 32. 131
 — Հրամայականի 33. 99
 — ձայնարկութ. 25. 33. 77
 Ուղղափոստութիւն 2
 Ուղղական Հոլով 136
 Ուղղակի (ուրիշի) խօսք 8. 12. 13
 Զակերտ 12
 Զեղոք բայ 138
 Զը, չ բացասական 130
 Պակասաւոր բայեր 125
 Պատճառական բայեր 93
 Պարագայ 65. 67
 Պարագայակ. խնդ. 65—67. 138
 Պարզ բայեր 92
 — ասացուած 44. 51. 54.
 61. 71
 — բառեր 79
 — ձեւեր բայի 102
 Սահմանական եղ. 97. 108
 Սաստական մակածական 68



Սեռական 138. 141. 160
 Սղոմ 13. 81. 85
 Սոսկածանց բայեր 92
 Ստացական յօդ 62
 — անուններ 152
 Ստորադաս խօսք 71
 Ստորադասական շաղկապ 71
 — կապակցութիւն 69
 Ստորակէտ 9. 12 13. 73—75.
 77. 156
 Ստորոգեալ 137
 Ստուգաբանութիւն 162
 Վաղակատ. դերբայ 102. 111
 — ներկայ եւ անցեալ 115
 Վանկ 15. 81
 Վերացական առարկայ 48
 Վերլուծութիւն խօսքի 47
 — ասացուածի 44
 — ստուգաբանական 162
 — քերականական 163
 Վերջակէտ 9
 Վերջածանց 88
 Վերջաւորութիւն բայի 91. 105
 — հսկովական 136

Տառ 6
 Տեղական մակբայ 65
 Տեղի անուն 51. 66
 Տողադուլիս 3. 14
 Տողադարձ 15. 27.
 Տրական հոլով 138
 Տրոհութեան նշան 9

Յուցական դերանուն 53
 — մականուն 58
 — յօդեր 62

Փակագրիծ 12
 Փոխադարձ դերանուն 54
 Փոխանուն սեռական 141. 152
 Փոխանցում գոյականի եւ քա-
 ճականի մէջ 64. 66
 Փոփոխական բառեր 96
 Փոքրատառ 6

Քանակական մականուն 57
 — մակբայ 65
 Քերականութիւն 2. 4.
 Օժանդակ բայեր 114

Հեղինակից գումարով (առնուազն 20 օրինակ)
գնողներին համար 60 կոպեկ:

| Նոյն հեղինակի չսպառուած աշխատութիւնները | ա. | կ. |
|---|----|----|
| 1. Հայոց ժողովրդական Հաւատքը (գերմաներէն լեզ.) | 1— | 20 |
| 2. Հայ ժողովրդ. Առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ | 1— | 50 |
| 3. Ժողովրդական խաղեր (երգեր) | — | 50 |
| 4. Հազար ու մի խաղ. ժողովրդ. երգարան, Կոմիտաս վ.ի հետ, Ա. յիսնեակ | — | 15 |
| 5. Նոյնը. Բ. յիսնեակ | — | 20 |

Պատրաստ են տպագրութեան համար՝

1. Աշխարհաբարի շարահիւսութիւնը (շարադրութեամբ հանդերձ):
2. Գրաբարի քերականութեան դասագիրք:

Հեղինակի հասցէն՝ Эчмядзинь, Академія
Мануку Абегианъ.

« Ազգային գրադարան



NL0247301

5401